Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1887
9 — 22

243
9-39

243
Գ-39

ԱՂՕԹՔ

ՋԵՐՄԵՌԱՆԴՆ ՀՈԳԻՈՑ

ԱՌ ԱՄԵՆԱՍՈՒՐԲ

ՍԻՐՏ ՅԻՍՈՒՍԻ

Տէր Հ. Տրդատ Վ. Գուգիան

1052

ՎԵՆԵՏԻԿ

Ի ՎԱՆՍ Ս. ՂԱԶԱՐՈՒ

1887

ՁՐԻ ԲԱՇԽԻ

36030-62

Printed in Turkey

Ի ՅԻՇԱՏԱԿ ՅՈՒԲԵԼԻՆԻ

ՅԻՍՆԱՄԵԱՑ ՔԱՀԱՆԱՅՈՒԹԵԱՆ

ԼԵՒՈՆԻ ԺԳ.

ՍՐԲԱԶԱՆ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԻ

ՎԱՑԵԼՈՂՔ ՍՈՐԱ

ԱՂՕԹԵՑԷՔ

ՎԱՍՆ ԿԵՆԱՑ ՆՈՐԻՆ

ԵՒ ՊԱՅԾԱՌՈՒԹԵԱՆ

ՍՐԲՈՑ ԵԿԵՂԵՑԻՈՑ

~~43444-ակ.~~

97-42 36030-62

ԱԶԴ

Բաղումք 'ի սրբոյ եռանդագին ըղձիւք 'ի սէր վառեալ Յիսուսի ամենասուրբ Սրտին, յերկրէ յերկինս առաքեցին իրենց սրտեռանդն աղօթքները. քաղելով փունջ մի 'ի նոցանէ, նուիրեմք խոնարհաբար առ նոյն Սիրտն մարդասէր, խնդրելով որ նա ինքն օրհնէ զմեզ իւր երկնառատ օրհնութեամբ, և զմեր աղգն ալ միւս աղգաց հետ իւր անգին շնորհաց դանձուց մասնակցէ։

Հ. Պ. Գ.

Printed in Turkey

ՊԱՐՏՔ ՔՐԻՍՏՈՆԷԻ

Ի ԶԱՐԹՆՈՒԼՆ ՅԱՌԱՒՕՏՈՒ

Պէտք է որ ամէն օր նորոգենք մեր բարի առաջադրութիւնքն, և զմեզ յեռանդն վառենք, և իբր թէ նոյն օրն ըլլար մեր դարձին առաջին օրը՝ ըսելով. Ո՛վ Տէր իմ Աստուած, օգնէ ինծի իմ բարի առաջադրութեանցս և քու սուրբ ծառայութեանդ մէջ. և շնորհէ ինծի որ այսօրս սկսիմ կատարելապէս, վասն զի մինչև ցարդ գործածս չէ ինչ։

Բայց որպէս զի կարենանք ամէն բան աղէկ կատարել, պէտք է օրերնիս քրիստոնէաբար սկսինք. վասն զի ամենատոյդ է որ քրիստոնեայ մը երբ հաղիւ թէ քունէն կ'արթննայ՝ առաջին պարտքն է իւր միտքն առ Աստուած բար-

ձրայնել, ճանչնալ իւր Տէրը, և եռան-
դուն կերպով սիրոյ և նուիրական-
ներդործութիւնք ընել։

Ուստի քու առաջին մտածութիւնդ,
ոմ ընթերցողդ իմ, պէտք է որ Աստուած
ըլլայ, որ իւր այնքան բարութեամբն
պահեց զքեզ գիշերս. մանաւանդ թէ
օրդ աղէկ կերպով սկսելով և զայն Ա-
ստուծոյ նուիրելովդ, զայն մեծաւ մա-
սամբ սրբացուցած կ'ըլլաս։ Այս պատ-
ճառաւ երբ առաւօտեան հաղիւ թէ ար-
թընաս՝ իսկոյն մտածութիւնդ և խոր-
հուրդդ առ Աստուած բարձրացուր, և
ըսէ. Աստուած իմ, Աստուած իմ, ա-
հաւասիկ օրուանս հետ միասին դիս ալ
քեզ կը նուիրեմ. Տէր իմ, հոգիս յօժար
է ելլալու, բայց մարմինս տկար։ Ո՜հ,
դու ինքն Տէր օգնէ ինծի՝ որ իմ զօրա-
վիգ ես։ Յիսուս Մարիամ և հայր Յով-
սէփ օգնեցէք ինծի։

Զայս ըսելով՝ կնքէ նշանաւ սրբոյ խա-
չին ճակատդ, շուտ մը ելիր անկողնէդ
և սկսէ հագուիլ պարկեշտօրէն, յիշե-
լով միշտ որ Աստուծոյ ներկայութեան
առջևն ես։ Կրկնէ երբեմն երբեմն սա-
ղմական աղօթքներ, ինչպէս. Ամենա-
քաղցր Յիսուսդ իմ, կը պաշտեմ և կը
սիրեմ զքեզ 'ի բոլոր սրտէ. քեզ կը
յանձնեմ զհոգի և զմարմին իմ. պահէ
զիս 'ի մեղաց և տուր ինձ քու ամենա-
սուրբ շնորհդ, որպէս զի մի միայն քու
սուրբ սիրոյդ համար ապրիմ այսօր։

Երբ հագուիլդ լմննայ՝ ծունր խոնարհէ
քիչ մը միջոց. և ինչպէս ազնիւ զաւա-
կունք կ'ընեն իրենց մօր, այսպէս և դու
խնդրէ յանբիծ կուսէն Մարեմայ իւր
ամենասուրբ օրհնութիւնն՝ ըսելով. Ընդ
բարեպաշտ որդւոցդ քոց օրհնէ և զիս
Կոյս Մարիամ. և կամ. Մայր Յիսուսին
իմոյ և մայրդ իմ, յուսալով որ բոլորո-
վին քուկդ ըլլամ, քեզ կ'ընծայեմ այսօր
աչքս, բերանս, ականջներս, սիրտս և
զիս բովանդակ. կ'ուզեմ այսօր բոլորո-
վին քուկդ ըլլալ. պաշտպանէ զիս և
տուր ինձ քու ամենասուրբ օրհնութիւնդ։
Եւ ապա, զնա գործ ուր սովորութիւն

ըրէք ես աղօթելու. և ամենայն խոնարհութեամբ և քաղցր վստահութեամբ՝ ինչպէս կը վայելէ իւր Արարչին հետ խօսող արարածոյ մը, ամենայն ուշադրութեամբ և ամփոփութեամբ ծունր խոնարհած՝ երեք անգամ համբուրէ զերկիր ըսելով. Յիշեա՛ ով անձն իմ զի հող ես և՝ ի հող դարձցես։

Սկսէ ապա ծանր ու խոկալով առաւօտեան աղօթքդ ըսել՝ որ հոս կը տեսնես։ Աղէկ միտդ դիր, սիրեցեալդ իմ ընթերցող, այս երկու ճշմարտութիւնքս. Ո՛վ որ կ'աղօթէ՝ ապահովապէս կը փրկուի. ո՛վ որ չաղօթէ՝ անտարակոյս կը դատապարտուի։

ՀԱՌԱՋԱՆՔ ԱՌ ՅԻՍՈՒՍ

Ի ԶԱՐԹՆՈՒԼՆ ՅԱՌԱՒՕՏՈՒ

Ամենասիրելի՛ իմ Յիսուս, սրբատէս բոլորած այս օրուան առաջին հառաչանքս առ քեզ կ'ուղղեմ. առ քեզ կը պաղատիմ որ արժանի համարիս քու փառացդ համար ընդունելի՛ իմ այս օրուան ամէն գործերս, և քու ամենաքաղցր սրտիդ մէջ զանոնք ուղղելով և սրբելով՝ միացընես քու անթիւ արդեանցդ հետ, և զամէնքն 'ի միասին 'ի յաւիտենական գովութիւն քու երկնաւոր Հօրդ մատուցանես։

Ո՛վ քաղցրիկ սիրտ իմ Յիսուսին,
Ո՛հ, թէ չէր քեզ իմ բնաւ խոցեալ.
Քեզ տամ զիմ սիրտս զըղջացեալ,
Որ միշտ և ա՜սիրէն ըզքեզ։

Ո՛վ սուրբ Սիրտ Յիսուսիդ ի-
մոյ, կը պաշտեմ զքեզ ամենայն
կարողութեամբք հոգւոյս. քեզ
կը նուիրեմ միշտ զանոնք՝ խորհրդ-
դոցս, բանից և գործոց և բոլոր
իմ էութեանս հետ մեկտեղ: Ո՛վ
երկնային Սիրտ, կը ցանկամ մա-
տուցանել քեզ այն ամէն ներդոր-
ծութիւնքն սիրոյ և փառաց՝ որ
դու ինքն քու յաւիտենական Հօրդ
կը մատուցանես: Բաբէ, դու ե-
ղիր քաւիչ իմ անթիւ մեղանացս,
պաշտպան կենացս, հովանի և ա-
պաւէն 'ի ժամու մահուանս: Իմ
սիրոյս համար բոլոր կենացդ մէջ
կրած վշտաց և դառնութեանցդ
տեղ, շնորհէ ինծի կատարեալ զղջ-
ջումն գործած մեղքերուս համար
մինչև ցյետին շունչ կենաց իմոց.
վերջնական յարատևութիւն քու
շնորհացդ մէջ. արհամարհութիւն
ամենայն տեսանելի իրաց, եռան-
գուն փափագ յաւիտենական փա-
ռաց՝ լի վստահութեամբ ժամա-

նելու այնմ՝ քու անթիւ ար-
դեանցդ զօրութեամբ:

Ո՛վ ամենասիրելի Սիրտ Յիսու-
սի, այս խոնարհ և եռանդուն խնդ-
դրուածքս ոչ իմ անձիս համար
միայն քեզ կը մատուցանեմ, այլ
և անոնց՝ որք ինծի հետ միացած
են զքեզ յարգելու և մեծարելու.
ընդունէ զանոնք, ըստ անոնց քու
անհուն գթութեամբդ. և մանա-
ւանդ ողորմէ այն անձին՝ որ մե-
ջերնէս ամենէն առաջ յաւիտենա-
կանութեան պիտի հասնի:

Ամենաքաղցր Սիրտ Յիսուսի,
պարգևէ այն երանելի հոգւոյն
մահուան յետին դառնութեանց
միջոց՝ քու անհուն շնորհացդ ան-
բաւ զօրութիւնը. ընդգրկէ զայն
քու բացուած խոցուածոյդ մէջ,
որպէս զի այն սիրոյ հնոցին մէջ
մեղաց ամենայն աղտեղութենէն
սրբուելով թռչի յերկինս և բա-
րեխօսէ առ քեզ՝ մեզ մնացելոցս
համար:

Այս յարգանքս և աղօթքս կը ցանկամ կրկնել առ քեզ, օվ ամենագթած Սիրա, վասն իմ և բոլոր Ջերմեռանդն հոգւոց համար ամէն 'ի տուրևառ շնչոյս՝ մինչև ցյետին օր մահուանս։

Քեզ կը յանձնեմ դարձեալ, ամենագթած Սիրա Յիսուսին իմոյ, զսուրբ Եկեղեցի՝ քու երջանիկ հարսդ և մեր սիրելի մայրը, զարդարս, զմեղաւորս, և մանաւանդ զհոգևարս և զամենայն մարդիկ. դու ինքն շնորհէ որ չի կորսուի ունայն տեղ այն ստուածային արեան անհուն գինը՝ որ հեղաւ 'ի խաչին 'ի փրկութիւն ամենեցուն. դու ինքն շնորհէ դարձեալ զհանգիստն յաւիտենական՝ հոգւոցքաւարանի, և մանաւանդ քեզ Ջերմեռանդն եղողաց։

Ամենասիրելի Սիրա Մարիամու, որ առաւել քան զայլոց սիրա կը նմանիս Արտին Յիսուսի, և քան զայն գթած ես 'ի մեղաւորս, առ

քեզ կը պաղատիմ, դու կատարէ իմ խնդրուածքս։

Ո՜հ, ամենասիրելի Մարիամ, ամենաքաղցր Սրտիդ մի միայն շարժմունք մը, հառաչանք մը առ սուրբ Սիրտն Յիսուսի՝ լիովին կը հեթարէ զմեզ. կը պաղատինք առ քեզ, մի մերժեր զմեզ. անհնար է որ նա ինքն կարենայ մերժել քու մայրենի խնդրուածքդ։

ԱՂՕԹՔ

ԱՍՈՒԱԾԵԱՆ

Ա.

Խաչակնքելով զքեզ ըսե

Աստուած իմ, գթա յիս և օրհնէ զիս. 'ի բարձանց լուսաւորէ իմ միտքս և գթա յիս 'ի մեղաւորս. օրհնէ իմ սիրտս, որպէս զի կարենայ իմանալ քու սուրբ ներկայութիւնդ։

Ամենասուրբ Երրորդութիւն Հայր և Որդի և Հոգի Սուրբ, իմ ունայնութեամբս կը պաչեմ ըզքեզ մի Աստուած. քու աստուա-

ծային ամենակարողութիւնդ զիս օրհնէ և իմ հաւատքս արծարծէ և կենդանացնէ. քու աստուածային իմաստութիւնդ զիս օրհնէ և իմ հաւատքս զօրացնէ. քու աստուածային բարութիւնդ զիս օրհնէ, և քու սիրոյդ համար ճշմարիտ սէր մը բորբոքէ սրտիս մէջ առ քեզ, Աստուածդ իմ, և առ ամենայն եղբարս իմ։

Բ.

Շնորհակալութիւն և նուիրումն սրտի

Ամենաքաղցր Սիրտ Յիսուսին իմոյ, կը պաշտեմ զքեզ, կը գովեմ և կ'ողջունեմ. ուսկից երբ 'ի մեղրաբուղխ աղբերէ ամենայն շնորհաց՝ բղխած է և կը բղխէ ամէն վայրկեան՝ ամենայն բարիք և ամենայն քաղցրութիւն։ Ես սրտիս ա-

մենայն եռանդեամբն քեզ գոհու-
թիւն կը մատուցանեմ որ զիս դի-
շերս ամբողջապաշտպանեցիր և Հօրն
ամենակալի իմ կողմանէս փառք և
շնորհակալութիւն մատուցիր։ Ո՛վ
արդ քաղցր սէրդ իմ, քեզ կը մա-
տուցանեմ այս իմ թշուառ և ա-
նարժան սիրտս՝ իբր առաւօտեան
զոհ մը. զայն քու ամենասուրբ կո-
ղերուդ վերայ մէջ կը ծածկեմ,
և քու ամենաքաղցր Սրտիդ կը
յանձնեմ։ Ա՛ռ քեզ կը պաղատիմ
որ միշտ հեղուս 'ի նա քու աս-
տուածային ներշնչութիւնդ, և
զայն բորբոքես և բոցակիզես քու
սուրբ սիրովդ։ Խնդրեմ կատարէ
իմ հայցուածքս, ո՛վ Յիսուսդ իմ։

Ը՛սէ հոս Հայր մեր և Ողջոյն մը
և Հաւատամք։

Գ.

Խնդրուածք

Ամենագթած Յիսուս, միանա-
լով այն սիրոյն որով խաչին վրայ
քու հոգիդ Հօրդ աւանդեցիր, ես
ալ իմ հոգիս և սիրտս քեզ կը
յանձնեմ, և կը փակեմ զանոնք
քու ամենաքաղցր Սրտիդ ամենա-
սուրբ վերայ մէջ։ Այս վերայ մէջ
պաշտպանէ զանոնք յամենայն դա-
րանակալութեանց թշնամւոյն։
Դու ինքնին գիտես Յիսուսդ իմ,
ինչպէս ես ալ իմ փորձովս՝ թէ
որքան տկար, դիւրաբեկ և անհաս-
տատ եմ։ Կը խնդրեմ ուրեմն քեզ-
մէ, այն ահաւոր խորհրդոյն հա-
մար որով քու Մարդկութիւնդ
պաշտելի Աստուածութեանդ հետ
միացաւ՝ զմեզ զթշուառքս բարձ-
րացնելու նպատակաւ. արժանացո
միացնել մեր Սրտերս քու քեզի

36030-4063
ՄՇՏ անվան Գրքասէր
Գրչ Библиотека
ՀՍՍՌ-ԱՍՍՀ ԳԱ

հետ, և զօրացո զայն քու շնորհօքդ՝ որպէս զի չհամարձակի քեզի դէմ զենելու։ Քու անմեղ անդամոցդ հետ միանալով՝ քեզ կը յանձնեմ մարմնոյս ամենայն անդամքն, որպէս զի այսօրուան ընթացքս մէջ քու սիրոյդ՝ փառացդ և գովութեանդ համար միայն շարժին. ամէն։

Դ

Ուղիղ դիտաւորութիւն

Ամենասիրելի Յիսուս, 'ի խորոց սրտիս քեզ կ'ուղղեմ այս օրուան իմ այս առաջին հառաչանքս։ Քեզ կը մատուցանեմ և կ'ընծայեմ իմ այս օրուան ամենայն գործերս. դու գործէ յիս քեզի համար, և քու փառացդ ուղղէ իմ դիտաւորութիւնքս, զգացմունքս, խօսքերս և գործերս։ Ուղղէ զանոնք

և սրբէ քու ամենաքաղցր Սրտիդ մէջ, և մասս զանոնք քու ամենակատարեալ գործոցդ հետ 'ի միասին՝ Հօր Աստուծոյ 'ի գովութիւն յաւիտենական քու սուրբ անուանդ. ամէն։

Առաջադրութիւն

Ամենաքաղցր Յիսուսդ իմ. խօսէ իմ սրտիս հետ. քու ծառադ քեզ կը լսէ. որ ախտը կ'ուզես որ արմատախիլ սրտէս 'ի բաց հանեմ... որ առաքինութիւնը կ'ուզես որ 'ի մասնաւորի այսօր կատարեմ.... Այնպէս պիտի ընեմ. ահաւասիկ սիրտս։

Ե

Աղաչելութիւն 'ի Սիրտն Յիսուսի

Ո՜վ ամենաքաղցր Յիսուսդ իմ, պահէ զիս ամենագթած Սրտիդ

ապահով սենեկին մէջ. հոն պաշտ-
պանէ սրտիս մաքրութիւնը, և հա-
ւատարիմ պահէ զիս իմ խոստ-
մանս մէջ որ երբեք զքեզ չեմ ու-
զեր վշտացնել։ Քու հովանաւորու-
թեանդ տակ ողջախոհ զայն պա-
հելով այնպէս ալ քեզ ներկայա-
նայ 'ի ժամու մահուանս։ Դրոշմէ
իմ սրտիս վրայ քու Սրտիդ կնի-
քը, որպէս զի արժանի ըլլամ ապ-
րելու ըստ սուրբ օրինացդ և աս-
տուածային կամացդ. և յետ այս
աքսորանացս արժանաւորիմ գալ
առ քեզ և վայելել զքեզ 'ի յա-
ւիտեան։

Ամենաքաղցր Յիսուս, գրէ 'ի
գպրութեանդ կենաց քու մեղա-
բուղխ անուանէդ վերջ իմ ա-
նունս ալ։ Ըսէ իմ հոգւոյս. ես եմ
փրկութիւն քո։ Մի թողուր զիս
ով Յիսուս իմ. պաշտպանէ զիս,
ապահովէ զիս։ Քու ամենայն բա-
րութեանց հոգիդ՝ տանի զիս այսօր
և ցկեանս իմ քու ամենասուրբ

պատուիրանացդ Ճամբէն՝ մինչև
ցաշխարհն ուղղութեան և յաւի-
տենական երջանկութեան. յաշ-
խարհն կենդանեաց՝ ուր վիճակի
և ինձ կեալ ցմիշտ քեզի հետ. ա-
մէն։

Առ ամենասուրբ Կոյսն

Փառաւորեալ Մայր Աստուծոյ
իմոյ, Թագուհի երկնից, փաստա-
բանդ իմ, կ'ողջունեմ զքեզ քու
ամենասիրելի Որդւոյդ՝ Յիսուսիս
ամենաքաղցր Սրտովը. և փոխա-
նակ իմ ամենացուրտ սիրոյս՝ կը
մատուցանեմ քեզ այն սէրն որ
այս Աստուածային Սիրտն ունի։
Կը խնդրեմ քեզմէ որ ինչպէս նա
մեր եղբայրն ըլլալով՝ զքեզ մեզի
Ճշմարիտ մայր ըրաւ, այսպէս և
հիմա իրեն սիրոյն համար արժա-
նաւորէ զիս ալ ընդունել և Ճանչ-
նալ իբրև քու որդիդ։ Չեմ ես ար-
ժանի, բայց քու սէրդ կ'ուզէ և

կը ճանչնայ զիս այնպէս։ Իբր սի-
րող Մայր մը՝ զիս քու խնամոյդ
և պաշտպանութեանդ տակն առ-
օգնէ ինծի ամենայն աշխատու-
թեանցս մէջ, յամենայն նեղու-
թիւնս. ցոյց ինձ միշտ սիրակաթ
մօր սիրտ մը, պաշտպանելով զիս
'ի կեանս յայս և ընդունելով 'ի
ժամու մահուանս. ամէն։

Առ պահապան Հրեշտակն

Կ'ողջունեմ զքեզ Յիսուսի Քրիս-
տոսի Որդւոյն Աստուծոյ ամենա-
քաղցր Սրտով, ով սուրբ Հրեշ-
տակդ իմ Պահապան հոգւոյս և
մարմնոյս։ Իւր սիրոյն համար որ
զիս 'ի մկրտութեան քեզ յանձ-
նեց, ժողովէ զիս իբրև հայր քու
ամենահաւատարիմ պաշտպանու-
թեանդ և ուղղութեանդ ներքև։
Զօրացո զիս քու օգնութեամբդ՝
որպէս զի անարատ ընթացիւք անց-
նիմ այս թշուառ կենացս պղտոր

հոսանքներէն. և զօրեղապէս ուղ-
ղէ զիս 'ի ճանապարհս փրկու-
թեան, որպէս զի քեզի հետ մէկ-
տեղ հասնիմ և տեսնամ Հօրն երկ-
նաւորի ամենաքաղցր դէմքը զոր
դու կը տեսնես, 'ի գովել 'ի յա-
ւիտեան քեզի և բոլոր երանեալ
Սրբոց հետ մէկտեղ այն պաշտելի
Աստուածութիւնը և Երրորդու-
թիւնը՝ որ կը գերազանցէ քան
զամենայն քաղցրութիւն։

Զ

Ի խնդրել զօրհնութիւն աստուա-ծային

Օրհնէ զիս Աստուած իմ Հայր,
Որդի և Հոգի Սուրբ։ Օրհնէ զիս
ով Տէր իմ Յիսուս Քրիստոս քու
մեղաբուղխ Սրտիդ ամենափա-
փուկ սիրոյն։ Շնորհէ ինձի որ
այսօր յօժար կամաք և բորբոքեալ

սիրով հետևիմ քու պատուիրա-
նացդ և ամենասուրբ կամացդ այն
ամէն իրաց և գործոց մէջ որ պի-
տի տնօրինես իմ և գործոցս վրայօք։
Տուր ինձի որ հնազանդ սրտիս,
բորբոքեալ հոգւով, պարզ մտօք,
ուրանալով զիս և իմ խտիրս, հե-
տևիմ հաւատարմութեամբ քու
աստուածային վարդապետու-
թեանցդ, ձայնիդ և սուրբ ներ-
շընչմանցդ։

Համբուրէ վերջապէս զսուրբ խաչն՝ ը-
սելով.

Աստուած սրտի իմոյ, քու հինգ
վիրացդ համար զորս ստացար, 'ի
վերայ խաչին սիրոյ, յիշէ միշտ քու
ծառայդ զորս փրկեցիր անդին
արեամբդ, մասնաւորապէս այս-
օրուանս ընթացքին մէջ։

ԱՂՕԹՔ

ԵՐԵԿՈՅԵԱՆ

Ցառաջ քան զերթալն յանկողին

Շնորհակալութիւն

Կ'օրհնեն զքեզ ով Աստուած
իմ, սիրտ իմ, հոգի իմ, իմ ամէն
զգայարանքս, ամենայն զօրու-
թիւնքս և ամենայն շունչ իմ։ Ա-
մենայն արարածք օրհնեն, գովեն
և գոհանան զքեզ՝ ով ամենաքաղցր
և ամենահաւատարիմ սիրող մարդ-
կային փրկութեան, այն անթիւ և
անհամար շնորհացդ համար զորս
այսօր ըրիր ինձի։ Բաւական չհա-
մարեցիր քու աստուածային գը-
թութեամբդ իմ այնքան ապերախ-
տութիւնքս, մեղքերս և թուլու-

թիւնքս կրել և մոռանալ, այլ մանաւանդ ամենառատ բարերարութեամբդ՝ ինծի պէս անարդ, ապերախտ և անօգուտ արարած մը այնքան շնորհօք պահեցիր և պահպանեցիր։

Հոս միտքդ բեր օրուան բնաց-քին մէջ բնդունուած յատուկ շնորհք-ներդ. 'ի մահացու մեղաց պահպանուիլդ. Պատարագ.... գուցէ և խորհուրդք.... ազատուրիւն 'ի վրտանգաց..... Ո՛վ ամենասիրելի Աստուած իմ և ամենաքաղցր փրկիչ իմ, գոհանամ քու գթութեանդ և ամենաքաղցր Սրտիդ. և քու ոտքդ ինկած կը զարհուրիմ և կը շփոթիմ տեսնելով քու այնքան գթութիւնդ փոխան այնքան իմ մեղացս սրտնցմով զքեզ վշտացուցի։

Խնդրուածք յուսոյ

Սակայն Յիսուս իմ, քու անպատմելի քաղցրութեանդ համար, յետ այնքան շնորհաց զորս ըրիր այսօր ինծի, կը խնդրեմ յաւել զայս՝ որ կարենամ ճշդիւ ճանչնալ թէ ինչ բանի մէջ մասնաւորապէս վշտացուցեր եմ քու անհուն աստուածութիւնդ այսօրուանս ընթացքին մէջ։ Այն ամենաբորբոք Սրտիդ մեկնած լոյսն ինծի տեսցընէ և ճանչցընէ թէ ոյք եղած են քեզի անհաճոյ խորհուրդներս որք մաքէս անցեր են. որ խօսքերս քեզ անհաճոյ եղեր են. որ խօսքերս և հաճութիւնքս քու ամենամաքուր Սրտիդ հետ համաձայն չեն գտնուած. ինչ գործեր ըրեր կամ թողեր եմ քու աստուածային բարեհաճոյ կամացդ դէմ։ Աստուածային լուսոյդ ճառագայթ մը պիտի պայծառացնէ իմ միտքս,

և պիտի ճանչցընէ ինծի ամենայն
չարութիւնքս և թերութիւնքս։
Ո՛վ ամենաքաղցր Յիսուս, իմ պա-
կասութեանցս և մեղացս պայ-
ծառ ծանօթութեան վրայ, յա-
ւել նաև զղջման եռանդուն զգա-
ցումը՝ հաստատուն առաջադրու-
թեամբ զիս ուղղելու։ Առանց քե-
զի, ո՛վ գերագոյն լոյս, ես խաւա-
րի մէջ կը գտնուիմ։ առանց քո,
ո՛վ հուր երկնային, ցուրտ եմ և
անզգայ։ Արդ պարգևէ ինծի այս
կրկին շնորհքս ո՛վ բորբոքեալ Սիրտ
աստուածեղէն. այն յաւոյն հա-
մար զոր իմ մեղացս պատճառաւ
կրեցիր, առ Հայրն երկնաւոր ու-
նեցած սիրոյդ և զմեզս ջնջելու
անհուն փափաքանացդ առթիւ։
Կը յուսամ ես զայն ամենասուրբ
Օրհդ քաղցրութենէն, և քու և
իմ մօր Մարիամու բարեխօսու-
թենէն։

ՔՆՆՈՒԹԻՒՆ

Հոս յիշէ բոլոր օրուան ընթացքից մէջ
բրած գործերդ, մոռնալութիւնքդ, խօս-
քերդ, քու վիճակիդ վերաբերեալ գոր-
ծոցդ մէջ զանցառութիւնքդ։ Այսպէս
ամենայն պակասութիւնքդ միտքդ բեր՝
և միացնելով զամէնքն անցեալ կենացդ
մեղաց հետ՝ի զղջումն գբեզ դրդէ։

Ցաւ

Ի՞նչպէս հնար է ո՛վ Աստուած
իմ, որ ես միշտ այսպիսի ցուրտ
սիրտ մ՝ունենամ դէպ առ քեզ,
և ասանկ քեզ հակառակելով և
զքեզ չի սիրելով օր մը անցունեմ։
Ուրիշ բան չունիմ բայց եթէ առ
ոտս քո դիմել քու որդւոյդ Յի-
սուսի Քրիստոսի դառն չարչարա-
նացն յիշատակաւ, և ցաւիլ և
զղջալ քու առջևդ՝ ատելով իմ այն-
քան մեղքերս որոնցմով զքեզ դառ-

նացուցի։ Ա՛յո՛, ամենաքաղցր Յիսուս իմ, 'ի բոլոր սրտէ կը զղջամ քու առջևդ. կը զղջամ որ մեղանչելովս արժանացեր եմ յաւիտեան քեզմէ բաժնուելու, կը զղջամ որ մեղանչելովս յերկնից հրաժարեցայ. սակայն 'ի վեր քան զամենայն կը զղջամ որ զքեզ վշտացուցի, մինչդեռ դու զիս կատարեալ Սրբութով մը սիրեցիր, ինծի համար ամենայն տեսակ բարիք պատրաստեցիր, և արժանի ես անբաւ բարութեամբդ ամէն բանէ 'ի վեր սիրուելու։ Ո՛վ Յիսուս, ո՞ւր էր թէ զքեզ բնաւ վշտացուցած չըլլայի. ո՛վ թէ կարենայի ամենայն մեղքերս արեամբս ջնջել։ Բայց եթէ ես զայն չեմ կրնար՝ քու անգին արիւնդ բաւական է. անոր զօրութեամբ ջնջէ իմ ամէն անօրէնութիւնքս. գթած Սիրտդ ինձ օգնութեան հասնի, և այդ անբաւ սիրոյդ աստուածային հուրը թող ջնջէ այս մի նուագ իմ ամէն մեղ-

քերս։ Յառաջ քան զամենայն իմ սիրտս եղած է որ իւր չարութեամբն զԱստուածս վշտացուցեր է. արդ դու մատո առ Հայրն երկնաւոր իմ կողմանէս քու անարատ Սիրտդ, և այնու խնդրէ իրմէ որ իմ սրտիս ներումն շնորհէ։ Իմ սիրտս գործով ալ մեղանչած է, և զգացմամբ և կարողութեամբ քեզի դէմ զիներ է. և դու քու Սրտովդ շնորհէ ինծի ճշմարիտ ցաւ և կատարեալ թողութիւն քեզի դէմ գործած ամենայն չարեացս։ Զայս ամենայն քեզմէ կը յուսամ, և քեզ եռանդուն շնորհակալութիւն պիտի մատուցանեմ ոչ միայն այս կեանցս մէջ՝ այլ և 'ի յաւիտեանս։

Աղաչադրութիւն

Սակայն, ո՛վ Յիսուս իմ, դեռ ես չեմ թողուր զքեզ, այլ կ'աղաչեմ և կը պաղատիմ որ իմ ամենայն ա-

նորէնութեանցս և մեղացս կատարեալ թողութիւն շնորհես և զանոնք ջնջես։ Հոս քու սրտիդ առջև էյնալով կը խորհիմ իմ մեղացս այլանդակութիւնն և քու սիրոյդ անհունութիւնը. կը զղջամ անոնց վրայ 'ի բոլոր սրտէ, և կ'առաջադրեմ ուղղել զիս յամենայն պակասութեանց և 'ի մեղաց՝ քեզ հաճոյանալու համար. (հոս առաջադրէ 'ի մասնաւորի ոչողել զքեզ այն պակասորեանէ որուն մէջ ստէպ կ'իյնաս)։ Սոյդ է Յիսուս իմ, որ իմ կարողութիւնքս տկար են, սիրտս անհաստատ է, և առանց քո՝ պիտի չի կարենամ առ քեզ ըրած առաջադրութիւնքս կատարել։ Սակայն քու ամենաքաղցր Սրտիդ կը յուսամ այն ամենայն օգնականութիւնքն որոց կարօտ եմ. վասն զի եթէ ես տկար եմ՝ քու Սիրտդ ինձ զօրավիգն է. եթէ ես անհաստատ եմ՝ քու Սիրտդ հաստատութիւնս է. եթէ իմ վրաս հաղարաւոր թշնամիք յարձակեր են՝ քու Սիրտդ վահան է ամրութեան որ զիս յամենայնէ կրնայ պաշտպանել. եթէ ես անդուն եմ չարեաց՝ քու Սիրտդ անդունդ է գթութեանց։ Ի քեզ է ուրեմն ամենայն վստահութիւն իմ և ամենայն ապահովութիւն իմ. և 'ի քեզ ապահովելով՝ կը յուսամ նաև հաղարաւոր անգամ էյնալէս վերջն ալ՝ կարենալ զիս կանգնել և ուղղել յամենայն պակասութեանցս։ Փառաւորէ՛ ոմ ամենաքաղցր Յիսուս քու Սիրտդ, շնորհելով ինծի այն յաղթութիւնն ամենայն կրիցս վրայ՝ զոր միայն 'ի քէն կը յուսամ. եղիցի։

Խոդմի քնինոբեանի վերջ երեկոյեան աղօթքներդ ըրէ՝ որ կրնան ըլլալ նաև ասոնք։ Հայր մեր, Ողջոյն, Հաւատամք, Հաւատոյ, Յուսոյ, Սիրոյ և Զղջման ներգործութիւնք. յետոյ հոս դրած աղօթքներս ալ ըրէ։

ԱՂՕԹՔ

Ամենաքաղցր Յիսուս, ընդունէ սրտիս հառաջանքն զորս օրուանս աւարտած միջոց առ քու ամենասիրելի Սիրտդ կ'ուղղեմ. և ուրիշ բան չեմ ուզեր՝ բայց եթէ զքեզ ամէն ժամ և ամէն վայրկեան. և ով որ քեզմէ զատ ուրիշ բան կը փնտռէ, չի գիտեր ինչ ուզելն։

Յիսուս, քաղցր Յիսուս, կը գոչեմ առ քեզ Ս. Կատարինէ Սենացւոյն հետ, եղիր իմ Յիսուսս քու ամենասուրբ Սրտովդ և փրկէ հոգիս որ անգին արեամբդ գնեցիր։

Յիսուս, գթած Յիսուս, միացեալ այն սիրոյն հետ որով քու ամենասուրբ Սիրտդ զոհեց ամենասուրբ Մարդկութեանդ ամենայն երազներն 'ի յաւիտենական փառս երկնաւոր Հօրդ և 'ի փրկութիւն ամենայն մարդկան, նոյն սիրով կը մատուցանեմ և ես քեզ

կենացս այս երազը՝ 'ի փառս քո և 'ի սուրբ սէր քոյին։

Ամենաքաղցր Յիսուս իմ, տուր ինձ որ քու լանջացդ վրայ հանգչիմ, ընչեմ 'ի սուրբ Սիրտ քոյին, քու ամենաքաղցր հոգիդ ինչոյ իմ սրտիս վրայ, զայն բոլորովին առ ինքն ձգէ և իրեն հետ միացընէ։ Ո՛վ ամենասիրելի Յիսուս, ես 'ի քո կողդ կ'ապաւինիմ, հոն խընամդ զիս, պաշտպանէ զիս և սրբացուր զիս։ Ո՛վ ամենաքաղցր Սիրտ Յիսուսին իմոյ, այս գիշեր քեզ կը յանձնեմ իմ սիրտս և զիս բովանդակ։ Զկարենամ պիտի գովել իմ Աստուածս, ով ամենաքաղցր Սիրտ Յիսուսիս, դու գովէ զայն իմ տեղս, և իմ սրտիս բաղխմանց թուով՝ այնքան գովուրթիւնս մատո առ նա. զանոնք մէյմէկ կենդանի կայծակներ համարէ սուրբ սիրոյ՝ զորս առ ամենասուրբ երրորդութիւնն կ'ուղղեմ. այս ըզգացմամբք կ'ուզեմ հանգչիլ և քը-

նանալ. Խաղաղութեան յայտ և 'ի սոյն ննջեցից և հանգեայց։

Ով Յիսուս, խնդութիւն զքեզ սիրողաց և քեզի համար վշտակիր սրտերուն։

Յիսուս, Աստուած իմ, Փրկիչ իմ, մեռեալ 'ի վերայ խաչին իմ սիրոյս համար, Աստուած սրտի իմոյ, բաժին իմ յաւիտեան։

Յիսուս քաղցր սէր իմ, Յիսուս քաղցր յոյս իմ, Յիսուս քաղցր գթութիւնդ իմ, Յիսուս գերագոյն բարիդ իմ։

Յիսուս Ճանապարհ և Ճշմարտութիւն իմ, կեանք իմ, ամենայն ինչ իմ, 'ի խաղաղութեան քում կը ննջեմ և կը հանգչիմ՝ քու ամենասուրբ ձեռացդ յանձնելով իմ հոգիս։

Մեղաբեղուն Յիսուս, քու Աստուածութեանդ երանութեան և ամենասուրբ Մարդկութեանդ արդեանց մէջ, երկնից և բոլոր երկրի սիրոյն զքեզ կ'ողջունեմ, կը պաշ-

տեմ և կը գրկեմ. և սիրոյդ խոցուածքն ամենայն սիրով կը համբուրեմ (հանիրոբի զսուրբ խալն)։

Առ ամենասուրբ Կոյսն

Այս գիշերս քու մայրական սիրոյդ գիրկը ինքզինքս կ'աւանդեմ, ով ամեներանելի Կոյս Մարիամ. սիրեցեալ սրտով ինձ նայէ. պաշտպանէ զիս բանսարկուին ամենայն դարանները, և օրհնէ զիս քու մայրենի օրհնութեամբդ։

Առ Ս. Հրեշտակն և առ փառաստաբան Սուրբս

Ով ամենասիրելի Պահապան Հրեշտակդ իմ, և դուք փաստաբան Սուրբերս, պաշտպանեցէք և խնամեցէք զիս, և իմ տեղս գովեցէք անդադար զԱստուածս, և տուէք ինծի ձեր սուրբ օրհնու-

թիւնը՝ զոր ջերմեռանդաբար ձեզ-
մէ կը խնդրեմ։

Յիսուս, Մարիամ և Հայր Յով-
սէփ, ձեզ կ'ընծայեմ սրտիս հետ
հոգիս ալ. Յիսուս, Մարիամ և
Յովսէփ ներկայ եղէք իմ հոգեվար-
քիս միջոց. Յիսուս, Մարիամ և
Յովսէփ, ձեզի հետ աւանդեմ՝ ի
խաղաղութեան իմ հոգիս։ Յա-
ւուրն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբ-
ոյ. ամէն։

Կրրոշրիւն Սրբոյ Պատարագի

Պատարագն այն մեծ զոհն է՝ որ կրօ-
նից ամէն խորհուրդներէն աւելի մեծ, գե-
րագոյն և սրբագոյնն է. անոր համար
խորին պարկեշտութեամբ և մեծաւ ամ-
փոփածութեամբ պէտք է լսել զայն։ Այս
սուրբ զոհն Յիսուսի Քրիստոսի շարչա-
բանաց ներկայացումն է, որ առանց հեղ-
ման արեան հոն սուրբ սեղանին վրայ մեր
աչաց առջև կը ներկայանայ։ Այս պատ-
ճառաւ ամենայն սրբութեամբ լսելու հա-
մար զայն՝ ընտրելագոյն կերպն Յիսուսի
Քրիստոսի շարչարանքները մտածելն է.
և եթէ այսպէս լսես՝ զղջացեալ սրտիւ և
վառեալ սիրովն Աստուծոյ անկից կը մեկ-
նիս։ Ըստ խրատուց Ս. Պոնավենտուրայի,
օվ որ կ'ուզէ շնորհաց 'ի շնորհս՝ և յառաջ-
քինութիւնս բարձրանալ Քրիստոսի շար-
չարանքները թող խորհի։ Հոս դրքոյկիս
մէջ աչացդ առջև եղանակը կը տեսնես։
Աղէկ մտածուած խաչելութիւնը՝ սրբոց
գիրքն է։ Անդրադարձութեամբ ընթեր-
ցիր այս գիրքը, այն ատեն աղէկ ապրելու
եղանակը կը սորուիս, և կը տեսնես որ
Աստուծոյ սէրը քու սրտիդ մէջ կը բոր-
բոքի։

ԱՂՕԹՔ

ՍՐԲՈՅ ՊԱՏԱՐԱԳԻ

Սրբոյ Պատարագի ներկայ ըղլալու ընտրեղագոյն կերպը

Աստուած իմ, ահաւասիկ եմ ծունր խոնարհած քու սուրբ խորանիդ առջև և հոս եկած եմ Քահանային հետ 'ի միասին մատուցանելու քեզ՝ իմ դթած Փրկչիս և քու աստուածային Որդւոյդ Յիսուսի Քրիստոսի մարմնոյ և արեան զոհը։ Այս մատուցմամբ կը ցանկամ պատուել զքեզ, շնորհակալ ըլլալ քեզի և ընդունել քու անբաւ գթութենէդ թողութիւն մեղացս, քաւութիւն պատժոցս և առատութիւն քու շնորհացդ։

Անոր համար, ով Տէր, լուսաւորէ միտքս և սրբէ սիրտս, որպէս զի ջերմեռանդութեամբ ներկայ ըլլամ աստուածային զենմանդ։ Օրհնէ զիս ով Տէր. Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. ամէն։

Ի սկզբան Պատարագի

Ահաւասիկ հոգի իմ քու սիրելի Յիսուսդ 'ի պարտիզին Գեթսեմանի, ուր իր դառն չարչարանքները կը սկսին... Տէս զանիկայ. կը քաշուի առանձնութեան մէջ և յերկրի երեսի վրայ տարածուած՝ կ'աղօթէ առ Հայր իւր երկնաւոր. և տեսնալով մոռք մեկիկ մեկիկ իւր մերձաւոր մահուան տանջանքները՝ կը տխրի և արիւն կը քրտնի.... Ո՜վ Յիսուս իմ, իմ մեղքերս եղած են պատճառ քու վշտացդ. այո՛, քանի՞ մեծ չարիք գործեցի, մեղանչելով քեզի դէմ Տէր իմ և Աստուած իմ..... Երկ-

նաւոր Փրկիչ իմ, գթա՛ յիս . . . Թո՛ղ ինձ . . . . Փրկէ՛ զիս . . . Քու անմեղ Արիւնդ Թո՛ղ խօսի Հօրն երկնաւորի գահոյիցն առջև . . . Յիսուս գթութիւն իմ։

Երբ Քահանայն վեր կ'երթայ 'ի խորանն

Հոգի իմ, Յիսուսդ մատնուեցաւ. տես զնա բռնուած 'ի զինուորաց և կապուած բարբարոսաբար . . . Տես թէ ինչպէս Յերուսաղէմ կը տարուի, հազար ու մէկ տեսակ նախատինք և արհամարհանք կրելով . . . Տես զնա հոգի իմ, թէ ինչքա՛ն կը կրէ քու հպարտութեանդդ և մեղացդ համար . . . . Տես թէ ի՛նչպէս զքեզ արժանացուցեր է շնորհաց՝ որպէս զի խոնարհ և սուրբ ըլլաս . . . . Կը ջանամ արդեօք և դու։

Երբ Քահանայն զժամանուտն կը սկսի

Յիսուս Յերուսաղէմ կը մտնէ։ Տէս զնա հոգի իմ, որ ա՛լ իբրև Թագաւոր ծափահարութեամբ չընդունուիր, այլ իբր չարագործ՝ ծաղրածութեամբ, անարգանաք, նախատանաք և երգիծանաք . . . . Մարդկանց զգացումը ոչքան փոփոխական է. 'ի խնդութենէ 'ի զայրոյթ կ'անցնին, 'ի գովասանաց յերգիծանութիւն, 'ի փառաց յանարգութիւն . . . Եւ դու հոգի իմ, կը վստահի՞ս դեռ 'ի մարդիկ. սորուէ իրենց դատաստանը բանի տեղ չի դնել . . . . Սակայն դարձուր միւսանգամ աչքերդ առ քու Յիսուսդ, և տես զնա որ խառանաք կը քաշկռտեն և իրենց անօրէն ատեանը կը տանին՝ ուր կ'ամբաստանուի, կը նախա-

տուի և երեսի վրայ կը ձգուի... Ի՞նչ գեղեցիկ դասեր կու տայ քեզի լռութեան, թողութեան, համբերութեան և մահացուցման. կը հասկնամ հոգի իմ. կը գործադրեմ և դու զանոնք: Միշտ կը մեղանչես և ոչ երբեք կ'ապաշխարես. միշտ զԱստուած կը վշտացնես՝ և երբեք չես կանար զինքը գոհացնել... Ուրեմն ի՞նչպէս քու մեղապարտ մարմինդ կը պատժես. խոնարհէ անգամ մը:

Աշխատասիրեն մինչև և ընդ Սերովբէս

Ահաւասիկ իմ Յիսուս սեան կապուած՝ ուր բարբարոսաբար կը ծեծուի և փշով կը պսակուի... ով կրնայ զինքը տեսնալ և 'ի գութ չի լալ... Յիսուս բոլորովին վերջք պատած է... Յիսուս կեցեր է խոցուած գլխով... Հայր յաւի-

տենական, ընդունէ այս անարատ նշխարը 'ի շնորհակալութիւն անբաւ գթութեանդ՝ զոր իմ վրայ ցուցուցիր, և 'ի թողութիւն մեղացս.... Տէր իմ գթա՛ յիս... Ի՞նչ գործեցի ես իմ չար խորհուրդներովս. փշովք պսակեցի Յիսուսիս իմ Փրկչիս գլուխը.... Յիսուս գթութիւն, Յիսուս ողորմութիւն. Աստուած իմ որքան բարի ես դու. կ'ուզեմ երախտագէտ քեզ ըլլալ, և սիրել զքեզ որչափ կը սիրեն ամենայն սուրբք, որչափ կը սիրե զքեզ քու ամենասիրելի մայրդ Մարիամ. բայց եթէ չեմ կրնար սիրել զքեզ այնքան, Աստուած իմ, գանձ իմ միակ բարիդ իմ, կը սիրեմ զքեզ 'ի վերքան զամենայն, կը սիրեմ զքեզ 'ի բոլոր սրտէ, բոլոր հոգւովս, բոլոր մտօքս, բոլոր իմ կարողութեամբս և 'ի վերքան զիս. և եթէ հնար էր՝ կ'ուզէի որ արեամբս իսկ զքեզ սիրելի ընեմ ամենուն և

ամենքն ալ զքեզ Ճանչնան։ Սիրե-
ցեալ Աստուածդ իմ, չգիտնալով
արդ թէ ինչպէս գերագոյն կեր-
պով զքեզ կրնամ սիրել, քեզի
կ'ընծայեմ բոլորովին իմ սիրտս,
կը հրաժարիմ դատողութենէս,
յօժարութենէս և յամենայն փա-
փագանաց. և քու սիրոյդ համար
կը համակամիմ ցկեանս ամէն բանի
մէջ հնազանդիլ անոր՝ որ ինծի
կ'առաջնորդէ, թէ 'ի հոգիս և թէ
'ի մարմնոյս։ Աստուած իմ, միակ
բարիդ իմ, ինչ որ կ'ուզես և ինչ
որ քեզ հաճոյ է՝ զայն կատարէ
իմ վրաս։

Եւ ընդ Սերովբէան միանգամ 'ի Սուրբ 'ի Սուրբ

Արի հոգի իմ, գթա՛ քու Տիրոջդ
վրայ.... Զէս տեսնար թէ ինչ մեծ
սիրով կը գրկէ Յիսուս զքաջը. հե-
տեւէ հոգիդ իմ Յիսուսի 'ի Գող-

գոթա։ Ո՛վ աղխտալի տեսարան,
ո՛վ ցաւալից Ճամբորդութիւն, Յի-
սուսս մահուան կը դատապարտուի
ինչպէս գառն մի անմեղ 'ի սպանդ։
Ո՛վ Աստուած իմ, որքան խոցեալ
ես վիրօք... Տէս գլխուն վրայի
փշոց խուրձն... Տէս զնա ծանրա-
կշիռ փայտիւն ուսոյն վրայ... Տէս
զնա թէ ինչպէս գողգոլոյն ոտիւք
կը քալէ և արեան կայլակքն կը
կաթկըթին... Ո՛վ գառնագոյն տե-
սիլ... Ո՛վ Յիսուս իմ, ո՛վ տառա-
պեալ Տէր իմ, կը Ճանչնամ իմ մե-
ղանչելով գործած մեծ չարիքս. կը
խոստովանիմ արդ իմ մեղքերս և
կու լամ զանոնք գառնապէս...
Ո՛վ բարի Յիսուս իմ, գթութիւն
և ողորմութիւն։

Ի Սուրբ 'ի Սուրբեան վերջը

Ո՛վ Յիսուս իմ, գո՛ 'ի խաչին
իմ սիրոյս համար... ո՛վ չափա-
զանց սէր... ամենասուրբ նշխար,

կը պաշտեմ զքեզ խորին խոնարհութեամբ. ով անգին արիւն Յիսուսի, սրբացուր, արբո՛ և բորբոքէ իմ հոգիս... Յիսուս իմ, որ կեցեր ես հոս սուրբ խորհրդեանս մէջ իմ սիրոյս համար, հնորհակալ եմ քու այնքան սիրոյդ. կը ցանկամ բորբոքիլ այն սիրոյդ բոցոյն մէջ զոր իմ Փրկիչս սպառեց խաչին վրայ... Յիսուս բոլորովին իմն է և ես բոլորովին Յիսուսիս... կը փափագեմ կեալ և մեռանիլ Յիսուսիս հետ խաչին վրայ: Կը սիրեմ զքեզ Յիսուսդ իմ խաչելեալ վասն իմ. կը սիրեմ զքեզ ով անհուն սիրող, կը սիրեմ զքեզ անբաւ բարութիւն: Ո՛վ Մայր գորովագութ սիրոյ, սորուեցուր ինծի սիրել զՅիսուս:

Ճաշակման միջոց

Տէս հոգի իմ զՓրկիչն աշխարհաց. նայէ գարձեալ քու Տիրոջդ վրայ... Ամենասիրելի նա՛ի խաչին ամենագաւառ տանջանաց մէջ... Ո՞վ է այն որ խաչին վրայ այնքան կը տանջուի. իմ սիրելի Յիսուսս... ինչպէս կը չարչարուի. իւր փափուկ մարմնոյն ամենայն մասամբը... որո՞ւն համար կը չարչարուի... ինծի պէս ապերախտ ըստեղծուածոյ մը համար... Ո՜վ սէր, ով անբաւ բարութիւն Յիսուսին իմոյ. ի՞նչ կը մտածես հոգի իմ:

Ամենասիրելի Յիսուս որ կը մեռնի... ՝ի հոգեվարս է և վերջին շունչը կու տայ... տես այն հոգեվարքի աչքերն... գուշնաստեալ երեսը... Սիրան որ տակաւ կերպով կը զարնէ... երկինք կը խաւարի... երկիրս կը դողայ... գերեզ-

մանք կը բացուին . . . Նշան են ա-
սոնք որ աշխարհքիս Արարիչը կը
մեռնի։ Յիսուս մեռեալ է... Մեր-
ձեցիր 'ի սուրբ խաչն և տես քու
Տէրդ հոգի իմ.. Սէր կը շնչէ, և
կը հրաւիրէ զամենքը որ զինքը սի-
րեն. գլուխը խոնարհած խաղա-
ղութեան համբոյր քեզ տալու.
բաղուկքն տարածուած զքեզ գրը-
կելու. Սիրան բաց զքեզ սիրե-
լու..., Ի՞նչ կ'ըսես հոգի իմ. կը-
նա՞ր քու Յիսուսդ ասկից աւելի
բան մ'ընել զքեզ փրկելու հա-
մար. կը համապատասխանե՞ս ու-
րեմն Յիսուսի սիրոյն... Ո՛վ Յի-
սուս իմ, Աստուած իմ, Սէր իմ,
միակ և գերագոյն բարիդ իմ հոգ-
ւոյս։ զիս քու ձեռքդ կը թող-
ուս, և կ'ուզեմ միշտ քուկդ ըլ-
լալ 'ի յաւիտեան։ Ընդունէ զիս
Յիսուս իմ քու սիրեցեալ Սրտիդ
մէջ։

Ճաշակիմանեն սկսեալ մինչև Պա-
տարագին վերջը

Ո՛վ Յիսուս իմ, ինչ փոխարէն
քեզի կրնամ ընել անհուն սիրոյդ
տեղ որ ինձ ցուցուցիր այնքան վեչ-
տեր կրելով։ Պիտի սիրեմ, պիտի
սիրեմ զքեզ Տէր իմ, զօրութիւն
իմ, և քու պատուիրանքներդ պի-
տի պահեմ։ Պիտի սիրեմ զքեզ
Յիսուս իմ, խնդութիւն իմ, բա-
րութիւն և երանութիւն իմ։ Կը
պաշտեմ զքեզ, կ'օրհնեմ զքեզ,
գոհանամ զքէն, ինքզինքս բոլորո-
վին քեզ կ'ընծայեմ, և ինծի հետ
մեկտեղ իմ ամենայն ախտերս ալ
կը զոհեմ, մանաւանդ . . . . Տուր
ինծի շնորհք քու առաքինութեան
ցրդ նմանելու, և մանաւանդ . . .
Անշատէ զիս ստեղծուածներէ,
վասն զի ես մի միայն զքեզ սիրել
կ'ուզեմ։ Ի քեզ կը ցանկամ ա-

պրիլ և 'ի քեզ մեռնիլ: Քու օրհ-
նութիւնդ կը խնդրեմ Յիսուս իմ:
Հայր յաւիտենական, ընդունէ
այս սուրբ զոհը 'ի նշան իմ ծա-
ռայութեան, 'ի շնորհակալու-
թիւն քու բարեացդ և 'ի քաւու-
թիւն մեղաց: Արդիւնաւոր ըլլայ
այս զոհը ամենայն հաւատացելոց
համար, մանաւանդ... Աստուած
իմ ամենասիրելի, օգնէ ինծի փախ-
չելու 'ի մեղաց, և զարգանալու
քու սուրբ սիրոյդ մէջ:

Ո՛վ Մարիամ յոյս իմ, դարձեալ քեզի կը դիմեմ, վասն զի Յիսուսէս վերջ 'ի քեզ միայն ապաւինած եմ: Կը սիրեմ զքեզ ամենասիրելի Մայրդ իմ, ամենայն սրտով, և քու սիրոյդ համար մեռնիլ կը ցանկամ: Յիսուսի Քրիստոսի սիրոյն համար ընդունէ ինծի այն ամենայն շնորհքն՝ զորոնք Աստուծմէ խնդրեցին այս անմահ Պատարագիս մէջ: Եթէ գու կամենաս՝ ես շնորհօք կը լեցուիմ: Մայր իմ,

յոյս իմ, զիս բոլորովին Յիսուսիս ըրէ. ամէն:

Աղօթք շնորհակալութեան

Ամենասիրելի Յիսուս իմ, բոցակիզէ հոգիս քու սուրբ սիրոյդ քաղցր բոցով, որպէս զի հալիմ և հիւծիմ միշտ քու սիրոյդ համար, և հառաչեմ և փափագիմ ելլալ այս կեանքէս, և գալ և միանալ կատարելապէս քեզի հետ 'ի յաւիտենական երանութեան: Տուր որ հոգիս միշտ քեզի ծարաւի, միշտ զքեզ խնդրէ, քու վայօքդ միշտ խօսի, զքեզ գտնայ, և ամէն բան քու փառացդ համար կատարէ: Տուր որ սիրաս միշտ քեզի հետ միացեալ ըլլայ՝ որ մի միայն իմ յոյսս ես, իմ հարստութիւնս, խաղաղութիւնս, ապաւէնս, վստահութիւնս, բաժինս և գանձս:

ԱՅԼ ԿԵՐՊ ԱՂՕԹԻՑ

ՎԱՍՆ ՊԱՏԱՐԱԳԻ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Պատարագի սկիզբեն մինչև Աշխատարան

Յիսուսի Քրիստոսի Սիրտն որ կ'աղօթէ և կը հառաչէ

Կ'աղօթես դու, կը հեծես, ով քաղցր Փրկիչ իմ, և քու Սիրտդ ընկղմած է վշտաց և ցաւոց մէջ. ոչքան առիթներ ունիս դու հեծելու: Այն ամենայն որ քու աչացդ առջև կը ներկայանան՝ քու Սիրտդ կը վշտացնեն և դառնութեանց

ծովու մէջ կ'ընկղմեն: Աշխարհիս աղէտալի վիճակն, մեղքերն, կրքերն որոնց մէջ կը ձգեն մարդիկ իրենք զիրենք, ամբարշտութեանց հեղեղն՝ որ զաշխարհս կ'ողողէ, անթիւ հոգւոց կորուստն՝ որք հանապազօր 'ի դժոխս կը գահավիժին, քու երկնաւոր Հօրդ թշնամանեալ փառքն, չարչարանացդ և վշտացդ մօտենալն, անթիւ մեղաւորաց համար անգին արեանդ անօգուտ կերպով հեղանելն՝ որք քու մահուամբդ իսկ դեռ չեն գադրիր զքեզ վշտացնելէ և 'ի յաւիտեանս կը կորնչին, այս ամենայն ցաւալի առարկայք՝ վշտաց և հեծութեանց աղբերք են քեզի համար:

Ես ինքն, ով Աստուած իմ, ես ինքն նոր առիթ մի եմ. կը հեծես ինծի համար, կը տեսնաս իմ հոգւոյս եղկելի վիճակն, իմ գաղջութիւնս, անհաւատարմութիւնս և շնորհացդ ընդդիմութիւնս, մեղացս վրայ ունեցած քիչ ցաւս,

զնս ուղղելու անփութութիւնս, այս աղէտալի պայմանաց մէջ ինքզինքս մեռնելու վտանգի մէջ ձգելս, այս ամէն բանի համար դու կը հեծես իմ վրաս, և իմ ամենևին գուրեթս չի շարժիր. դու վշտացեալ ես, և ես անդգայ կը կենամ: Պարտական էի ես կեանքս արտասուօք և հեծութեամբ անցուցանելու, մինչդեռ հոգւոյս ինդութեանց և ցնդմանց ետևէ եմ:

Եւ որ քեզ աւելի դառնագոյնն է և ինձի համար ամենամեծ մեղք համարելի՝ որ այսպիսի թշուառ վիճակի մը մէջ գտնուելովս՝ չեմ մտածեր թէ աղօթից դիմեմ, որպէս զի կարենամ անոի դուրս ելլել:

Սիրա Աստուածդ իմոյ, դու կ'աղօթես և ես չեմ աղօթեր. և կամ եթէ աղօթեմ՝ անանկ դէշ և քիչ ուշադրութեամբ, զգածմամբ և եռանդեամբ կ'աղօթեմ, որ աղօթքս չարժանանար մինչև ողորմութեանդ գահոյից առջև բարձրանալու: Ո՛վ Աստուած իմ, ինձի աղօթել սորուեցուր. տուր գտնեա, որ քեզի մատուցած այս զոհիս շնորհիւն՝ իմ աղօթքս քու աչացդ առջև ընդունելի ըլլայ: Այո՛, ո՛վ Աստուած իմ, այս սուրբ վրատահութեամբ քեզ կ'աղօթեմ, հոգւոյս փրկութեան համար քեզ կը պաղատիմ՝ որոյ թշուառութիւնն և կարօտութիւնքն դու ինքնին կը ճանչնաս:

Քեզ կը մատուցանեմ դարձեալ իմ առաջադրութիւնքս այն ամենուն՝ որոնց համար պարտաւորեալ եմ աղօթելու. աղգականացս հետաւելի շնորհօք՝ քան արենակցութեամբ միացած ըլլամ. դու ինքնին եղիր կեդրոն և կապ բարեկամութեան իմ բարեկամացս. բարեբարացամէ ընդունած բարեացս տեղ՝ հարիւրապատիկ անոնց հատո՝. թշնամիքս շնորհօքդ լեցուր, այս է իմ վստահութիւնս որ քեզմէ կը հայցեմ:

Դարձեալ կը պաղատիմ քէն, ով Աստուած իմ, յիշէ զսուրբ Եկեղեցին և անոր Գլուխը, ամենայն Հովիւներն, զԹագաւորս, զիշխանս և զԺողովուրդս։ Լից զամենքը քու առատ օրհնութեամբդ, պարգևէ ամենուն քու Սրտիդ նըման սիրտ մը, միացո՛ զամենքն մի և նոյն զգածմամբ։

Սիրտ Յիսուսի որ կ'աղօթես, որ կը հեծես, կը պաշտեմ զքեզ և կը պաղատիմ որ ընդունելով իմ աղօթքս՝ միացնես զայն քու հառաչանացդ հետ։

Սիրտ Յիսուսի որ կը հեծես և կը կրես, կը պաշտեմ զքեզ և կը խնդրեմ որ այդ սուրբ հառաչանքներդ իմ սրտիս մէջ տպաւորես։

Սիրտ Յիսուսի որ ինքզինքդ երկնաւոր Հօրդ կը զոհես, կը պաշտեմ զքեզ և կը հայցեմ որ զիս ալ քեզի հետ մէկտեղ զոհես։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Աշխատասիրութիւն մինչև առէք կերէք

Խոնարհեալ սիրտ Յիսուսի

Ո՛վ քաղցր Փրկիչ իմ, որքան դառնութեանց մէջ ընկղմած է քու Սիրտդ. քանի՞ խոնարհութեանց հեղեղներով ողողած է։ Աստենէ ասեան կը տարուի, այս ինքն է 'ի նախատանաց 'ի նախատինս դատաւորաց առջև՝ որք քու թշնամիքդ եղած են. դերեզմ մը պէս ուժով կապուած, իբր եղեռնաւոր բամբասուած, իբր թշուառ, խաբեբայ, և խռովիչ ժողովրդեան՝ դատուած և դատապարտուած։

Կայիափայի տան մէջ նախատուեցար, անարգուեցար և ռա-

միկ ժողովրդենէ ամենագառն թըշ-
նամանք ձաղեցար։

Անիայի առջև ապտակեցար. Հերովդէսի առջև Հերմակ զգեստով անթիւ բազմութենէ յիմար համարուեցար, զորոնք այնչափ սիրեր և որոնցմէ քիչ մը առաջ այնքան գովուեր էիր։

Պիղատոսի ատենին առջև՝ թըշնառ և անօրէն չարագործի մը հետ բաղդատեցար. և քու Սրտիդ մեծ ցաւ մը այն եղաւ՝ որ այսպիսի անօրէն մը քեզմէ աւելի վերագասեցաւ։

Երուսաղեմի ամենայն փողոցներուն մէջէն քաշկռտուեցար, և անթիւ բազմութեան ժողովրդեան նախատինքն ու արհամարհանքը կրեցիր, որք զքեզ կը նզովէին և կ՝անիծանէին։

Ո՛վ Թագաւոր փառաց, ինչպիսի՜ խոնարհութեանց հեղեղներ են ասոնք քու Սրտիդ համար. սակայն դարձեալ ինչպիսի՜ առաքի-

նութեանց սքանչելիք կը փայլին քու զգացմանցդ մէջ. ինչ քաղցրութիւն, ինչ համբերութիւն, ինչ սէր. զքեզ տանջողաց համար կ՝աղօթես, և քու վիշտերդ զքեզ վշտացնողաց և զքեզ հալածողաց համար կը նուիրես։

Ո՛վ Երկրպագելի Փրկիչ, կարևոր էր քու Սրտիդ այս զոհը՝ երկնաւոր Հօրդ թշնամանեալ փառաց փոխարինելու, մեր հոգւոց հպարտութիւնն իջեցնելու, քու անզուգական խոնարհութեանցդ գինը մեզի հանչցնելու, և քու չարչարանացդ մէջ մեզի լուսաւոր օրինակ մը տալու համար՝ որուն չենք կրնար գիմանալ։ Նաև հիմա մեր խորանաց վրայ քու սէրդ ինչպիսի՜ վեհակի զքեզ կը հասցունէ։

Բայց որ քեզ զարմանալին և ցաւալին է, ով Աստուած իմ, այն կը համարուի, որ յետ այսպիսի սրտաշարժ օրինակի մը վերջն ալ, միշտ 'ի մեզ կը տիրե հպարտու-

թիւնն. ով, այս ինչպիսի ողբալի սէր է անձին, ուռայնութեան, ըղդայականութեան և փառաց:

Ո՛վ երկնային Փրկիչդ իմ, որքան պարտական եմ ես ինքզինքս յանդիմանելու. ես ուրիշ բան չեմ փնտռեր՝ բայց եթէ մարդկանց համարումը և հաճութիւնն՝ իբր թէ քուկդ ինձ բաւական չըլլար: Քու սիրոյդ համար վիչտ մը չեմ կրեր, նեղութեան մը չեմ տանիր, որ ամենայն ինչ ինծի համար կրեցիր, պզտի խոնարհութիւն մը զիս կը վշտացնէ և կը տխրեցնէ, հոգիս և սիրտս կը դառնացնէ, բոլորովին կը խռովիմ, և պարզ մարդկային շահու մը համար առքեզ ունեցած պարտքերս կը զլանամ: այս է քու աշակերտդ ըլլալս և զքեզ իմ Տէրս և Աստուածս ճանչնալս: Ո՛վ Փրկիչդ իմ, մինթէ դո՞ւ միայն խոնարհութեան բաժակը պիտի ըմպես. ոչ սիրեցեալ վարդապետդ իմ, կ՚ուզեմ ես ալ

մասնակցիլ, կ՚ուզեմ զայն քու ձեռքդդ ընդունիլ. և եթէ արիութեամբ ես ինձէն անոր եռանդ չեմ ըլլար, գոնեա պիտի ընդունիմ հըլութեամբ զայն ամենայն որ ինծի կը ղրկես. այս վայրկենէս սկսեալ քեզ կը զոհեմ ամբարտաւանութիւնս, ուռայնասիրութիւնս, որպէս զի քու խոնարհութեանդ մէջ քեզի հետ միանամ:

Եթէ դարձեալ ընութիւնս և անձնասիրութիւնս ինծի դէմ դառնան՝ աչացս առջև քու օրինակդ պիտի դնեմ և քու շնորհքդ պիտի խնդրեմ: Այս քու Սրտէդ բղխած երկնային շնորհքն իմ սիրտս անցնելով՝ քու խոնարհութեանդդ բաժակն ինձ պիտի քաղցրացնէ և մը խիթարական պիտի ընէ. անոր դառնութեանց մի կսթիչն՝ այս կուրացեալ աշխարհիս բոլոր կորստական հաճոյիցմէ աւելի պիտի քաղցրանայ:

Ո՛վ Սիրտ Յիսուսի կշտացեալ

'ի նախատանաց, զիս ալ մատնակ-
ցէ քու դառնութեանդդ։

Ո՛վ Սիրտ Յիսուսի ընկղմեալ
ցաւոց ծովու մը մէջ, իմ սիրտս
ալ արտասուաց մէջ ընկղմէ։

Ո՛վ Սիրտ Յիսուսի ընկղմեալ
խոնարհութեանց անդնդոյ մէջ,
ընդէ իմ հպարտութիւնս։

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Աչքեր կերկրի մինչև ցնաչակոչմն

Յիսուսի Սիրտն որ կը կրէ և կը մնանի խաչին վրայ

Ո՛վ Աստուած իմ, քու Սիրտդ
անհուն խոնարհութեանց մէջ թող-
ջէն յետոյ, հիմայ ալ քու մար-
մնդ բոլորովին տանջանաց կը մատ-
նես։ Ինչպիսի՛ վիճակի մէջ կը տես-
նեմ զքեզ քու ճաղատացդ մէջ.
սեան մը կապուած բարբարոսա-

բար կը ծեծուիս, քու կուսական
մարմնդ անգթաբար կը հարուա-
ծեն, ահաւասիկ բոլորովին կապու-
տակած է այն, պատռտած և վէր-
քերով ծածկուած. իբր երկրիս
որդ մը արիւնոտեալ գետնի վրայ
կը դնիս, արեանդ հեղեղաց մէջ կը
լուղաս, և սակայն այնու հան-
դերձ դեռ չեն դադարիր անգթա-
բար զքեզ հարուածելէ և ճաղե-
լէ. որպիսի՛ զայրոյթ ատելութեան
և բուռն ոխակալութեան։ Այնու
հանդերձ, ո՛վ Աստուած իմ, ինչ-
պիսի՛ զգացումներ կը նկատեմ
քու Սրտիդ մէջ։

Համբերութեամբ ամենայն ինչ
կը կրես, ինքզինքդ Երկնաւոր Հօրդ
կամացն յանձնած ես. քու տան-
ջանքներդ իրեն կը նուիրես, մեր
մեղաց համար թողութիւն կը խընդ-
րես։ Իբր նուիրեալ զոհ մը հա-
մարած ես ինքզինքդ մեր փրկու-
թեան համար. համակամութեամբ
և խնդութեամբ կը տեսնես որ ա-

ռեանդ առուակներ կ'ընթանան՝ որպէս զի մեր եղերունքն լուսացուին, և անոր ձայնը մինչև յերկինս բարձրանայ՝ շնորհք և ողորմութիւն ընդունելու մեզի համար։

Ո՛վ երկրպագելի Սիրա, դու ամենայն ինչ ինծի համար կը կրես, և ես քեզի համար բան մը չեմ ուզեր կրել. ամենաթեթև վիշտ մը ինծի անտանելի տանջանք մ'է, մինչև իսկ տանջանք և վիշտ բառերը լսելէ կը վախեմ. մարմնոյս չափազանց խնամք կը տանիմ, հանդիսաւորութիւն կը փնտռեմ, զայն կը գգուեմ, անոր վրայ յետին ասպիճանի կը գուրգուրամ, առանց յիշելու որ մեղաւոր մարմին մ'է զոր պէտք եմ ընկճել խստութեամբ և ապաշխարութեամբ։ Ո՛վ Տէր, միթէ չեմ ալ տեսնար որ'ի վշտաց փախչելով քու վիշտերդ կ'առաւելում և իմ փրկութեանս համար զանոնք անօգուտ կ'ընեմ։

Ո՛վ քաղցր Փրկիչ իմ, այս ան-

գութ ձաղմանդ մէջ կրածներդ դեռ հաղիւ թէ սկզբնաւորութիւն մ'են քու ցաւոցդ. քու զոհդ պէտք է որ աւարտի։ Կը տեսնեմ զքեզ որ խաչ ուսդ դէպ'ի Գողգոթա կը դիմես. Թող ինձ, ո՛վ Տէր, որ հոգւովս քեզ հետևիմ, և քու արիւնոտեալ շաւղացդ վրայէն քալեմ։ Ինչ կը տեսնեմ, ո՛վ Աստուած իմ, ինչ հիանալի տեսարան կը ներկայացնեն ինծի հաւատք։ Աստուած մ'որ կը կրէ, Աստուած մ'որ'ի չափազանց ցաւոց կը մեռնի, Աստուած մ'որ զինքն սպանողաց սիրոյն համար կը մեռնի։ Այս տեսարանիս ինչ կրնամ ըսել սրբոտիս զգացումները բացատրելու համար։

Ո՛վ, այսպէս կը վարդապետես ինծի այդ խաչին վրայէն քու ամենամեծ առաքինութիւնքդ որոց պարտական եմ նմանելու. ինչ աղէկ կը ճանչցնես մեզի Աստուծոյ անաչառ արդարութեան մեծու-

թիւնը, մեր հոգւոց դերազանցու-
թիւնն ու գինը. սակայն 'ի վեր-
քան զամենայն, ինչ աղէկ կը ճանչ-
ցընես մեղաց ահագնութիւնն ու
չարութիւնը. պատժոց արհաւիրքն
և զարհուրանքն որ յաւիտենական-
նութեան մէջ սահմանուած են:
Ո՛վ Սիրտ Աստուծոյն իմոյ, իմ
մեղքերս են որ զքեզ խաչեցին և
խաչին վրայ մեռուցին. իմ մեղքերս
զքեզ այս վիճակիս հասուցին. քու
արիւնդ թափեցին, և քու մա-
հուանդ առիթ եղան:

Անհնարին կ'երևի թէ այս ամէն
բաներս մտածելով՝ ես քու խաչիդ
ստորոտը չի մեռնիմ: Պարտական
չեմ ուրեմն իմ մեղքերս արտա-
սուօքս և արեամբս լուալու, կեան-
քիս հեծութեամբ և սգով անցը-
նելու, մտածելով թէ զԱստուածս
վշտացուցեր եմ, իւր ցաւոց պատ-
ճառ եղեր եմ, և յանցաւոր իւր
արեան և մահուան:

Ո՛վ Աստուած իմ, խաչիդ վրայ

դեռ Սիրտդ բաց է ինծի, բազուկ-
ներդ տարածեր ես սիրով և գորո-
վով զիս ընդգրկելու՝ միայն թէ
պարզուութեամբ և ստոյգ ցաւով
առ քեզ վերադառնամ:

Գողգոթայի վրայ կատարած ա-
մենամեծ զոհդ՝ իմ աչացս առջև ա-
մէն օր դեռ կը նորոգես խորանաց
վրայ անարիւն պատարագաւդ.
քեզ կը մատուցանեմ այս մեծ զո-
հըն՝ ինչպէս դու նուիրեցիր զայն
երկնաւոր Հօրդ. թող ինձ որ նոյն
պատարագիդ հետ 'ի միասին զիս
ալ բոլորովին քեզ նուիրեմ՝ ստու-
գիւ զղջացեալ և խոնարհեալ սրբ-
տիւ: Կը ցանկամ զայն քեզ նուի-
րել և կը խնդրեմ որ թոյլ տաս
ինծի. դու զայն քեզի հաճոյ զոհ
մը պատրաստէ՝ որպէս զի արժա-
նաւոր կերպով քեզ պատարա-
գուի:

ւարաւ պատած, և բոլորովին ու-
նայնացած։ Գերեզմանն իսկ յո-
րում կը հանգչի իրեն չէ. վայրենի
կենդանիք անգամ իրենց որջն ու-
նին, և Որդին մարդոյ իր գլուխն
հանգչեցնելու տեղ մը չունի։ Սա-
կայն մահուամբ հանդերձ իւր ա-
մենայն առաքինութիւնք իրեն հետ
են. համակամութիւնն, երկնա-
ւոր Հօրն հրամանաց հնազանդու-
թիւնն, աշխարհքէս բացարձակ
անջատումն, ինքզինքն բոլորովին
նախախնամութեան ձգելն, իւր
ներքին միութիւնն Աստուծոյ հետ։

Ահաւասիկ ասիկայ մեծ օրինակ
մ'է որուն պարտական ենք նմա-
նելու, ինչպէս ինքն ալ զմեզ կը
հրաւիրէ։ Ս. Պօղոս մեզի կ'ըսէ
թէ պէտք ենք մեռած ըլլալ, և մեր
կեանքը ծածկուած է Քրիստոսի
հետ յԱստուած. Մեռարուք և
կեանքն ձեր ծածկեալ են ընդ Քրիս-
տոսի։ յԱստուած։ Այո՛ Աստուած
իմ, քու այդ գերեզմանէդ պիտի

սորվիմ պաշտելն Սրտիդ զգացումներն. յերկրային իրաց անջատումն, արհամարհութիւն աշխարհի և անձին. անկից պիտի սորվիմ մեռեալ ըլլալ աշխարհի և անձին. սիրել զառանձնութիւն, ներքին միաւորութիւն ընդ Աստուծոյ՝ որ բոլորովին զիս պիտի երջանկացընէ։ Ո՛վ Աստուած իմ, ասոնք են սրտիս զգացումներն. կը նորոգեմ զանոնք այս զոհիդ մէջ և քուկիններուդ հետ միացընելով քեզ կը նուիրեմ. բոլոր կենացս մէջ զանոնք իմ սրտիս մէջ տպաւորեալ պահէ, և շնորհէ որ մինչև ցգերեզման հետս տանիմ։

Ո՛վ սիրելի Սիրտ Փրկչին իմոյ, դու մինչև ցյաւիտեանս այն խոնարհութեանցդ վերայ և ցաւոց մէջ պիտի չի մնաս. յետ այնքան փորձանաց և պատերազմաց քեզ երկնից արքայութեան մէջ փառաց վիճակ մը սահմանուած էր։ Ցաղթող քու թշնամեացդ, յաղ-

թանակիչ աշխարհի, մահու և ամենայն զօրութեանց դժոխոց, մըտար դու 'ի ծոց փառաց՝ զորս քու արդեամբդ ստացար. բարձրացեալ այժմ յերկինս, նստեալդ ընդ աջմէ Հօր, հիմայ քու Սիրտդ իւր աշխատութեանց արդար հատուցումն կ'ընդունի, խնդութեանց մէջ կը զմայլի, Աստուածային փառքը կը բերկրի։ Սիրտ Աստուծոյդ իմոյ, խնդակից եմ քու փառացդ և յաղթութեանդ. արդեօք ես ալ պիտի կարենամ օր մը այս քու փառացդ երջանկութեան մասնակցիլ. միայն քու արդեանցդ զօրութեամբ կրնամ այնմ յուսալ և արժանանալ։ Կը խընդրեմ զայն քեզմէ առ քեզ մատուցած զոհիս զօրութեամբ։ Դու ինձի համար ինքզինքդ խորանի վերայ պատարագեցիր, կը յուսամ թէ օր մը կ'ընդունիս զիս սրբութեանցդ տաճարին մէջ՝ ուր ընդ երանեալս գովեմ զքեզ յաւի-

տեան։ Օրհնէ զնս, Սիրտ Յիսուսի, ինքիմդ, այսու գիտաւորութեամբ քահանային օրհնութեան հետ 'ի միասին, յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. ամէն։

Կրթութիւն խոստովանութեան

Խոստովանութեան խորհուրդն ոչ միայն մեր սրտին մէջ մեղաց չարիքներուն համար կարեւոր է, այլ միանգամայն աստուածային օրինաց ամբողջական պահպանութիւնն ապահովցնելու համար։ Վասն զի եթէ այսու կրկին մերտութիւն մ'ունիս դժուարին, սակայն ինչպէս Ս. Ալֆոնսոս Լիկուորին կ'ըսէ, ուրիշ նաև գրքոյկնիկական բարոյական ամբողջութիւն մը։ Անոր համար կը յորդորեմ զքեզ որ բոլորով սրտիւ փախչիս 'ի մեղաց, Աստուծոյ պատուիրանքներն պահես զհոգիդ փրկելու համար, և խոստովանութեան յաճախես։ Բայց այս խորհրդոյն մերձեցած միջոցդ միշտ կենդանի հաւատքով բարբոքէ զհոգիդ, և իբր թէ մահուան մօտ ըլլայիր՝ այնպէս խոստովանէ։ Ջերմեռանդն կրթութիւնք զորս հոս պիտի գտնեք քեզի շատ օգտակարք են. զանոնք Ս. Ֆրանկիսկեայ Սալեզացւոյ գրուածք-

ներքին քաղաքացիք, այնու լի են հոգևոր օծութեամբ։ Զանազան եղանակներ կը դնենք, զորս կրնաս դու յաճախ փոփոխել ըստ քու կամացդ, ըստ ժամանակի, ըստ պատեհից և ըստ հոգւոյդ պիտոյից։

ՔՆՆՈՒԹԻՒՆ

Երկիւղածք որք սուրբ խորհրդոց կը յաճախեն, պէտք է որ կարճ քննութիւն մ'ընեն, և ոչ երկայն և խղճահար կերպով։ Բաւական է որ իրենց սովորական պակասութիւնքը ընեն յորս ստեպ կ'իյնան. և ջանան ամէն անգամ խոստովանութեան խորհրդոյն մերձեցած միջոցին զանազան առաքինութիւնք ալ գործած ըլլալ։

Անոնք որ քիչ կը խոստովանին, ջանան քննութեան համար բաւական ժամանակ անցնել՝ յորում մոքերնին բերեն գործած մեղքերնուն տեսակն և թիւը. յիշեն Աստուծոյ և Եկեղեցւոյ պատուիրանքն, եօթն գլխաւոր մեղքերը, իրենց վիճակին պարտքը, և քննեն թէ անոնց

մէջ արդեօք խորհրդով, խօսքով կամ գործով պակսեր են։ Եթէ չեն յիշեր մեղաց թիւը, մտածեն թէ օրքան յաճախութեամբ նոյն տեսակ մեղաց մէջ կ'ի՛ջնան. վասն զի Աստուծոյ անհուն ողորմութեան առջև այս ալ բաւական է որ զմեզ յանհնարինս չի պարտաւորեր։ Ուրեմն խաղաղութեամբ և վստահութեամբ ամփոփէ ինքզինքդ տան կամ եկեղեցւոյ մէջ, և Աստուծոյ ներկայութեան առջև համարելով, բորբոքէ հաւատքդ և ըլլս խնդրէ, որպէս զի կարենաս քու մեղքերդ ճանչնալ։

ԱՂՕԹՔ

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԵԱՆ

Հաւատք ներկայութեան Աստուծոյ

Աստուած իմ երկրպագելի և ա-
հաւոր, կը հաւատամ որ քու ներ-
կայութեանդ առջևն եմ, կը պաշ-
տեմ զքեզ, կը պատուեմ և կը
մեծարեմ. կ'ընդունիմ որ դու իմ
Աստուածս ես և կը պաշտեմ զք-
քեզ Ստեղծիչ իմ և գերագոյն
Փրկիչդ իմ. քեզ միայն երկրպա-
գանեմ, և խոնարհեալ սրտիս քու
աստուածային մեծվայելչութեա-
նդդ գահոյիցն առջև ծունր կը խո-
նարհիմ:

Դարձեալ կը հաւատամ հաս-

տատապէս, ով Աստուած իմ, որ
քու անգին արեանդ արդեանց հա-
մար իմ մեղքերս խոստովանու-
թեան խորհրդոյն մէջ ինձ պի-
տի թողուին՝ եթէ իմ կողմանէս
պէտք եղած պատրաստութիւնքն
ունենամ. և կը հաւատամ որ ա-
ռանց քու երկրպագելի արեանդ
հեղման՝ իմ մեղքերս ինձ չէին թո-
ղուեր, և իմ գործերս վարձուց
չէին արժանանար: Անոր համար
կու գամ ընկզմելու քու աստուա-
ծային արեանդ մէջ, և կը պաղա-
տիմ որ քու շնորհաբեր զանոնք ջն-
ջես:

Խնդրուածք շուրջոյ

Ով Տէր իմ և Աստուած իմ, առ
քեզ կ'ապաւինիմ այսօր իմ դար-
ձիս օրն. դու օգնէ ինծի քու պար-
գևաբեր և Հոգւոյդ Սրբոյ շնորհքն.
որպէս զի սուրբ սիրով մը բորբո-
քելով, կարենամ ամենայն խոնար-

հուլթեամբ այսօրուընէ վերջ ըզ-
քեզ խնդրել՝ դարձուցեալով առ-
քեզ աշխարհիս անապատին մէջ
մոլորեալ ոչխարը, որ մոռացեալ
իւր փրկութիւնն՝ ուսայնութեանց
ետեւէ եղած է։ Լսէ ինծի արդ,
Աստուած իմ, և արձակէ վրաս
լուսոյդ մէկ ճառագայթը, որպէս
զի գալով յուղիղ ճանապարհ՝ առ-
քեզ վերադառնամ Յիսուսիս մի-
ջնորդութեամբ, որ է ճանապարհ,
ճշմարտութիւն և կեանք։

Հայր երկնաւոր լուսոյ, որ կը
լուսաւորես զամենայն մարդ որ
յաշխարհ կու գայ, ծագէ իմ սրբ-
տիս մէջ ալ նշոյլ մը լուսոյ, սիրոյ
և ցաւոց, որպէս զի աղէկ ճանչ-
նամ, ցաւիմ և քեզի դէմ գործած
անթիւ մեղքերս պարզութեամբ
խոստովանիմ։ Մայր Աստուածոյ,
դու որ այդքան գթած ես զղջալ
ցանկացող մեղաւորաց, իմ սիրելի
յոյսս, դու քու սուրբ շնորհօքդ
օգնէ ինծի։ Պահապան Հրեշտակդ

իմ, օգնէ ինծի և տուր ինձ շնորհք՝
որ Աստուծոյս դէմ գործած մեղ-
քերս կարենամ ճանչնալ։ Սուրբք
և Սրբուհիք արքայութեան, խընդ-
դրեցէք վասն իմ, որպէս զի կա-
րենամ արժանաւորապէս ապաշ-
խարել. ամէն։

Ցաւ

Այս խորհրդոյս մէջ ցաւն ամենէն ա-
ւելի կարևորն է, վասն զի ինչպէս որ ա-
ռանց ջրոյ չի կրնար Մկրտութեան խոր-
հուրդն կատարուիլ, այսպէս առանց ցա-
ւոց՝ խոստովանութեան խորհուրդն օրի-
նաւոր չի կրնար ըլլալ։ Ո՜հ, քանի քանի
խոստովանութիւնք կ'ըլլուին հանապազօր
առանց ցաւոց և անվաւերաբար։ Որպէս զի
զգուշանանք այսպիսի խոստովանութիւն-
ներէ, հոս զղջման քանի մի ներգործու-
թիւնք կը դնենք զոր ըստ ջերմեռանդու-
թեանդ կրկնէ։

Ներգործութիւնք զղջման

Ա.

Վայ ինձ, ինչ ըրի մեղանչելովս. ահաւասիկ իմ հոգիս որ անմեղ եբրև զհրեշտակ երկնից արքայութեան կը փափագէր, Աստուծոյ բերկրանքն էր և խնդութիւն իւրոյ սրտին, ահաւասիկ զրկեալ 'ի շնորհաց, զարհուրանք և զզուանք արարածոց, դիւաց նման գարշելի է։ Եւ այն չի բաւեր. մեղքերս ինծի դէմ զինեցին զարդարն Դատաւոր, և կուտեցին վրաս թշուառութիւնքն. և դու եթէ առ ժամանակեայ զոք կը պատժես, ո՞վ Տէր, այո՛ արդար ես և քու դատաստանքդ ուղիղ են։ Սակայն 'ի վերքան զամենայն, մեղքն ինձ երկնից արքայութեան մուտքն արգելեց՝ որուն իբր Աստուծոյ որդւոց մին իրաւունք ունէի. դժոխքն

իմ տունս եղաւ, կրակն իմ ժառանգութիւնս, և 'ի յաւիտեան դիւաց հետ բնակութիւնս հաստատեցի։ Արդ ինչպէս կրցայ մեղանչել. ունայն հաճութեանց համար յայնքան բարւոյ զրկուեցայ. ինչ ըրի. ասկից աւելի կուրութիւն կրնա՞ր ըլլալ։ Ես ինծմէ կ'ամչնամ. բոլորով սրտիս կը զզջամ. կը խոստովանիմ մեղքերս. կ'ուզէի մեռնիլ քան եթէ մի անգամ ևեթ վշտացնել զքեզ, ո՛վ Տէր իմ. քու գթութեանդ կ'ապաւինիմ. թախանձագին գթութիւն, թողութիւն և ողորմութիւն՝ քեզմէ կը խնդրեմ։

Բ

Աստուած իմ, անբաւ բարի և սիրելի, կը խոստովանիմ որ մեղացս թիւն աւելի է քան զհերս գլխոյս և քան զաւազ ծովու. և

ինչպէս կրնայ ըլլալ որ անհուն ցաւ և վիշտ չի կրեմ սրտիս մէջ։ Մե՛ղանչեցի քու բարութեանդ դէմ՝ զոր պարտական էի սիրել. նախադասելով անարգ արարած մը, քիչ մը պատիւ, փոքր ինչ հաճոյք, քանի մի շահ։ Ո՛վ Տէր իմ, քու սիրոյդ համար ներէ՛ իմ մեղացս. ո՛վ բարութիւն և գեղեցկութիւն անբաւ, ինչպէս յանդգնեցայ զքեզ ատելու և արհամարհելու։ Կը ցաւիմ այս ամէն բանէրուս վրայ. ասկից վերջ բնաւ զքեզ չեմ ուզեր վշտացնել. հազար անգամ աւելի կ՚ընտրեմ կորսնցուցնել հարստութիւն, պատիւ, կեանք՝ քան թէ քեզի պէս բարի Աստուած մը վշտացնել։

Գ.

Ո՛վ ապերախտութիւն, չի կայ քեզի նման և չի կրնար ալ գտնուիլ։ Ո՛վ սիրելի Փրկիչ իմ, այս

է իմ քեզի մատուցած շնորհակալութիւնս՝ որ զիս յոչնչէ ստեղծեցիր։ Այսպէս ուրեմն քու անգին արիւնդ արհամարհեցի, որ իմ սիրոյս համար և իմ պատճառաւս այնքան վշտակրութեամբ թափեցիր։ Ո՛հ, ապերախտ եմ ես. ո՛վ իմ սրտիս հառաչանք պիտի պարգևէ և արտասուք աչացս՝ որ լամ հոգւոյս մահն և ցաւիմ Աստուծոյս ըրած գաւաճանութեանցը վրայ։ Ո՛վ ամենագթած Տէրդ իմ, գթա՛ վրաս. կը փափագիմ մեծապէս և կը ցանկամ այլ ևս զքեզ չվշտացնել։ Ո՛հ, կը վայելէր արդեօք ծնանիլ և Աստուծմէ այնքան երախտիք ստանալ զինքն այսպէս ծանր կերպով վշտացնելու համար։ Միթէ արդարութիւն է երմէ ձեռք, ոտք, աչք, ականջք և սիրտ մը ընդունիլ՝ իրեն դէմ գործածելու և զինքը վշտացնելու համար։ Ո՛վ դժբաղդ ձեռքեր, ո՛վ ապերախտ աչքեր, ո՛վ անօրէն

սիրտ, դուք եղաք պատճառ իմ Աստուծոյս դառն և վշտագին չարչարանաց:

Դ.

Մեծ և արդար դատաւոր կենդանեաց և մեռելոց, դու որ կը տեսնես և կը ճանչնաս ամէն բան՝ մինչև խակ սրտիս խորը. հնար է որ ես յանդգնիմ քու առջևդ ներկայանալ այսչափ անհաւատարիմ գտնուելէս ետքը: Վայ ինձ, քեզմէ չեմ կրնար փախչիլ, դու ամէն տեղ ես. և ոչ խակ կրնամ պահուըտիլ՝ վասն զի ամէն բան կը տեսնաս: Ո՛հ, մեթէ յետին աստիճանի անխոհեմ չեմ գտնուած, որ առանց ամբչնալու Աստուծոյս առջև անանկ մեղքեր գործած եմ, զորս ամենէն աւելի անարգ մարդկանց առջև գործելու կ'ամբչնայի. Աստուծոյս առջև՝ ուսկից Սերովբէք կը սարսին, և 'ի պատկառանաց՝ իրենց թևաք երեսին կը ծածկեն: Ո՛վ Աստուած իմ, գթա՛յիս. 'ի բոլոր սրտէ կը խոստովանիմ մեղքերս, միայն քու սիրոյդ համար:

Ո՛վ Աստուած իմ, կը չփոթիմ յերաւի յիշելով որ քու առջևդ այսքան նուաղ պատկառանաք կեցեր եմ, և զքեզ չվշտացնելու համար բիւրիցս ըրած խոստմունքս չեմ կատարած: Ո՛վ Աստուած իմ, եթէ երկրաւոր և հողեղէն մարդու մը առջև այսքան խոստմունք տուած ըլլայի, և նա տեսնար որ տուած խոստմունքներս չեմ կատարած, ի՞նչպէս կ'ամբչնայի և ինչպիսի՞ զղջումն կ'ունենայի: Իսկ զքեզ, ո՛վ Աստուած իմ, թէպէտ և ամէն օր կը վշտացնեմ, սակայն բանի մը տեղ չեմ դներ. ո՛հ, որքան բարի ես դու որ այսքան ժամանակ ինձ կը հանդուրժես: Ո՛վ Աստուած սրտի իմոյ, որովհետև ամենածանր մեղացս միջոց վրաս

դեթացիր, մի մերժեր զիս արդ որ կը զղջամ անօրէնութեանցս վրայ։

Ո՛վ Աստուած իմ, զքեզ վշտացընելու համար ունեցած ցաւս և մեղաց ատելութիւնն ինչպէս որ պէտք էր չըլլալուն համար, կը պաղատիմ 'ի քէն, ո՛վ Աստուած անհուն սրբութեան, ընդունէ իմս, և դու ինքնին քու Որդւոյդ սիրոյն համար իմ թերիս լեցուր։ Ընդունէ գարձեալ, ո՛վ Հայր երկնաւոր, իւր սուրբ կեանքը և ցաւալից մահը՝ զոր կը մատուցանեմ քեզ 'ի քաւութիւն իմ ամէն մեղաց։

Ներգործութիւն յոտաց

Ո՛վ Աստուած իմ, դու որ գթութեամբ ներեցիր մաքսաւորին, պոռնկաց, աւազակին և այլոց. դու որ այնքան բարութեամբ թեւերդ տարածելով դրկացդ մէջ ընդունեցար զանառակ որդին երբ քեզմէ թողութիւն խնդրեց. դու

ամենակարող Տէր, միթէ և զիս չեմ յորդորեր որ իրենց պէս քու անհուն ողորմութենէդ մեղաց թողութիւն յուսամ։ Ի քեզ յուսամ Աստուած իմ, կը յուսամ որ ինծի ալ պիտի ընես նոյն շնորհքն և նոյն ողորմութիւնը՝ վասն զի առաջադրած եմ մէյ մ'ալ չի մեղանչել։ Թէպէտ և թշուառ և անարժան եմ թողութեան, սակայն քու խօսքերուդ վրայ կը վստահանամ թէ մեղաւորին մահը չես հաճիր, այլ կ'ուզես որ դառնայ իւր չար ճամբէն և ապրի։ Ո՛հ Փրկիչ իմ, ինչպիսի յոյս ունիմ քու վրադ, որ իմ մեղաց համար այնքան չարչարուեցար՝ որպէս զի զիս փրկես։ Կը յուսամ որ զիս այս շնորհքես պիտի չի զրկես. և այնպէս հաստատուն կերպով կը հաւատամ ասոր վրայ, որ եթէ նոյն իսկ տեսնայի ինքզինքս որ 'ի դժոխս կը գահավիժիմ, այնու հանդերձ կը յուսայի 'ի քեզ՝ վասն զի իմ Աս-

տուածս ես, Ստեղծիչս, Փրկիչս, Պահպանիչ կենացս և հոգւոյս փրկութեան. հուսկ ուրեմն դու ես ամենայն ինչս, և այն՝ զոր մի միայն սիրտս սիրել կը ցանկայ:

Առաջադրութիւն

Քաջ միտքդ դիր որ եթէ հարկ ըլլայ՝ առաջադրութեանդ մէջ պէտք ես խոստանալ ամենայն կերպով դայթակղութեանց և մերձաւորիդ հասուցած ընդհատումդ դէմն առնուլ. այլոց իրերն և համբաւն հատուցանել. մեղաց մերձաւոր պատճառքն անձէդ հեռացընել և սովորական աղտերդ յաղթահարել: Մի՛ մոռնար դարձեալ քու սովորական պակասութեանդդ վրայ կրկին անգամ անդրադարձութիւն ընելու, և մանաւոր կերպով զանոնք ուղղել ջանա:

ԱՂՕԹՔ

Ո՛վ անիծեալ մեղք, կը դարձիմ և կը զղջիմ քեզմէ, և քեզի դէմ անհաշտ ատելութիւն մը սրտիս մէջ տիրած է. մահուանէ և դըժոխքէ աւելի զքեզ կ'ատեմ, և աւելի կ'ընտրեմ մեռնիլ՝ քան մեղանչել: Եւ եթէ մահուամբս իսկ կարենայի զքեզ ջնջել՝ զայն սիրով յանձն կ'առնուի, որպէս զի Աստուածս չի վշտանայ: Անիծեալ ըլլայ այն խորհուրդն՝ որ զքեզ իմ սրտիս մէջ մտուց. ասկից վերջն յաւիտեան զայն պիտի ատեմ և յաւելից պիտի փախչիմ. բայց դու ով Աստուածդ իմ, օգնէ՛ զիս և քու շնորհքդ հաստատէ՛ իմ առաջադրութիւնս:

Խոստովանութիւն

Այսպէս պատրաստուելէդ վերջն՝ հոս դրած աղօթքս ալ կրկնէ. յետոյ թէ ներքին և թէ արտաքին խոնարհութեամբ մերձեցիր խոստովանութեան։ Զօրէ հոն, և խոնարհեալ աչօք, զքահանայն ոչ իբրև մարդ՝ այլ ինքն ինքն Յիսուս Քրիստոս համարելով խաչակնքէ զքեզ, և ըսելով զԽոսովանիմ՝ զղջացեալ սրտիւ հատիկ հատիկ խոստովանէ մեղքերդ։ Դիտցիր թէ օրքան մեծ է զղջումդ՝ այնքան աւելի շնորհք կ'ընդունիս։ Մեղքերդ լմնալէն յետոյ ըսէ այս զղջման ձեւն։

Այս ամէն մեղացս, ես և անոնց վասն զորս չեմ գիտեր և սակայն խորհրդով, խօսքով և գործով կատարեր եմ, թէ իմ անձիս և թէ այլոց դէմ, բոլորով սրտիս կը զղջամ Աստուած իմ և քեզմէ թողութիւն կը խնդրեմ. և կ'առաջադրեմ քու սուրբ շնորհքդ ուղղել զանոնք. և կը խնդրեմ քեզմէ հայր իմ որ ինծի ապաշխարանք տաս և զիս արձակես։

ԱՂՕԹՔ

Ո՛վ ամենասուրբ և փառաւորեալ Կոյս Մարիամ, մայր Աստուծոյ և ապաւէն մեղաւորաց, դու ես մայր աղքատաց և որբոց. մայր գթութեան որ աշխարհիս ամենամեծ մեղաւորքն իսկ չես արհամարհեր, և միշտ պատրաստ ես ամենաթշուառքն ես մխիթարելու։ Ոչ ոք յարարածոց 'ի քեզ յուսալով կրցեր է անօգնական մնալ. անոր համար ես ալ 'ի քեզ կը դիմեմ մայր գթութեան, որպէս զի քու շնորհօքդ կարենամ արժանանալ խոստովանիլ։

Պահապան Հրեշտակդ իմ, դու ներկայ եղիր իմ խոստովանութեանս և աղօթէ ինծի համար. և դուք փաստաբանք իմ սուրբք և սրբուհիք, կը խնդրեմ ընդունեցէք Աստուածմէ իմ մեղացս թողութիւն, որպէս զի ներկայ խոստո-

վանութիւնս անանկ աղէկ կեր-
պով ըլլամ՝ իբր թէ կենացս յե-
տին խոստովանութիւնն ըլլար։

ԱԶԴ

Խոստովանութիւնդ լմննալէ յետոյ, ա-
պաշխարանքդ առաջ կամ վերջ պէտք է
որ համառօտիւ Աստուծոյ առ քեզ բրած
մեծ շնորհքն մտածես, և ապա սրտանց
շնորհակալ ըլլաս։

Շնորհակալութիւն

Աստուած իմ, օրհնէ զքեզ հո-
գիս, և այն ամենայն որ յիս կը
գտնուին օրհնեն քու սուրբ ա-
նունդ, վասն զի այս անգամ ալ
սպասեցիր որ ես ապաշխարեմ։
Կոյս Մարիամ, մայր Փրկչին խմոյ,
Հրեշտակք և սուրբք, շնորհակալ
կ'ըլլամ ձեզի։ Դուք ձեռնտու ե-
զիք ինծի որ ալ իմ Աստուածս չի
վշտացընեմ։

ԱՂՕԹՔ

Կը խնդրեմ քեզմէ Աստուած
իմ, քու ամենասուրբ Մօրդ և ա-
մենայն սրբոց արդեանցն համար,
որ այս իմ խոստովանութիւնս քեզ
հաճոյական ըլլայ. և այն ամէն բա-
նի մէջ որ մինչև ցարդ պակսեր եմ,
թէ այս, և թէ անցեալ խոստովա-
նութեանցս միջոց, թէ 'ի զղջման և
թէ 'ի պարզութեան, քու գթութ-
թեանդ համար կը պաղատիմ որ
ներես ամենուն. և օր մը զիս եր-
կնից արքայութեանդ արժանացը-
նես՝ ուր կը թագաւորես յաւի-
տեանս յաւիտենից։

ԱՅԼ ԱՂՕԹՔ

Ո՜վ Աստուած իմ, ինքզինքս բո-
լորովին զսրիկ տեսնելով 'ի բարի
գործոց, չի գիտնալով թէ ինչպէս
քաւեմ իմ ծանր մեղքերս, քեզ

կ'ընծայեմ Որդւոյդ Յիսուսի արդիւնքն՝ որք անբաւական մեծ են իմ և բոլոր ստեղծուածոց ապերախտութիւններէն։ Ո՛վ Հայրս յաւիտենական, քեզ կը մատուցանեմ Փրկչին իմոյ քու միածին Որդւոյդ փրկութեանս գինը՝ որ խաչափայտին վրայ մեռնելով ինծի համար ստացաւ։

Տէր իմ, տես Քրիստոսիդ երեսն, և նայէ իւր մարմնոյն վրան որ 'ի խորանին կեցեր է, և անդին արիւնն որ 'ի բաժակին է։ Թէպէտ և չի խօսիր, սակայն այնքան բերան ունի՝ որքան վէրք. և արեան կաթիլքն որք կը հեղանին՝ առաւել քան զձայն առ քեզ կ'աղաղակեն։ Լսէ ուրեմն քու սիրեցեալ Որդւոյդ արեան ձայնին՝ որ կ'աղօթէ առ քեզ աղաղակելով խորանին վրայէն երբ 'ի խաչէն որ 'ի Գողգոթա. Հայր բոլոր դոցա զի ոչ գիտեն զինչ գործեն. նա ինքն խաղաղութիւն և գթութիւն կը

խնդրէ մեզ թշուառ մեղաւորացս համար՝ որ զինքն մեր մեղքք խաչեցինք։

Թէպէտև իմ անթիւ մեղացս վերայ աչքերս յորդահոս արտասուք չեն հեղանիր, սակայն սրբոյն կը վկայեմ թէ մեղայ մեծապէս քեզի դէմ. տես Աստուած իմ քու Որդւոյդ արեան կաթիլներն որ 'ի կեանս և 'ի մահու իմ մեղացս համար թափեց. այն արեան կաթիլներուն զիս ալ մասնակցեց՝ երբ իմ մեղքերս իր վրան առաւ։ Թողութիւն շնորհէ ուրեմն Աստուած իմ հպարտութեանս և ինափառութեանս՝ 'ի սէր խոնարհութեան ամենասիրելի Որդւոյդ։ Անոր սիրոյն և գթութեան համար թող իմ ապերախտութիւնքս. և իւր աղքատութեան համար իմ ագահութեանցս թողութիւն շնորհէ։ Այն կուսական մարմնոյն և անդին արեանն համար՝ թող իմ նեղքին և արտաքին անմաքրութիւնքս։

Այն քաղցին և ծարաւին համար՝ զոր իմ Փրկիչս յանապատի և 'ի խաչին և գրեթէ բոլոր իւր կենաց մէջ կրեց՝ թողութիւն շնորհէ իմ անժուժկալութեանցս և որկրամոլութեանս։ Այս անարատ գաւին քաղցրութեան և գթութեան համար՝ թող իմ ցասմանցս, ընդդիմութեանցս, վրէժխնդրութեանցս, թշնամութեանցս։ Եւ մեր փրկութեան ունեցած եռանդեան համար՝ ներէ իմ հեղգութեանցս և անփութութեանցս։ Հուսկ ուրեմն իմ Փրկչիս ունեցած անթիւ արժանեաց և կատարելութեանցն համար՝ ներէ իմ առ քեզ տուած խոցերուս, պակասութեանցս և անկատարութեանցս։

Եւ յապաշխարութիւն և 'ի քաւութիւն այնքան մեղացս որոցմով ծանրացած եմ, սիրով պիտի կըրեմ, եթէ քեզ հաճոյ է, ամենայն վիշտ, տհաճութիւն, նախատինք, արհամարհանք, կորուստ, ցաւ, հիւանդութիւն, դժկամակութիւն, և զայն ամենայն որ կրնայ ինձ հանդիպիլ՝ վիշտ և նեղութիւն, եթէ ուղղակի քեզմէ գալով և թէ այլոց ձեռաքը ըստ նախախնամութեան աստուածային կամացդ՝ ամենուն ալ կը համակերպիմ մինչև կենացս վերջին շունչը. գիտնալով որ իմ կործանմանս համար դուք բան մը չեն կարդադրեր. այլ զիս ստեղծեր ես փրկելու համար, Աստուած իմ և Տէր իմ. ամէն։

ՈՒՐԻՇ ԴԻՒՐԱԳՈՅՆ ԿԵՐՊ

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԵԱՆ

Մասնաւորապէս անոնց համար որ ստէպ կը խոստովանին

Աղօթք պատրաստութեան

Ո՛վ Յիսուս իմ, օրհնեալ և փառաւորեալ ըլլայ անպատմելի բարութիւնդ՝ որով սահմաններ և կարգադրեր ես Եկեղեցւոյդ մէջ թողութեան և գթութեան խորհուրդն։

Կը հաւատամ, ո՛վ Յիսուս իմ, որ դուն ես անոր հեղինակն. կ'օրհնեմ և կը գովեմ անպատմելի սէրդ նոյն խորհրդոյն մէջ. կը հիանամ առատաձեռնութեանդ որով ամենեւին սահման մը չես դրած ոչ յա-

ճախութեան և ոչ մեղացս ծանրութեան. շնորհակալ կ'ըլլամ'ի բոլոր սրտէ։ Ո՛վ Աստուած իմ, ի՞նչ պիտի ըլլայի ես եթէ ինծի համար այս փրկական աւազանը չի բանայիր. վասն զի ստէպ ստէպ ծանր կերպով կ'իյնամ ես, և յաճախ նոյն մեղաց մէջ կը գայթակղիմ։ Ո՛վ ամենաքաղցր Յիսուս, շնորհէ ինձ ուրեմն որ պէտք եղած ամենայն կարեւոր պատրաստութեամբ քեզ մերձենամ, որպէս զի չի պղծեմ քու աստուածային արիւնդ. այլ կամացդ համաձայն զայն ընդունելով՝ մաքրեմ հոգիս և փառաւորեմ քու չարչարանացդ և սիրոյդ արդիւնքներն։ Պարգևէ ուրեմն ինծի այս կրկին շնորհքներս։ Այն աստուածային լուսոյ աղբիւրէն՝ որ քու ամենասուրբ Սիրտդ է, մտացս մէջ պայծառ ճառագայթ մ'արձակէ, որ յայտնէ ինծի ամենայն պակասութիւնքս և ամբարշտութիւնքս։ Կը ճանչնամ

Աստուած իմ թէ ոբքան զքեզ վըշ-
տացուցի, քանի՛ քանի եղանակօք
և ոբքան ծանրութեամբ. դու ին-
քին ինձ ճանչցուր այն խորհուրդ-
ներն, խօսքերն, գործերն, զանցա-
ռութիւնքն և զայն ամենայն որոց-
մով զհոգիս արատաւորեցի և քու
աստուածային կամքդ թշնամանե-
ցի։ Ո՛վ Յիսուս իմ, այս քու լու-
սավդ սրտիս մէջ անկեղծ և խորին
ցաւ մը մեղացս վրայ տիրէ։ Աս-
տուած իմ, առանց քեզ մեղանչեցի՝
սակայն չեմ ուզեր առանց քեզի
անոնց վրայ լալ։ Ուրեմն շարժէ
զօրաւոր կերպով քու շնորհօքդ
իմ սիրտս, որպէս զի փղձկի և
հաստատապէս առաջադրէ ա՛լ մէյ
մ՚ալ չի մեղանչել ասկից վերջը։
Ամենաքաղցր Յիսուս, չեմ արժա-
նի այս շնորհաց՝ սակայն կը յու-
սամ. իմ մեղքերէս աւելի ուժգին
կ՚աղաղակեն առ քեզ ամենա-
սուրբ Սրտիդ ձայնքն. և որովհե-
տև ինծի համար պատրաստած ես

այս փրկարար ապաշխարութիւնն,
կը յուսամ թէ պիտի շնորհես նաև
քու փառացդ և փրկութեանս հա-
մար վայելել անոր արդիւնքներն.
ամէն։

Ո՛վ մայր իմ Մարիամ, ամենօրհ-
նեալ Կոյս, այն ցաւոյն համար որ
խաչին ատորոտը մեր մեղաց պատ-
ճառաւ կրեցիր, իմ փրկութեանս
ունեցած փափագանացդ համար,
խնդրէ Յիսուսէն որ ճանչնամ մեղ-
քերս և զանոնք գործելուս վրայ
զղջամ կատարելապէս։

Պահապան Հրեշտակդ իմ, դու
որ վկայ ես իմ գործոցս, խնդրէ
արդ Յիսուսէն այն շնորհքն որ
կարենամ զանոնք ճանչցալ ինչպէս
որ պէտք է, և՝ ի բոլորս սրտէ զղ-
ջալ անոնց վրայ. ամէն։

Հայր մեր. Ողջոյն. Փառք Հօր։

Քնեցուցիչ

Անոնք որ յաճախ կը խոստովանին՝ մեծաւ դիւրութեամբ կրնան խղճմտանաց քննութիւնն ընել։ Ցիչէ համառօտիւ առ Աստուած, առ ընկերդ, առ անձդ ունեցած պարտքերդ, խօսքերդ, գործերդ. խղճմտանքդ և փորձն քեզ կը վկայեն թէ յորս պակսեր ես։

Առ Աստուած։ Քննէ զքեզ աղօթից մէջ... 'ի Պատարագի... Խոստովանութեան և Հաղորդութեան խորհրդոց մէջ... ծնեալը սրբացնելուդ... մաքրութիւն դիտման...

Առ ընկերդ։ Ցիչէ մեծաւորքդ... հասակակիցքդ... ստորնադասքդ... սէր... համբերութիւն... խոնարհութիւն... վիճակիդ պարտքերն, տէր ես կամ ծառայ, ամուսնացեալ կամ ազատ։

Առ անձնդ։ Ո՛ր կերպդ չէս սանձահարած... անմաքրութիւն... ծուլութիւն... հպարտութիւն... փառասիրութիւն։

Ցաւ

Երբ քննութիւնդ ընենաս (որուն քիչ ժամանակ կը պահանջուի), և իմանաս թէ որոնց մէջ պակսեր ես, յիշէ նաև անցեալ կենացդ մէջ գործած մեծամեծ մեղքերդ քանի մի հատն. և այժմեան մեղացդ հետ միացնելով, նայէ որ յառաջ քան զլաւ մը զղջալ՝ խոստովանահօրդ չի ներկայանաս։ Իրաւ է որ արձակում առնելէդ առաջ որ և իցէ միջոց ալ ըրած զղջումդ նորէն բաւական է, սակայն խոստովանարանի մէջ մեղքերդ յայտնելէ յետոյ, մինչև արձակման ժամանակն խիստ նեղ է՝ յորում կարենաս հանգստեամբ սրտի պէտք եղած զղջումն ընել։ Ուրեմն քննութիւն ընելէդ յետոյ անմիջապէս նաև զղջում ալ ըրէ՝ որ այսու խոստովանութիւնդ աւելի ապահով կ'ըլլայ։ Եւ որպէս զի կատարելապէս կարենաս զղջալ՝ երկու բան կարևոր է. նախ և առաջ քննէ պարտականութիւնդ որոնց համար պարտական ես զղջալ. ապա ամենայն հան-

դարտուԹեամբ ղՁՈՆՈՒԴ ըրէ, կրկնելով 'ի սրտէ զայն ամենայն՝ զորս ՀՐԹամբք կ'արտասանես:

Պատճառքդ կրնաս այսպէս քննել.

Ա.հաւասիկ Ա.ստուած իմ, ես մեղանչելով դԺոխոց արԺանացայ... այո՛. իմացաւ հոգի իմ զայն զոր գործեցիր... ցանկացար դԸԺոխոց և պէս պէս տանջանաց... Ո՛վ Ա.ստուած իմ, ես ի՞նչ գործեցի. ո՛հ, ո՛վ ինձ արտասուք պիտի չնորհէ որ լամ իմ կործանումս. միԹէ պիտի չատեմ այս զզուելի մեղքն որ իմ կործանմանս առիԹ և պատճառ եղաւ:

Հոս ջանա ներդրուստ զարշիլ 'ի մեղաց, և յառաջ վարի խորհրդածուԹիւնդդ:

Եւ ո՞րքան բարիք չկորանցուցի ես մեղաք... Ա.ստուծոյ համար ըստեղծուած էի... իւր ամենագեղեցիկ արքայուԹեանը պիտի բարձրանայի՝ անբաւ բարիքներ վայելելու... պիտի անմահանայի...

արդ այս ամէն բաներէս հեռացայ մեղաքս... զրկուեցայ Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ երանական տեսուԹենէ... այն ամենածանր մեղաք անարԺան ըրի ինքզինքս Յիսուսի ամենասուրբ Մարգարիտն, սիրեցեալ վերքերն, քաղցր Սիրան տեսնելու: Հրաժարեցայ ամենասուրբ մարս Ա.ստուածածնի քաղցր ընկերուԹենէն... Պահապան Հրեշտակներէս, Սուրբերէն որք իմ եղբարքս և բարեկամքս են... անգուԹ գտնուած եմ ես ինձի՝ ցրուելով հոգւոյս և մարմնոյս ամենայն բարիքն... Ո՛հ, անզուգական կորուստ. ո՛վ Յիսուս իմ, ԹողուԹիւն. գԹուԹիւն. կ'ատեմ 'ի բոլոր սրտէ այն ամէն գործերս... այն խոսքերս... այն կերքերս որք ինձի այսպիսի մեծ չարիք մը հասուցին:

Եւ 'ի վեր քան զամենայն Ա.ստուած զքեզ ես վշտացուցի... գու որ զիս յոչնչէ ստեղծեցիր...

դու որ զիս մինչև ցարդ պահեցիր և պաշտպանեցիր... դու որ իմ փրկութեանս համար աշխարհք եկար... և ես կրցայ այնպէս իմ բարերարս, իմ բարեկամս, իմ հայրս վիրաւորել... իմ փրկիչս, իմ Յիսուս. ո՜հ, ինչ գործեցի... ով անիծեալ մեղք... Եւ առանց իսկ այս ամէն բաներու, միթէ դու Յիսուս իմ, անբաւ բարիք մը չէս... անբաւ գեղեցկութիւն, անբաւ սէր... և ես ոչ միայն այս ամէն բան մոռցայ, այլ և անբաւ բարութիւնդ, անբաւ սէրդ արհամարհեցի։ Հազարաւոր սիրոք, հազարաւոր կեանք ոչինչ պիտի համարուէին եթէ կարենային զայն ամենայն քեզ զոհել... և ես այսպիսի թշուառ սիրտ մը իսկ քեզ զացայ... ներէ՛ ինձ անբաւ բարութիւն՝ արհամարհեալ յինէն, ներէ՛ ինձ սէր անբաւ՝ անարգեալ յինէն... Ո՜հ, ո՞ւր էր թէ մեղանչած չըլլայի. ո՜հ, գէթ գործած մեղքերս կարենայի

արեամբս ջնջել... գոնէա բոլոր սրտանց ապաշխարելու համար կ'առաջադրեմ Տէր իմ։

Յետ մտածելոյ այս ամէն ձրիաստուերիւնքս և 'ի ներքս բարեանցելոյ՝ կրկին սրտանց հեռանալս.

Կը զղջամ և կը ցաւիմ Աստուած իմ, 'ի բոլոր սրտէ ամենայն մեղացս վրայ։ Կ'ատեմ զանոնք և կ'արհամարհեմ, վասն զի մեղանչելովս քու ցասմանդ արժանացիր եմ, և գժոխոց յաւիտենական պատիժքն իմ մասս և բաժինս եղած են. կը զղջամ, վասն զի մեղքս արքայութեան յաւիտենական վայելքն կորսնցուցի. կը զղջամ, վասն զի անախորժ գործ մ'ըրի քեզի դէմ, Փրկիչ իմ, Ստեղծիչ իմ և Հայր իմ։ և 'ի վեր քան զամենայն կը զղջամ դարձեալ, վասն զի զքեզ անբաւ բարեդ վշտացուցի՝ որ արժանի ես սիրուելու ամէն սրտերէ։ Կը խնդրեմ՝ ներէ՛ ինձի քու անբաւ բարութեանդ, Յիսուսի

Քրիստոսի արդեանց, արտասուաց, արեանն համար և ես կ'առաջադրեմ այսօր սրտիս ամենայն անկեղծութեամբն, յուսալով աստուածային օգնականութեանդ, որ ալ ապագային մէջ պիտի չի մեղանչեմ. մանաւանդ պիտի փախչիմ մեղաց ամենայն մերձաւոր պատճառներէն:

Խոստովանութիւն

Յետ այսպէս զղջալու, թէ և իրօք ըզգայապէս ներքուստ զղջումն չի զգաս սակայն կամօք ամենայն հաստատուն առաջադրութիւն դրեր ես, մերձեցիր խոստովանահօրդ՝ իբր Յիսուսիդ: Պարզութեամբ խոստովանէ ամէն մեղքերդ՝ սկսելով ծանր մեղքերէդ, որպէս զի ամենայն դաղթես. և ուր որ սատանան կը ջանայ քեզ ծանկել տալ ամօթալի մեղք մը, հոն աղաչէ խոստովանահօրդ որ քեզ օգնէ. յետոյ սիրով մտիկ ըրէ տուած խրատուցն, և ընդունելով ապաշխարանքը՝ բեկեալ սրտիս սպասէ արձակումդ ընդունելու, համարելով թէ նոյն ինքն Յիսուս՝ Քահանային միջնորդութեամբ զքեզ իւր անգին արեամբ կը սրբէ:

Խոստովանութիւնէն վերջ

Արձակում ընդունելէդ վերջ, ամիսվէ ինքզինքդ Աստուծոյ առջև, և շատ մը նախ ապաշխարանքդ ըսէ՝ եթէ կարենաս. ապա գոհացիր Աստուծոյ անկեղծօրէն՝ այսպէս.

Ահաւասիկ Յիսուս իմ, վերջապէս իմ մեղքերէս մերկացայ. ո՞րքան բարի ես, Աստուած իմ, որ ինձ այսպէս սիրով կը ներես: Դուք ըստ քումդ արդարութեան կարող էիր պատժել զիս ամէն տեսակ պատժօք, և մինչև գժոխոց խորը կործանել: Ընդհակառակն հաճեցար գթալ իմ վրաս և զիս ապաշխարութեան յորդորել, և աստուածային արեանդ արդիւնքն իմ վրաս ցուցնել: Բիւրեցս օրհ-

նեմ՝ ըլլաս յամենայն արարածոց։ Օրհնեն զքեզ երկնից Հրեշտակ-ներն, գոհութիւն մատուցանեն քեզի ամենայն Սուրբք, և դու ինքն ընդունիս իմ կողմանէս ամենասուրբ Սրտիդ յարգանքն՝ իբր նշան կատարեալ երախտագիտութեան։ Իբրև զղջացեալ Պետրոս և Մագդա-լենացի, եթէ ոչ արեամբս, գոնեա անոնց նման կը ցանկամ արտասուօք լուալ իմ անթիւ մեղքերս։ Եւ դու աւելցուր շնորհք-ներդ շնորհաց վրայ, և պարգևէ ինծի որ ա՛լ գոնեա ասկից վերջ մէյ մ՚ալ չելնեմ այն մեղաց մէջ՝ յորոց արդ քու գթութեամբդ մաքրուեցայ։ Քու ներկայութեանդ առջև կը նորոգեմ դարձեալ առնոց վրայ ունեցած մեծ ցաւս, և նոյն ցաւոյս հետ միանգամայն հաստատուն առաջադրութիւնս այլ ոչ ևս մեղանչելու։ Բայց դու Աստուած իմ, Հայր իմ, Փրկիչ իմ, զօրացո՛ զիս քու շնորհօքդ, որպէս

զի ամենայն հաւատարմութեամբ կարենամ հաստատուն պահել առաջադրութիւնքս։

Աղօթք Ս. Լիկուորեայ

Սիրեցեալդ իմ Յիսուս, ո՛րքան քեզ պարտական եմ. քու արեանդ արդեամբ կը յուսամ որ այսօր իմ մեղքերս քաւուեցան. մեծապէս քեզ շնորհակալ եմ. կը յուսամ յերկինս գալ՝ միշտ քու գթութիւնդ օրհնելու և փառաւորելու համար։ Աստուած իմ, եթէ մինչև հիմա զքեզ այնքան անգամ կորանցուցի, ա՛լ չեմ ուզեր կորսընցունել. այսօրուընէ սկսեալ կ՚ուզեմ կեանքս փոխել։ Արժանի ես դու իմ ամբողջական սիրոյս. ես կ՚ուզեմ սիրել զքեզ սաւգիս. չեմ ուզեր մէյ մ՚ալ զիս քեզմէ բաժնուած տեսնել։ Արդէն իսկ խոստացած եմ քեզ, և հիմա նորէն կը խոստանամ աւելի մեռնիլ,

քան մէյ մ'ալ զքեզ վշտացնել։ Կը խոստանամ դարձեալ փախչիլ յաւելից, ուրիշ անգամ՝ նորէն մեղաց մէջ չէյնալու համար։ Բայց Յիսուս իմ, դու գիտես իմ տկարութիւնս. տուր ինծի շնորհք մինչև ցմահ հաւատարիմ մնալու։ Սրբուհի Մարիամ օգնէ ինծի. դու ես մայր յարատեւութեան. 'ի քեզ դրած եմ իմ յոյսս։

ԿՐԹՈՒԹԻՒՆ

Ս. ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ

Խնդրուածք

Ո՛վ Յիսուս իմ, տուր սրտիս ստոյգ զղջման զգացումն. հոգւոյս՝ ստոյգ ցաւ ապաշխարանաց. աչացս՝ աղբիւր մշտնջենաւոր արտասուաց, որպէս զի յառաջ քան զներկայանալս քու աչացդ, լամ դառնապէս քեզի դէմ գործած մեղացս վրայ։

Խոնարհութիւն և ցաւ

Եւ ո՞վ եմ ես որ առ քեզ կը մերձենամ Որդի Աստուծոյ և Փրկիչ իմ։ Քու առջևդ հրեշտակք և

սերովբէք կը դողան, և ես հողս և մոխիր, կը յանդգնիմ ղբեզ իմ սիրաս հրաւիրելու։ Ո՛վ հուր անշէջանելի Սրտին Յիսուսի իմոյ, բորբոքէ՛ի սրտիս կենդանի ղջնումմը և ցաւ ղբեզ վշտացնելուս, հըրակիզէ և մոխիր դարձուր երկրաւոր ցանկութիւնքս, բժշկէ վէրքերս, մաքրէ սիրաս և թող մեղքերս։ Յիսուս Որդի Աստուծոյ, հաշտեցո՛ զիս երկնաւոր Հօրդ հետ, և վերաւորեալ Սրտիդ սիրով զիս իրեն նուիրէ, և իրեն հետ միացո զիս ալէնդ քեզ՝ մինչև ցյաւիտեան։ Հոգիս բոլորովին աղքատ և ապականած է. մաքրէ զայն կ՚աղաչեմ և քու արդեամբդ ծածկէ։ Եւ այն աստուածային և սիրաղեղ հաճութեամբ, որով դու ինքն գառն անարատ կը մատուցանես զանձնդ այս խորհրդոյս մէջ Հօրն երկնաւորի, իմ և համօրէն մարդկութեան փրկութեան համար, նայէ իմ վրաս ալ գթած աչօք։ Շնորհէ

Յիսուս իմ, որ քու Սրտիդ սրբութիւնն իմ ապերախտութեանցս դառնութեանց տեղ փոխանակէ. քու Սրտիդ հարստութիւնն և սէրը՝ ընդ իմ աղքատութիւնս յամենայն բարեաց. և առանց քեզի միշտ նոյն աղքատութեան մէջ զիս կը տեսնամ, ո՛վ միակ, ճշմարիտ և գերազանց Բարիդ իմ։

Երանդռեն փափաք

Ո՛վ Յիսուս իմ, եթէ դու միայն ես իմ փրկութիւնս, և այս քու ստեղծած և քու սիրովդ փրկուած հոգւոյս ամենայն բարիքն, ապա ե՞րբ իմ սիրաս պիտի դաս. ե՞րբ պիտի ուրախացնես զիս բոլորովին քեզմով. ե՞րբ դու ինքն քեզմով զիս պիտի յագեցնես։ Ե՛կ, ե՛կ ո՛վ երկնաւոր Թագաւոր, ե՛կ ո՛վ սիրելեալ Յիսուս։ Քու բարութեամբդ ըզդ ցուցո՛ր ինծի քու գեղեցիկ դէմքդ և ըսէ հոգւոյս. Ես որ առ

քեզ կու դամ՝ քու փրկութիւնդ եմ և կ'ուզեմ փրկել զքեզ։ Ով երջանիկ վայրկեան, յորում պիտի ընդունիմ զՅիսուսս զաղբիւրն ամենայն շնորհաց։ Նոյն իսկ այս գթութիւնդ զքեզ կը սիրել եմ սխալանաց, հաճիլ սրտիս բարի փափագանաց, և յաջեցնել զիս քու երջանիկ տեսութեամբդ։ Մարաւի է հոգիս իւր Աստուծոյն հետ միանալու. արդ ե՞րբ պիտի հասնի ինծի ալ այն վայրկեանն՝ յորում քու առջևդ ներկայանամ Փրկիչ իմ երկնաւոր։

Վստահութիւն

Սակայն, ով Աստուած իմ, ի՞նչ արտաքոյ կարգի բան կը խնդրեմ քեզմէ. յիրաւի քեզմէ կը խնդրեմ որ դու սիրես զայն՝ որ ըզքեզ չի սիրեր. տեսնուիս անոր՝ որ զքեզ չի կանչեր. բժշկես զայն՝ որ կ'ուզէ հիւանդագին մնալ։ Այս

է ահաւասիկ, Տէր իմ, թշուառութիւնս. սակայն դու կ'ըսես թէ մեղաւորաց համար միայն յաշխարհ եկած ես։ Ահաւասիկ մին որ քու առջևդ կեցած է. դուն արդ զայս զոր կը փնտռես։ Բժշկէ զիս Տէր իմ, և կը բժշկուիմ. փրկէ՛ զիս և կը փրկուիմ։ Մի նայիր իմ անթիւ մեղացս՝ այլ քու անբաւ արեանդ որ ինծի համար թափեցիր։ Քու ամենամեծ գթութիւնդ՝ իմ ահաւոր անօրէնութիւններէս աւելի վրաս փայլի. այսպէսի մեծ թշուառ մեղաւորի մը վրայ՝ քու ողորմութիւնդ աւելի մեծ կ'երևայ. այսպէս կը յուսամ. եղիցի, եղիցի։

(300 օրուան ներողութիւն կը տրուի այս իշրաքանչիւր անգամ բրողը և յիսակտար ամիս մը բրողը)։

Սէր և նուիրումն

Ո՛վ Փրկիչ իմ, պարտական էի անբաւ կերպով սիրել զքեզ, և ա՜հա ամենևին չեմ սիրեր. պէտք էր որ սրտիս ամենամեծ բերկրանքն ըլլայիր, և սակայն և ոչ իսկ կը յանդգնիմ ըսելու թէ ես Սակայն պտուղ մը չի կրնար ձևանալ առանց ազդեցութեան ամենատուրբ հոգւոյդ և ներշնչմանց սիրոյդ. գթա յիս ուրեմն, ընդունէ զիս սիրոյդ բազկաց մէջ, և տարբուր զիս սուրբ հոգւոյդ բոցով: Ահա՜ սասկ այս իմ զգայարանքներս, իմ կարողութիւնքս, իմ հոգիս. զամենքն ալ քեզ կ'ընծայեմ և քեզ մշանջենաւոր նուէր կը մատուցանեմ, որպէս զի միայն քուկդ ըլլամ մինչև ցյաւիտեան: Որդ ուրեմն Յիսուս իմ, սիրալից փնտռութեամբ մը բաց առ իս հեզկ Սիրտդ. և մտցուր զիս քու քաղցրութեանդ լիութեան մէջ: Ես լի սրբութիւն և ամենայն ոգւովս քեզ կը փափագիմ, միանգամայն կը պաղատիմ առ քեզ որ դու ալ զիս բոլորովին քուկդ ընես. ստուգիւ և համարձակ կերպով կարենամ ըսել. Ո՛վ Աստուած իմ, դու իմն ես, Աստուած սրտի իմոյ. այս սիրոս քուկդ է, ես ալ բոլորովին քուկդ եմ: Ո՛վ կենդանի սէր, կեաց յիս, և ես մեռնիմ՝ի յիս՝ որպէս զի միայն՝ի քեզ կեցեց Աստուած իմ, Աստուած սրտի իմոյ, բաժին իմ, Աստուած իմ՝ի յաւիտեան:

Առ ամենատուրբ Կոյսն

Ո՛վ ամենասուրբ Կոյս, սպիտակափայլ քան զշուշանս, յետ Աստուծոյ յոյսդ իմ ամենամեծ, ո՛վ ամենաբաղցր Մարիամ, բարեխօսէ ինծի համար առ սիրեցեալ Որդիդ: Զիս եր առջևը տար, պաշտ-

պանէ իմ դատս. խօսք մը միայն ըսէ սրպէս զի դեռ՝ յիս։ Ի քեզ է միակ յոյս իմ, յետ իմոյ Յիսուսիս. ցոյց ինձ թէ իմ սիրելեալ մայրս ես. շնորհէ ինձ որ սիրոյ և շնորհաց դպրոցին մէջ, որ է սուրբ Հաղորդութիւնը, սորուիմ քու երկնային Որդիէդ զինքը սիրել և իրեն ծառայել։ Կարող ես դու միածին Որդիէդ ինծի համար ամենայն շնորհք ստանալ. խնամէ ուրեմն, ով հաւատարիմ Մայր, այսպիսի թշուառ և աղքատ որդւոյդ միոյն պիտոյքն։ Քու միջնորդութեամբդ Յիսուս զիս ընդունի, բոլորովին զիս իրեն ընէ, իրմով զիս սնուցանէ, և իւր աստուածային սիրալիր կամաց համեմատ իմ վրաս ինչ որ կ'ուզէ կարգադրէ, և ես իրեն չարչարանաց, Սրտին և սուրբ սիրոյն պտուղ մ'ըլլամ. ամէն։

Այս ամէն աղօթքներդ ընդէր ցեղոյ, ամենայն անիրաւածուրբեանք

ընդունի զՅիսուս, և նոյնպէս կատարէ գոհութեանց աղօթքներն, խունարհութեան, սիրոյ և երախտագիտութեան զգացմանք։

ԳՈՀՈՒԹԻՒՆ

Զկնի Հաղորդութեան

Փափագ

Հոգի Քրիստոսի սրբէ զիս. մարմին Քրիստոսի փրկէ զիս. արիւն Քրիստոսի արբո զիս. աղբիւր կողին Քրիստոսի լուա զիս. քիրան Քրիստոսի կենագործէ զիս. չարչարանք Քրիստոսի զօրացո զիս։ Մարգասէր Յիսուս լսէ՛ ինձ. վիրացդ մէջ ամրացո զիս, և զիս երեսէդ մի մերժեր. չարին նենգութենէն պահէ զիս. 'ի ժամ մահուանս կանչէ զիս առ քեզ և ընդ

դունէ զիս. սուրբ հրեշտակացդ հետ մէկտեղ օրհնեմ զքեզ յաւիտեանս. ամէն:

Լողոք

Ո՛վ անսահման Սէր, մերկացո՛ անդամ մը զիս ինծմէ որպէս զի բոլորովին քուկդ ըլլամ: Ո՛վ հուր յաւիտենական որ զմիտս կը լուսաւորես. ո՛վ սէր անշէջ որ զսիրտս կը ջեռուցանես, սպառէ հոգւովդ սրտիս մէջ եղած այն ամէն բաներն որ ինձ ՀԱՍԱԿԱՐՔ են և քեզ անհաճոյք: Կը փափագէի, Յիսուս իմ, այնպէս մը քեզ շնորհակալ ըլլալ՝ ինչպէս որ կը վայելէ:

Պաղատանք և գովասանք

Կը պաշտեմ զքեզ, ո՛վ Յիսուս իմ, ո՛վ Փրկիչ իմ, ո՛վ Աստուած իմ: Ո՛վ Աստուած, Աստուած իմ. ո՜հ, եթէ գու իմս ըլլաս՝ ինձ բան մը չի պակսիր. եթէ ես քուկդ եմ, ամենայնիկ եմ. և 'ի քեզ Փրկիչ իմ պիտի փառաւորուիմ յաւիտեան: Բայց ես չեմ գիտեր օրհնել զքեզ, չեմ գիտեր քեզ շնորհակալ ըլլալ: Աստուած իմ, իմ տեղս օրհնեն զքեզ քու անհամեմատ սրբութիւնդ, պաշտելի մարդկութիւնդ, ամենասուրբ հոգիդ, մեղրաբուղխ Սիրտդ՝ որ 'ի սիրոյ թողուց զինքը խոցուիլ խաչին վրայ: Այդ քու ամենահեզ և ամենօրհնեալ Սիրտդ գովէ զքեզ, որոյ մէջ մանաւանդ համար տեղ մը ինծի ՀԱՄԱՐ բացաւ. և հուսկ ուրեմն իմ սիրտս ալ անոր մէջ հանդչի: Խնդա՛ 'ի քեզ քու ամենաքաղցր Սիրտդ, որ այս աքսորանացս մէջ միակ ապաւէնս է, և ծարաւի է միշտ զիս ալ առ ինքն ձգելու: Խնդա՛ դարձեալ 'ի քեզ փոխան իմ տեղս, քու հրաշափառ Մօրդ Մարիամու արժանաւոր Սիրան և փառաւորեալ հո-

գին, զոր դու ինքն դարձեալ իմ փրկութեանս համար զայն քեզի մայր ընտրեցիր, ուղելով որ իւր մայրական գթութիւնը միշտ ինծի համար պատրաստ և ապահով ըլլայ։

Խնդիր

Ո՛վ աստուածային Սիրտ Յիսուսին իմոյ, կը պաշտեմ զքեզ հոգւոյս կարողութեամբքն՝ զոր մը տածմանցս, խօսքերուս, գործոցս և էութեանս հետ միատեղ քեզ կը նուիրեմ. և կը ցանկամ մատուցանել քեզ միևնոյն պաշտաման, սիրոյ և փառաց ներգործութիւնքը՝ ինչ որ դու քու երկնաւոր Հօրդ կը մատուցանես։

Աղէ դու եղիր քաւիչ մեղացս, պաշտպան կենացս, տեղի և ապաւէն 'ի Ժամու մահուանս։

Այն վշտաց և դառնութեանց համար որ բոլոր քու մահացու

կենացդ ընթացքց մէջ կրեցիր, ինդրեմ շնորհէ ինծի Ճշմարիտ և կատարեալ զղջումն մեղացս, վերջնական յարատևութիւն քու շնորհացդ մէջ, արհամարհութիւն բոլոր երևելի իրաց, և եռանդուն փափագ յաւիտենական փառաց՝ կենդանի վստահութեամբ հասնելու անոնց՝ քու անհուն շնորհացդ արդեամբ։

Ո՛վ սիրեցեալ Սիրտ Յիսուսիս, ես միայն ինծի համար չեմ մատուցաներ այս խոնարհ պաղատանքս, այլ այն ամէնուն համար որք ինծի հետ զքեզ կը մեծարեն։ Ընդունէ զանոնք, և քու անհուն գթութեամբդ կատարէ զամէնքն, մանաւանդ զԹա՛ մեզմէ այն անձին՝ որ յառաջ քան զամենեսին այս թշուառ կեանքէս 'ի յաւիտենականութիւն պիտի անցնի։ Շնորհէ, ամենաքաղցր Սիրտ, որ մահուան նեղութեանց միջոց քու ամենասուրբ ներշնչմանդդ զօրու.

թեամբ մխիթարուի։ Ժողովէ զնը-
քը բացուած վիրացդ մէջ, որպէս
զի այն սիրոյ հնոցին մէջ յամենայն
աղաչանաց սրբուելով, արժանանայ
յաւիտենական փառաց հասնելու, և բարեխօսէ առ քեզ
մեզ մեռացելոցս համար։ Ո՛վ ամենասուրբ Սիրա, այս աղօթքս և
պաղատանքս կը ցանկամ կրկնել կենացս մէջ ամէն յառ և տուր
ինչոյս թէ ինծի և թէ այլոց ամենեցուն համար, մինչև կենացս վերջին
վայրկեանը։

Ո՛վ ամենագթած Սիրա Յիսուսին խմոյ, քեզ կը յանձնեմ դարձեալ զԵկեղեցին քու սուրբ հարսդ և մեր սիրելի մայրն, ամենայն
արգար հոգիքն, խեղճ մեղաւորները, ամէն վշտացեալքն ու հոգեվարքները. և ամենայն մարդիկք որք Ճանապարհորդք են այս աշխարհիս վրայ։ Շնորհէ որ քու աստուածային արեանդ գինը զոր
ամենուն փրկութեան համար թա-

փեցիր՝ չի կորսուի, և արժանացուր 'ի փրկութիւն հոգւոց քաւարանի, մանաւանդ քու ջերմեռանդիցդ։

Ո՛վ ամենասիրելի Սիրա Մարիամու, որ բոլոր ստեղծուածոց սրբութիւն մէջ ամենէն մաքուրն, ամենէն սիրելին, ամենէն գթածն ես մեզ թշուառ մեղաւորացս. ընդունէ այն ամէն խնդրուածքս՝ զորս քու և մեր Յիսուսին առ ամենասուրբ Սիրան մատուցի։ Ո՛վ ամենաքաղցր Մայր, քու ամենաեռանդուն Սրտիդ մի միայն հառաչանքն իսկ առ Սիրան Յիսուսի, կրնայ զմեզ մխիթարել լիովին և երջանկացնել։ Աղէ մի մերժիր զմեզ այս ինորհքիս, այն որդիական սիրոյն համար որ ունեցած է և ունի առ քեզ 'ի յաւիտեան քու Յիսուսդ. ամէն։

ԱՂՕԹՔ

Ո՛վ ամենասիրելի Յիսուս իմ, տես ահա ուր հասաւ քու անչափ սէրդ. երկնային սեղան մը ինծի պատրաստեցիր՝ որ քու պատուական մարմնէդ և անգին արեանէդ կը կազմուի. ով զքեզ այսպիսի ծայրագոյն սիրոյ մը բռնադատեց. ապահովապէս ոչ այլ ոք՝ եթէ ոչ քու ամենասուրբ Սիրտդ։ Ո՛վ պաշտելի Սիրտ Յիսուսին իմոյ, վառվռուն հնոց աստուածային սիրոյ, իմ հոգիս ալ ամենասուրբ վիրացդ մէջ ընդունէ, որպէս զի այն սիրոյ դպրոցիդ մէջ սորուիմ սիրել այն Աստուածը՝ որ իւր սիրոյն այսպիսի զարմանալի ցոյց մը ինծի տուաւ։

Նուիրումն

Ո՛վ Տէր, առ իմ կամքս բոլորովին, առ իմ յիշողութիւնս, իմ միտքս և բոլորովին իմ աղատութիւնս... ինչ որ ունիմ և եմ՝ ամենքն ալ քու պարգևքդ են... Քեզ կը նուիրեմ և քու կամացդ կ'ընծայեմ, առանց բան մը ինծի պահելու, որպէս զի ըստ հաճոյիցդ զանոնք կարգադրես... Աստուած իմ, միայն քու սէրդ ինձ շնորհէ և շնորհքդ՝ և ահա առաւելաւ կը հարստանամ, այլ ինչ չեմ խնդրեր։

Խնդրեմ աստուածային օրհնութիւն

Ո՛վ քաղցր Յիսուս, օրհնէ զիս քու ամենասուրբ Հոգիդ. օրհնէ զիս քու Աստուածութիւնդ. օրհնէ զիս քու ամենասուրբ Մարդկու,

թիւնդ։ Զգացո՛ւր ինծի քու օրհ-
նութեանդ արդիւնքն, և եռան-
դուն ըրէ զիս քու սիրոյդ մէջ, և
արթուն երկիւղիդ մէջ։ Շնորհէ՛
որ քեզ հաճոյանամ հոգւոյս խո-
նարհութեամբն, սրտիս մաքրու-
թեամբ, զգայարանացս հաւատա-
րիմ պաշտպանութեամբ, քաղցր
համբերութեամբ, հաստատուն
հաւատով, զօրաւոր յուսով, կա-
տարեալ սիրով։ Քու օրհնութեամ
բըդ սրտիս փուչերն խաղաղու-
թեան սրբութեան և սիրոյ ծա-
ղիկներ բողբոջեն, իբրև 'ի Տեառնէ
օրհնեալ երկիր մը։ Ո՛վ Յիսուս
իմ, քու սէրդ միշտ հետս ըլլայ,
սիրտս քեզի հետ՝ զքեզ օրհնելով
'ի կեանս և 'ի մահու։

Աղօթք առ ամենասուրբ Կ. Մարիամ

Ամենասուրբ Կոյս Մարիամ,
մայր Աստուծոյ և ամենաքաղցր
մայր իմ, քու բարերար ձեռացդ
մէջ, զօրաւոր պաշտպանութեանդ
ներքև, դթած սրտիդ մէջ կը զե-
տեղեմ իմ հոգիս և մարմինս՝ այս-
օր և միշտ, սակայն 'ի մանաւորի
մահուանս վայրկենին։ Իմ ամէն
յոյսս և մխիթարութիւնս, իմ ա-
մէն նեղութիւնքս և տառապանքս,
ամենայն գործերս և աշխատու-
թիւնքս, կեանքս և մահս, վերջա-
պէս ամենայն ինչս քեզ կը յանձ-
նեմ։ Որպէս զի քու ամենասուրբ
միջնորդութեամբդ և արդեամբդ
իմ ամէն գործերս, քու և քու
Որդւոյդ Յիսուսի կամացն համա-
ձայն ուղղուին և հեւևին. այսպէս
կը յուսամ, այսպէս ալ ըլլայ։

Ամենասուրբ Մարիամ, սուրբ Հրեշտակք, ամենայն սուրբք և սրբուհիք Աստծոյ Թեան, գովեցէք, սիրեցէք և շնորհակալ եղէք Յիսուսի իմ տեղս։

Յիսուս իմ, Յիսուս իմ
Ո՞վ ես դու, ո՞վ եմ ես։

Աղօրդ առաջի խաչելոյն

Լիակատար ներողութիւն ունի ով որ խաչելոյն առջև զղջացեալ արտով Հաղորդութենէ եւքն ըսէ։

Ահաւասիկ ով սիրելի իմ բարի Յիսուս, ես քու ամենասուրբ ներկայութեանդ առջև լինալով, մեծաւ ջերմեռանդութեամբ կը խնդրեմ որ սրտես մէջ տպաւորես հաւատք, յոյս, սէր և ցաւ իմ մեղքերուս վրայ, և առաջադրութիւն որ ասկից ետքն ոչ երբեք

քեզի դէմ մեղանչեմ։ Որովհետև ես ամէն սիրով ու սաստիկ ցաւակցելով քու հինգ վերքերդ կը մըտածեմ. սկսելով անկէց, որ կ'ըսէ քեզի համար, ով Յիսուս, սուրբ մարգարէն Դաւիթ. «Ծակեցին ղձերս իմ և զոտս իմ, թուեցին զամենայն ոսկերս իմ»։

Հայր մեր. Ողջոյն. Փառք Հօր՝ եկեղեցւոյ պատոյց համար։

ԱՂՕԹՔ

ԸՍՏ ԱԻՈՒՐՑ ԵՕԹՆԵԿԻ

ԿԻԻՐԱԿԻ

Ցիշատակաւ չարչարանաց Փրկչին

Սիրեցեալ Յիսուս իմ, ուրեմն դու ինծի համար այնքան կրեցիր և խաչին դառնագոյն չարչարանաց մէջ մեռար. ո՜հ սիրելի Փրկիչ իմ, դու զիս այս կերպով սիրեցիր, և ես ինչէր պէտք էի մտածել քեզ հաճոյանալու և զքեզ 'ի բոլոր սրտէ սիրելու համար. ընդ հակառակն միայն զքեզ վշտացնել ջանացած եմ և քեզի դէմ ապերախտ

գտնուած: Ո՛վ Սէր իմ խաչեալ, ուրքան իմ ապերախտութեանս վերայ կը ցաւիմ և կը զղջամ: Դու ապագային մէջ միակ առիթս պիտի ըլլաս խորհրդոցս և սիրոյս: Ո՛վ գեղեցիկ բոցք սիրոյ, դուք որ զԱստուած մը պարտաւորեցիք որ ինծի համար իւր կեանքն նուիրէ, եկէք, բորբոքեցէք, լցէք բոլորովին իմ սիրտս, և երկրային իրաց ամէն ցանկութիւնքն ջնջեցէք անոր մէջէն: Սիրելի Փրկիչ իմ, ինչպէս կրնայ ըլլալ որ ես զքեզ խաչին վրայ տեսնեմ և քու սիրովդ չի բորբոքիմ: Յիսուս իմ, կը սիրեմ զքեզ, կը սիրեմ զքեզ 'ի բոլոր սրտէ: Ո՛վ միակ բարիդ իմ, ո՛վ միակ սէր իմ, ես բոլորովին ինքզինքս քեզ կ'ընծայեմ և դու իմ սրտիս վրայ թագաւորէ բոլորովին: Միայն քու սիրոյդ ծառայեմ. ուրիշ բանի վրայ չի մտածեմ, չի խօսիմ, չի հառաչեմ, չի գործեմ, բայց միայն զքեզ սիրելու և քեզ

հաճոյանալու։ Ներկայ գտնուէ միշտ քու շնորհօքդ ինծի, որպէս զի քեզ հաւատարիմ ըլլամ։ Քու արդեանցդ կ'ապաւինիմ, ով Յիսուս իմ։

Ով Մայր գեղեցիկ սիրոյ Մարիամ, շատ սիրել տուր ինծի քու միածին Որդիդ, որ այնքան սիրելի է և իւր սիրով զիս առ ինքն ձգեց բոլորովին։

ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

Յիսուսի պարտիզին մէջ աղօթելուն յիշատակաւ

Յիսուս իմ սիրելի, իմ մեղքերս եղան որ քու չարչարանացդ մէջ զքեզ այնքան խոցեցին։ Ուրեմն վշտացուցի ես այն Սիրան որ զիս այնքան սիրեց. Յիսուս իմ, Յիսուս իմ, փոխան այնքան սիրոյն ես կը յաղթահարիմ. և քու ոտիցդ առ՝ և տարածուելով, լի ցաւօք և

զղջացեալ, աւելի սրտով քան բերանով՝ կ'ըսեմ. Աստուած իմ սիրելի, ամենասիրելի Փրկիչ իմ, ինչպէս կրցար դու սիրել զայն որ ըզքեզ այնքան վշտացուց։ Աղէ մասնակցէ զիս պարտիզին մէջ կրած այն ցաւոցդ։ Կ'ատեմ ես արդ և կը զղջիմ իմ մեղքերէս, և կը ցանկամ որ ընդունիս իմ այս զըզջումանքս՝ նոյն ատենուան քու ըզգացած զղջումանացդ հետ... Ո՛վ սէր Յիսուսին իմոյ, դո՜ւ ես սէր իմ։ Տէր, կը սիրեմ զքեզ, կը սիրեմ զքեզ, և քու սիրոյդ տեղ կը ցանկամ կրել ամենայն վիշտ և ամենայն մահ։ Ի՞նչ որ կ'ուզես կատարէ իմ վրաս։ Աղէ այն պարտիզին մէջ կրած այն հոգեվարաց արդեանցդ տեղ, շնորհէ ինծի զսուրբ յարատևութիւն և քու սուրբ սէրդ։

Ո՛վ Մարիամ սիրեցեալ մայր, դեռ՝ յիս և փրկէ զիս. վասն զի յետ Յիսուսի դու ես յոյս իմ, ով ամենասիրելի Մայր։

ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

Յիսուսի ճաղանացն յիշատակաւ

Յիսուս բոլորովին վերաւորեալ է և յոտից մինչև ցգլուխ պատառոտեալ... Ո՛վ վերք արիւնաթաթաւ Յիսուսին իմոյ, դուք ցոյց և նշան էք այն սիրոյն որ նա առ իս ունի... Դուք ամենազգայուն ձայնով կը պարտաւորէք զիս սիրել իմ Յիսուս: Ո՛վ ամենասուրբ վերքեր, դուք որ այնքան հոգիներ սիրով բորբոքեցիք, բորբոքեցէք նաև իմ հոգիս... Ո՛վ քաղցր Յիսուս իմ, երբ ես ալ բոլորովին ինքզինքս քեզի պիտի տամ, ինչպէս որ դու զքեզ ինծի տուիր: Կը սիրեմ զքեզ մեծագոյն բարիդ իմ, կը սիրեմ զքեզ Աստուած իմ, սիրավառեալ իմ հոգւոյս: Ո՛վ Աստուած սիրոյ, անջատէ սիրտս երկրաւոր իրերէ՝ որպէս զի միշտ քու-

կրդ ըլլայ. և այնպէս ուրիշ բան չի սիրեմ, ուրիշ բան չի փնտռեմ, ուրիշ բանի չի հառաչեմ բայց եթէ քեզի... Ահաւասիկ ասոնք են որ քեզմէ կը խնդրեմ, ո՛վ Աստուած հոգւոյ իմոյ:

Ո՛վ Մարիամ, ո՛վ Մարիամ, յոյս իմ, գթա յիս. օգնէ՛ ինծի սիրել զՅիսուս զսէր իմ:

ՉՈՐԵՔՇԱԲԱԹԻ

Յիսուսի փշով պսակուելոյն յիշատակաւ

Յիսուս իմ սիրելի, դու ես Թագաւոր Երկնի. բայց արդ այս փշեայ պսակով որ 'ի գլուխդ կը կրես՝ անարգանաց և ցաւոց Թագաւոր մը դարձած ես: Ահ՝ այսպէս ուրեմն բարբարոսաբար հետդ կը վարուին իմ ծանր ծանր մեղացս համար: Ահաւասիկ, Յիսուս իմ,

ոՒր զքեզ տարաւ քու սէրդ առ մարդիկ... Այլ ցաւոց ես, երեսդ բոլորովին անկերպարան դարձած, կարմիր քղամիդով մը ծածկուած, եղէգեայ գաւազան մը 'ի ձեռին, փշեայ պսակ գլխուդ վրայ, կ'անարգուիս և կը չարչարուիս իբրև անարդ և արհամարհ մարդ մը։ Ահաւասիկ Որդին Աստուծոյ որ մարդկանց Նշաւակ եղեր է։ Փըրկիչդ իմ սիրելի, եթէ այլք զքեզ իբրև իրենց Թագաւոր չեն ուզեր, ես զքեզ կ'ընդունիմ և կ'ուզեմ որ սրտիս և հոգւոյս միակ Թագաւորն ըլլաս։ Դու Թագաւոր ես սիրոյ. քու վերքերդ և արիւնդ, կրած դառնութիւնքդ և մահուանդ հոգեվարքն, ամէնքն ալ ինձ քու սէրդ կը ցուցնեն։ Ով Տէր իմ սիրելի, ոՒվ չի բորբոքիր քու սիրովդ այդքան սէրդ տեսնալով։ Ով Յիսուս Թագաւոր իմ, Աստուած իմ, սէր իմ, ամենայն ինչ իմ, կը սիրեմ զքեզ. և ինչ

բանի կը փափագիմ արդեօք ապագային մէջ եթէ ոչ քեզի միայն։ Ով Աստուած սրտի իմոյ, քեզ կը նուիրեմ բոլորովին ինքզինքս, կարգադրէ իմ վրաս քու կամքդ ինչպէս որ քեզ հաճոյ է։ Կը սիրեմ ես զքեզ, դու ես իմ մասս և միակ բարիս։

Ով Մարիամամենասիրելի Մայր իմ, աղօթէ, աղօթէ առ Յիսուս ինծի համար։

ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

Յիսուսի գիսաչ ոչոց վրայ կրկնուն յիշատակաւ

Գթա՛ յիս, Յիսուս իմ, կը տեսնեմ զքեզ բոլորովին պատառոտեալ, փշով պսակեալ, խաչին ծանր փայտիւ բեռնաւորեալ։ ՈՒր կ'երթաս Յիսուսդ իմ... Մարդկանց համար մեռնելու։ Ով տե-

սարան։ Աստուած մը որ մարդ-
կանց փրկութեան համար խաչուե-
լու կ'երթայ։ Ո՛վ անարատ Գառն
Աստուծոյ, դո՛ւ ուրեմն կ'երթաս
ինծի համար մեռնելու, ինծի պէս
ապերախտի մը համար... Ի՞նչպէս
կրնայ ըլլալ որ անցեալոյս մէջ ես
այսպէս քու սէրդ բոլորովին մոռ-
ցած ապրիմ։ Ո՛վ իմ մեղքերս,
դուք դառնացուցիք իմ Տիրոջս
Սիրան, այն Սիրան որ զիս այնքան
սիրեց։ Ո՛վ իմ ապերախտութեանս.
կը զղջամ, այո՛ կը զղջամ՝ ի բոլոր
սրտէ, ով ամենասիրելի Փրկիչ, ըզ-
քեզ վշտացնելուս համար։ Ո՛հ սէր
իմ, ո՞ւր էր թէ կարենայի մեռնիլ
քեզի համար, ինչպէս որ դու իմ
սիրոյս համար մեռար։ Բայց եթէ
չեմ կրնար ինչպէս որ կը փափա-
գիմ կ'ուզեմ՝ ապագային մէջ սիրել
զքեզ բոլորով սրտիս, և ամէն ձեռ-
քէս եկածն ընել՝ ամէն բանի մէջ
քեզ հաճոյանալու համար։ Որո-
շած եմ քու սիրոյդ համար կրել

որ և է խաչ, ինչպիսի խաչ որ ըլ-
լայ։ Աստուած իմ, դու զօրացո
զիս որպէս զի կարենամ այս առա-
ջադրութիւնս 'ի գործ դնել։ Սէր
իմ, յոյս իմ, մի թողուր զիս։ Դու
կ'ուզես որ ես բովանդակ քուկդ
ըլլամ։ Ես ալ կ'ուզեմ բովանդակ
քուկդ ըլլալ։ Կը սիրեմ զքեզ Աս-
տուած իմ, գանձ իմ, ամենայն ինչ
իմ։ Ո՛վ Մարիամ, դու կրնաս զիս
սրբացնել, և ինչո՞ւ պիտի չընես։
Մայրդ իմ ամենասիրելի, զայս
քեզմէ կը յուսամ և 'ի քեզ կ'ա-
պաւինիմ։

ՈՒՐԲԱԹ

Ցիսուսի խաչելոյն Յիշատակաց

Ցիսո՛ւս 'ի խաչին. ահաւասիկ
փորձն Աստուծոյ մը սիրոյն։ Ա-
հաւասիկ Բանին մարմնացելոյ յե-
տին երևոյթն աշխարհիս վայ. ա-

ռաջինը մարդ մը մեջ եղաւ, յետոյնս 'ի խաչին. թէ մին և թէ միւսը կը ցուցնեն իր մարդկանց համար ունեցած անհուն սէրը: Ո՛վ սէր, ո՛վ սէր. ո՛վ քաղցր Փրկիչ իմ, իմ փրկութեանս ունեցած խղճդ և փափաքդ ինծի պէս թշուառ որդան մը սէրն ստանալու համար ի՞նչ արժէց քեզի: Եւ ես այնքան նուազ ոչ միայն զքեզ չըսիրեցի, այլ արհամարհեցի կս: Կը ցաւիմ սէր իմ զքեզ վշտացնելուս վրայ, և կը ցանկամ մեռնիլ հազար անգամ, քան դարձեալ դառնալ և վշտացնել զքեզ: Ո՛վ Յիսուս, ո՛վ պատարագ սիրոյ, ո՜հ, երանի՜ թէ կարենայի զքեզ սիրել ինչպէս որ պէտք է: Ո՛վ բորբոքեալ Սիրտ Յիսուսի, բորբոքէ՛ իմ աղքատ սիրտս ալ: Աղէ բոցակիզէ 'ի յիս երկրային ամենայն ցանկութիւնքն, և միայն քու սիրովդ զիս վառէ: Եկէ՛ք ձաղկանք, փուշք, քամք և խաչ. դուք որ այնքան

տանջեցիք իմ Տէրս, եկէ՛ք խոցեցէ՛ք իմ սիրտս, և յիշեցուցէ՛ք ինծի այն սէրն որ իմ վրաս ունեցաւ... Աղատէ՛ զիս, Յիսուս իմ, ազատէ՛ զիս, վասն զի զքեզ միայն սիրել կը փափագիմ. կը սիրեմ զքեզ 'ի վեր քան զամենայն, կը սիրեմ զքեզ յաւիտեան:

Ո՛վ Մարիամ Մայր ցաւագին, աղօթէ՛ առ աստուած ինծի համար. և ընդունէ՛ շնորհք սիրելու զՅիսուս յամենայն սրտէ:

ՇԱԲԱԹ

Յիսուսի մահուան յիշատակաւ

Մեռա՜ւ Յիսուս... մերձեցի՛ք ո՛վ հոգի իմ այն խաչին... Փրկիչ իմ սիրելի, ի՞նչ վիճակի հասար իմ սիրոյս համար: Կը գրկեմ քու սուրբ խաչդ, կը համբուրեմ քու բևեռեալ ոտքերդ, շփոթած բոլորովին՝ տեսնելով որ իմ վրաս ունե-

ցած սիրոյդ համար մեռած ես։ Ա-
ղէ ընդունէ զիս Յիսուս իմ բարի,
և կապէ զիս քեզի հետ՝ որպէս զի
ալ քեզմէ չի հեռանամ. և այս-
օրուընէ սկսեալ միայն քեզի հետ
խօսակցիմ. առ քեզ վերադիմեն
իմ ամէն փափագներս, այնպէս որ
զքեզ սիրելէ և քեզի հաճոյական
գործ մը կատարելէ 'ի զատ ուրիշ
բան չի փնտռեմ, և ջանամ միշտ
քու օրինակացդ հետևիլ... Ո՜հ
Յիսուս իմ, դու վշտաց մէջ՝ իսկ ես
հաճոյից մէջ ընկղմած եմ. դու
փշոց մէջ, իսկ ես վարդից. դու
արհամարհեալ և անարգեալ, և ես
ունայն և փափկասուն։ Ո՜չ, ալ
չեմ ցանկար այս վիճակիս։ Եթէ
կրելը սիրոյ նշան է, ես կրելու
համար ամէն ջան 'ի գործ պիտի
դնեմ, որպէս զի իմ սէրս ցուցնեմ
առ քեզ։ Կը սիրեմ զքեզ միակ
սէր իմ, կը սիրեմ զքեզ դանձդ
իմ, կը սիրեմ զքեզ միակ բարիդ
իմ, ամենայն ինչ իմ։ Յիսուս իմ

կը սիրեմ զքեզ, կը սիրեմ զքեզ,
կը սիրեմ զքեզ։

Ո՛վ Մայր Աստուծոյ Մարիամ,
մայր սիրոյ. բորբոքէ, հրակիզէ
զիս բոլորովին Յիսուսով։ Կամ սի-
րել կամ մեռնիլ. կամ սիրել կամ
մեռնիլ։ Որոշած եմ մեռնիլ յայլ
ամենայն սիրոյ, որպէս զի միայն
Յիսուսիս սիրոյն համար ապրիմ։

ՋԵՐՄԵՌԱՆԴՈՒԹԻՒՆ

ԱՌ Ս. ՍԻՐՏՆ ՅԻՍՈՒՍԻ

Սուրբ սրտին Յիսուսի Ջերմեռանդութեան նիւթը՝ նոյն Յիսուսին երկրպագելի Սիրան է, և իւր առ մեզ ունեցած անհուն սէրը։

Նպատակն է իւր անհուն սիրոյն տեղ սէր փոխանակել, իւր բարերարութեանց շնորհակալութիւն մատուցանել, և իրեն դէմ եղող արհամարհանաց փոխարինել։

Սուրբ Սրտին Յիսուսի եղբայրութեան գրուղքն, ամէն ամսոյն առաջին ուրբաթ օրն յորում կը խոստովանին և կը հաղորդուին՝ լիակատար ներողութիւն կը վաստակին։

Այս Ջերմեռանդութիւնը քան զամէն Ջերմեռանդութիւն գերագոյն է. թէ ըստ իրական նիւթոյն, որ Մարգարէաւ Աստուծոյն Սիրտն է, աղբիւրն արեան որ զաշխարհս փրկեց. և թէ ըստ հոգևորական նիւթոյն՝ որ այս Աստուածային Փրկչին սէրն է։

Այս աստուածային Սիրտը մեզի համար ձևացաւ ի ծոց Կուսին Մարիամու. բաբախեց, աղօթեց, յուզեցաւ, կրեց. Աւետարանի զգացմամբ երեսաքն գրելու համար ներշնչեց. և նոյն ինքն է աղբիւր ամենայն խորհրդոց։

Նոյն ինքն է որ Սրբութեան բազմոցէն կ'ուղղէ, կը կառավարէ և կը մխիթարէ մեր սրտերը. այս Սիրան է որ զմեզ կը յորդորէ անձնանուիրութեան, մեր ամենայն ցաւերը կը սրբացնէ, մեր առաքինութիւնքն կ'աճեցնէ։

Այս Սիրան է որ ապաշխարութեան առենին առջև մեր մեղաց

թողութիւն կը շնորհէ. իւր աստուածային ներշնչութիւնքն 'ի մեզ կ'ազդէ. նոյն ինքն է որ զՄարիամ մեզ Մայր պարգևեց, և որ 'ի Ս. Հաղորդութեան կը հաճի մարդկանց մէջ իբր 'ի մանկունս բնակիլ:

Ասիկայ ամենէն աւելի հաստատուն ջերմեռանդութեանց մին է. վասն զի իւր մէջ կը բովանդակէ բոլոր Կրօնքը. որովհետև սիրոյ վաճառականութիւն մի է ընդ Աստուած և ընդ մարդիկ:

Ասիկայ ամենէն աւելի սիրելի և մխիթարական ջերմեռանդութեանց մին է. վասն զի մեզ կը ցուցնէ թէ այն ամենայն վիշտք և նեղութիւնք զորս մենք կը կրենք՝ արդէն իսկ Յիսուսի Սիրան կրած է. վասն զի կը ճանչցնէ մեզի Յիսուսի Սիրան յորում կ'առաւելուն ամենայն տեսակ առաքինութիւնք բարի, ազնուական, մեծահոգի, մեծանձն, դիւցազնական սրտերու:

Հուսկ ուրեմն՝ լի է Յիսուսի Սիրան ամենայն քաղցրութեամբ և ամենայն առաքինութեամբ:

Յիսուսի առ Ս. Մարիամ Մարգարիտա ըրած խոստմունքն, այն անձանց համար որք ջերմեռանդն են իւր Ս. Սրտին:

1. Իրենց վիճակին կարևոր եղող ամենայն շնորհքները պիտի պարգևեմ իրենց:

2. Իրենց ընտանեաց մէջ խաղաղութիւն պիտի հաստատեմ:

3. Իրենց ամէն վշտաց մէջ զիրենք պիտի մխիթարեմ:

4. Ես իրենց ամուր ապաւէն պիտի ըլլամ, մանաւանդ մահուան միջոց:

5. Իմ առատ օրհնութիւնս իրենց ամենայն գործոց վրայ պիտի հեղուն:

6. Մեղաւորք պիտի գտան

Սրտիս մէջ գթութեան աղբիւր և անհուն ողկիան։

7. Գաղջ հոգիք եռանդն պիտի զգենուն։

8. Եռանդուն հոգիք իսկոյն կատարելութեան ծայրագոյն աստիճան պիտի բարձրանան։

9. Պիտի օրհնեմ այն տունը՝ յորում Ս. Սրտիս պատկերը կախուած ըլլայ և պատուուի։

10. Քահանայից խմաստութիւն պիտի պարգևեմ՝ ամենակարծր սրտերն իսկ շարժելու։

11. Այն ամենայն անձինք որ Ջանան այս ներմեռանդութիւնս տարածել, անոնց անունն անջնջելի կերպով Սրտիս մէջ պիտի դրոշմեմ։

***

Սրբուհի Մարգարիտան այսպէս կը գրէ. «Ես ամենայն կերպով վստահ եմ, թէ որ և իցէ քրիստոնեայ որչափ ալ քիչ սիրելու ըլլայ իւր բարերար Փրկիչը, եթէ գիտնայ միայն թէ այս ներմեռանդութիւնս խիստ հաճոյական է Յիսուսի, կը ջանայ իսկոյն եռանդեամբ զայն կատարել»։

«Տէրն մեր անհուն գանձուց պարգևք պատրաստած է այն անձանց համար, որք կը ջանան այս ներմեռանդութիւնս տարածել»։

«Ո՜հ, որքան քաղցր է մեռնիլ այսպիսի Սրտի մը հաստատուն ներմեռանդութիւն ունենալէ յետոյ, որ զմեզ պիտի դատէ»։

Որդեակ իմ, տարածէ այս ներմեռանդութիւնս. այս երկնային Սիրտը ծանօթացնելու և սիրելի ընելու համար, բաշխէ ամենուն ասոր վերաբերող ներմեռանդութեան կրթութիւնք, պատկերք և գրքեր։ Տուր աղքատ ընտանեաց Յիսուսի Սրտին մեծ պատկեր մը, և յորդորէ զանոնք որ զայն իրենց սենեկաց պատերուն վրայ կախեն։

Անիկայ պիտի ըլլայ երենց մխեթարութիւն և զօրութիւն։

Ողջոյն Սրտին Յիսուսի

Ամենաքաղցր Սիրտ Յիսուսի, կ'ողջունեմ զքեզ. ով Սիրտ Յիսուսի, ողջոյն ընդ քեզ. աւելի քաղցր ես քան զմեղը, ողջոյն քեզ աղբիւր ամենայն շնորհաց և ամենայն բարութեանց։ Ով ամենասիրելի Սիրտ Յիսուսի, ողջոյն քեզ անհուն գանձ Աստուածային հաբրստութեանց։ Բիւր և բիւր անգամ կ'օրհնեմ և կ'ողջունեմ զքեզ այն աստուածային բարութեանդ համար ուսկից երբև յաղբերէ կը բղխեն առատապէս ամենայն բարութիւն և գթութիւն։ Ով ազնիւ և անգին Սիրտ Յիսուսի, կ'ողջունեմ և կ'երկրպագեմ քեզ՝ քեզմէ բղխած շնորհաց առատութեան մէջ, որք միշտ պիտի զեղանին անխիստ ամենայն սուրբ և ջերմեռանդն հոգւոց վրայ։

Ով Սիրտ Յիսուսի, Սիրտ քաղցրը, Սիրտ սիրելի. ով Սիրտ որ քաղցրութիւն կը բղխես, քու սիրոյդ խորոց մէջ կ'ընկղմեմ իմ հոգիս. քու անհուն գթութեանցդ մէջ իմ անհուն անօրէնութեանցս և մեղացս բեռը կը թաղեմ։ Քեզ կ'ընծայեմ ամենայն աշխատութիւնքս և քրտինքս. քեզ կը նուիրեմ իմ ամէն նեղութիւնքս և տառապանքս. քեզ կը յանձնեմ կեանքս և մահս։ Ով Սիրտ անուշահոտ, արժանաւոր պատարագ. փոխան իմ գութ ինքզինքդ նուիրէ ոսկեայ սեղանոյդ վրայ՝ պատարագ անուշահոտ Հօրն երկնաւորի։ Քեզմով կը յուսամ գտնել մեղացս թողութիւն, և հանգիստ օր մը երկնից արքայութեան։

Խոստովանութիւն առ Ս. Սիրտն Յիսուսի

Երկրպագելի և սիրելի Յիսուսդ իմ, միշտ լի սիրով առ մեզ, միշտ դեռած առ մեզ մեղաւորս, միշտ ցանկացող մասնակից ընելու զմեզ դանձուցդ և ինքզինքդ իսկ մեզ պարգևելու։ Յիսուս Փրկիչ իմ և Աստուած իմ, քու անհուն սէրդ գերազանցեց քան զամենայն եռանդուն և գորովալից սէրս ամենայն մարդկան. այն պատճառաւ ալ ինքզինքդ կենդանի զոհ ըրիր Հաղորդութեան երկրպագելի խորհրդոյն մէջ, յորում զքեզ ինքդ պատարագ կը մատուցանես ամէն օր բիւրաւոր անգամ։ Արդեօք ինչպիսի՞ զգացմամբ կը լեցուիս այս վիճակիդ մէջ, երբ կը տեսնես որ անհամար բազմութիւն մարդկանց, քու այս անհուն սիրոյդ ուրիշ փո-

խարէն չեն հատուցաներ, բայց եթէ խստասրտութիւն, մոռացօնք, ապերախտութիւն և արհամարհանք։ Ո՛վ Փրկիչ իմ, միթէ բաւական չէ՞ր մի անգամ միայն այս պիսի դառն հոգեվարքը մը կրելդ մեր անթիւ մեղաց համար, որոնց-մով ծանրաբեռնեալ էիր. և ինչո՞ւ արդեօք մինչև ցայսօր զքեզ ամէն տեսակ դառն անարգանաց կ'ենթարկես, զոր օր ըստ օրէ մարդկանց չարութիւնը քեզի համար կը հնարէ։ Ո՛հ Աստուած իմ և ամենայն ինչ իմ, սիրելի Փրկիչ, քու սուրբ Սիրդ ինչպիսի՞ զգացումներ կը կրէ տեսնելով այս ապերախտութիւնքս և մեղքերս։

Աղաչեմ քեզ Յիսուս իմ, բոլորովին զղջացեալ իմ գործած անթիւ մեղաց և ապաշնորհութեանց վերայ, կ'ինամ քու ոտքդ խոստովանելով իմ յանցանքս առաջի երկնի և երկրի։ Յիրաւի խոնարհեալ սրտիւ և բեկեալ ցաւոք՝ բիւրիցս

բիւր անգամ գործած մեղացս վը-
բայօք քեզմէ թողութիւն կը խն-
դրեմ։ Իբրև զի կը ցանկայի, Աս-
տուած իմ, սրբել արտասուօք և
լուալ արեամբս այն ամէն տեղերն
յորս քու Ս. Սիրտդ թշնամա-
նեալ անարգուեցաւ։ Ո՛հ Յիսուս
իմ, դու որ զնորս սրտիս կը քն-
նես, դու ինքնին գիտես թէ այս
վայրկեանէս սկսեալ կը ցանկայ և
կը փափագի սիրտս կրեալ ամէն բան
զանոնք ջնջելու համար։

Ահաւասիկ եմ, Յիսուս իմ, ա-
հաւասիկ եմ։ Հար զիս Տէր, հար
զիս եթէ կամիս. միայն թէ ներէ
իմ մեղացս։

Հայր յաւիտենական, ընդունէ
իմ յաւիտենական նուիրումս և
այս զղջումս՝ որ կը մատուցանեմ
քեզ՝ միացեալ ընդ Միածին Որդ-
ւոյդ Յիսուսի 'ի վերայ խաչին 'ի
Գողգոթա, և ընդ Մարիամու 'ի
տարրոտ խաչին. ամէն։

ԱՊԱՒԻՆՈՒԹԻՒՆ

Աչ սուրբ Սիրտն Յիսուսի

Ո՛վ երանեալ Սիրտ Տեառն ի-
մոյ Յիսուսի, կենդանի աղբիւր
գթութեան և յաւիտենական կե-
նաց, անհուն գանձ աստուածու-
թեան, եռանդուն վառարան աս-
տուածային սիրոյ։ Դու ես ապա-
ւէն իմ, աթոռ հանգստեան, ամ-
նայն ինչ իմ։ Սիրտ սիրելի, բոր-
բոքէ զիս այս իմ սիրտս ալ այն
կենդանի սիրովդ որով դու կը բո-
ցակիզես։ Հէզ իմ սրտիս մէջ ալ
այն մեծ շնորհքներն որոց դու ինքն
աղբիւր ես։ Միացո՛ միշտ իմ հո-
գիս քու հոգւոյդ հետ, և իմ կամքս
միշտ համաձայն ըլլայ քու կա-
մացդ։ Ուրիշ բանի չեմ ցանկար
բայց եթէ քու ամենասուրբ կամքդ
միակ կանոն և նպատակ ըլլայ ա-
մենայն խորհրդոցս, գործոցս և
սիրոյս. ամէն։

Վստահութիւն

Սիրելեալ Փրկիչ հոգւոց, զի գոհանալով զիս խաչին վրայ փրկելովդ, մինչև յարդ փասաբան իսկ կ'ըլլաս ինծի քու երկնաւոր Հօրդ առջև, որպէս զի մեղացս թողութիւն ընդունիս։ Այլ իմ մեղացս ամբողջական թողութիւն մը հայցէ։ Յառաջ քան զամենայն սիրաս եղաւ որ իմ Աստուածս վշտացուց, իմ տեղս դու քու Սրդ Սիրդ մատուցի Հօրդ երկնաւորի, և այնպէս մ'ըրէ որ անոր տեղ ինքն իմ սրտիս թողութիւն շնորհէ։ Իմ սիրաս գործովք մեղանչած է, և իւր զգայարանօքն և կարողութեամբ անթիւ մեղքեր գործած է. իսկ դու քու Սրտովդ լիուլի փոխարէն մը մատուցի քու վերաւորեալ ձեռքերդդ, ամենամաքուր զգայարանքդ, ամենասուրբ անմեղութիւնդ. և շնորհէ ինծի

Հիմարիտ ցաւ և կատարեալ թողութիւն քեզի դէմ գործած չարեացս։ Այս ամէն բան քեզմէ կը յուսամ, և քեզ եռանդուն շնորհակալութիւնպիսի մատուցանեմ ոչ միայն այս կենացս մէջ, այլ նաև 'ի յաւիտենականութեան։

Տեսիլք և աղօթք

Ամենասիրելի Յիսուսդ իմ, ահաւասիկ ծունր դրած քու առջևդ կը պաշտեմ զքեզ, կը սիրեմ և շնորհակալ կ'ըլլամ քու այնքան գթութեանցդ։ Ինծի համար թափած այնքան արեանցդ, կրած այնքան վիրացդ, այնպիսի նախատական մահուանդ, այն ամենայն անգութի և բարբարոս վշտացդ տեղ որ հոգիս փրկելու նպատակաւ միայն կրեցիր, կը խնդրեմ քեզմէ, մուցիր իմ անցեալ անհաւատարմութիւնքս։ Հանդչեցո՛ զիս սիրալիր Սրտիդ վիրաց մէջ։ Ո՛վ Յիսուս

իմ, այս վերքդ կրկին և կրկին ան-
դամ բոլորով սրտովս կը համբու-
րեմ, և բոլորովին այս վիրացդ կ'ա-
պաւինիմ։ Յիսուս իմ, յոյս իմ, մի
թողուր որ այլ ևս հեռանամ քեզ-
մէ։ Ո՛վ ամենասիրելի Յիսուսդ
իմ, քեզ կը յանձնեմ իմ հոգիս,
և զայն ամենասուրբ ձեռքդ կ'ա-
ւանդեմ. ի ձեռս քո աւանդեմ զհո-
գի իմ։

Մարիամ Մայր Հնորհաց
Մայր ողորմութեան
Դու զիս պահեա 'ի թշնամւոյն
Եւ զիս ընկալ 'ի ժամ մահուն։

Սուրբ Կոյս Մարիամ և Ս. Յով-
սէփ, ամենայն Սուրբք և Սրբու-
հիք, բարեխօսեցէք ինծի համար
այժմ և 'ի ժամու մահուանս. ա-
մէն։

Յաւ և առաջադրութիւն

Ո՛վ Աստուած իմ, ինչպէս կա-
րելի է որ ես առ քեզ այսպիսի
պաղ և ցուրտ սիրտ մ'ունենամ և
այսքան զքեզ չի սիրեմ։ Ինծի ու-
րիշ բան չի մնար, բայց եթէ քու
Յիսուսի Քրիստոսի միածին որդ-
ւոյդ դառն չարչարանաց յիշա-
տակաւ դիմել ոտիցդ առջև և զըղ-
ջալ հոն 'ի բոլոր սրտէ, ատելով
այն ամէն մեղքերս որոնցմով զքեզ
վշտացուցի։ Քեզ կը մատուցանեմ
քու Որդւոյդ վշտերն, արտա-
սուքն, ցաւալից Սիրտն՝ փոխան
իմ այնքան մեղացս և անհոգու-
թեանցս որոնցմով քու սուրբ հո-
գիդ 'ի յիս չնչուցի։ Աստուած
իմ, 'ի սէր Սրտին Յիսուսի, կը
պաղատիմ քեզմէ գարձո զիս առ
մեղս ունեցած 'ի չար սովորու-
թեանցս, և մինչև ցարդ գործած-
ներուս թողութիւն շնորհէ։

Միոչրիւն ընդ սուրբ Սրտին Յիսուսի

Աստուած իմ, այն ամէն անգամ որ սիրաս բախէ, այն ամէն անգամ որ եկեղեցւոյ կամ խաչի մը առջևէն անցնիմ, այն ամէն անգամ որ փոքձուիմ, այն ամէն անգամ որ մէկու մը հանդիպիմ, երթալու, գալու, աշխատելու կամ խօսելու միջոցս. կը փափագիմ քեզ նուիրել Միածին Որդւոյդ Յիսուսի արդիւնքն, իւր կրած վշտերն, չարչարանքն, երկրպագելի արիւնն, խոնարհութիւնն և մահը. — ամէն պատարագներն որ մինչև յարդ մատուցած են, կը մատուցուին և պիտի մատուցուին. — Աստուածածնայ ամենայն արդիւնքն, Առաքելոց աշխատութիւնքն, Մարտիրոսաց արիւնն, Կուսանաց մաքրութիւնն, ապաշխարողաց ժուժ-

կայութիւնն, սուրբ Եկեղեցւոյ աղօթքն, միով բանիւ զայն ամենայն որք առաքինի գործեր են և պիտի ըլլան: Դարձեալ Աստուած իմ, ընդունէ՛ զանոնք իբրև թէ քեզմէ թողութիւն խնդրեմ իմ ազգականացս, բարեկամացս, թշնամեացս, անհաւատից, հերետիկոսաց, չար քրիստոնէից մեղաց համար. — ընդունէ՛ զանոնք իբրև թէ քեզմէ խնդրեմ դարձ անձինս, և այն ամենայն մեղաւորաց որք կան արդ աշխարհիս վրայ և պիտի ըլլան յապագայն. — իբրև թէ քեզմէ խնդրեմ Եկեղեցւոյ փառքն, քու պաշտելի կամացդ կատարումը յերկինս և երկրիս վրայ, ընդունելութիւն ամենայն առաքինութեանց և մանաւանդ . . . և հուսկ ուրեմն բարի մահուան շնորհք. — իբրև թէ քեզմէ խընդրեմ Փաւարանի հոգւոց ազատութիւն, մանաւանդ անոնց որք բոլորովին երեսէ թողուած են, և

կը փափաքիմ այսօրուանս ընթա-
ցեց մէջ ընելիք բարի գործոցս ա-
մենայն ներողութիւնքն անոնց 'ի
նպաստ ընդունիլ։

Կը ցանկամ քեզ նոյնքան շնոր-
հակալութիւն մատուցանել՝ իմ,
ազգականացս և ամէն տեսակ
մարդկանց ընդունած և ընդունե-
լիք շնորհաց տեղ։ Կը ցանկամ
դարձեալ և կ'առաջադրեմ որ աս-
կից վերջ կենացս մնացած մասն
այնպիսի կերպով անցընեմ որ մե-
զացս քաւութիւն ըլլայ, ընդու-
նած բարեացս շնորհակալութիւն,
և ցոյց առ քեզ ունեցած մեծ սի-
րոյս, ամէն։

Նուիրուումն առ Ս. Սիրոն Ցիսուսի

Ես կու տամ և կը նուիրեմ Ցի-
սուսի երկրպագելի Սրտին անձս,
կեանքս, խորհուրդքս, խօսքերս,
գործերս, վիշտքս և տառապանքս։
Ա՛լ չեմ ուզեր ուրիշ բանի ծա-

ռայել՝ բայց միայն զինքը սիրելու,
պատուելու, փառաւորելու։ Ու-
րեմն ո՛վ Սիրտ աստուածային,
ասկից վերջ զքեզ կ'ուզեմ ունե-
նալ իմ սիրոյս նիւթ, կենացս
պաշտպան, վստահութիւն փրկու-
թեանս, դեղ անհաստատութեան
ցիս, դարմանիչ ամենայն պակա-
սութեանցս, և ապահով ապաւէն
մահուանս վայրկենին։ Ո՛վ Սիրտ
լի բարութեամբ, արդարացուր
զիս Աստուծոյ առջև, և իւր արդ-
արդարացման պատուհասն իմ վը-
րայէս վերցուր։ Քու վրադ բո-
լորովին վստահացած եմ. վասն
զի կը վախեմ իմ ամէն տկարու-
թիւններէս և քու բարութեանդ
կը յուսամ։ Ինչէ՞ իմ սրտէս զայն
ամենայն՝ որ կրնայ քեզ անհաճո-
յանալ և սուրբ կամացդ ընդդի-
մանալ. դէ՞ր զքեզ երբեւ սուրբ
կնիք մը սրտիս վրայ, որպէս զի
բնաւ զքեզ չի մոռնամ և երբեք
քեզմէ չի բաժնուիմ։ Դու որ կե-

նաց գիրքն էս, գրէ իմ անունս 'է քեզ, և զիս քու փառացդ նուիրուած զոհ մը համարէ. սրպէս զի այս վայրկենէս սկսեալ ընդդէմ կեմ զքեզ և օր մը ապահովապէս բոլորովին քու սիրոյդ բացերով։ Այս է ամենասիրելի բոլորովին իմ երջանկութիւնս, և ուրիշ փառք չեմ մնուռեր այս աշխարհս վայ, բայց եթէ կեալ և մեռնիլ 'է քեզ և վասն քո. ամէն։

Նուէր Սրտին Յիսուսի

Ես Ա. Ա. քեզի երախտագէտ ըլլալու և առջի անհաւատարմութիւնքս քաւելու համար, քեզ կը մատուցանեմ սիրտս, և զիս բովանդակ քեզ կը նուիրեմ, Յիսուսդ իմ ամենասիրելի, և քու շնորհքովդ կ'առաջադրեմ ալ չի մեղանչել։

Ներողութիւն մի անգամ ընդդիմի և դիսկատար՝ ամիս մի ընդդիմի. խոստովանելով և հաղորդուելով։

Աղօթք առ Ս. Սիրտն Յիսուսի

Ինչուան ոչ հասաւ քու անհուն գթութիւնդ, Փրկիչդ իմ ամենասիրելիդ Յիսուս։ Անգին արեամբդ ու մարմնովդ երկնային սեղան մը պարգևեցիր ինծի, զքեզ բոլորովին ինծի տալու համար։ Ով զքեզ սիրեց այս աստիճան սիրոյ, բայց եթէ քու անբաւ սերդ։ Ով երկրպագելի Սիրտ Փրկչին իմոյ Յիսուսի, վառարան մշտավառ աստուածային սիրոյ. ընդունէ հոգիս ամենասուրբ վիրացդ մէջ, որպէս զի այն սիրոյ դպրոցին մէջ սորուելիս սիրել նորէն այն Աստուածն՝ որ հրաշալի նշաններ տուած է ինծի իր սիրոյն. ամէն։

Հինգ փառք Հօր. ամէն փառք Հօրին կրկնելով. Ով քաղցրագութ Սիրտ Յիսուսի, վառեա 'է սէր քոյին և զիս։

100 օրուան ներողութիւն շնորհուած 'ի Պիոս Է. Քահանայապետէն։

Առ Սիրտն Յիսուսի

Վառեալդ 'ի մեր սէր՝ Սիրտ աստուածեղէն,
Ի սէր քո վառեա զըսիրտս հաստատեալս։

Նուէր սրտի առ Փրկիչն Յիսուս

Երկրպագելի Փրկիչ իմ Յիսուս, քու առ իս ունեցած սէրդ խելքէ մաքէ վեր է։ Դու օրպէս զի զիս քեզի նմանեցընես՝ ինծի պէս մարդ եղար. յաւիտենական մահուանէ և 'ի դժոխոց փրկելու համար՝ ինքզինքդ մահուան մատնեցիր, մանաւանդ նախատանաց և խաչի մահուան. զիս քու յաւիտենական Հօրդ արդարութենէն աղատելու համար՝ յանձն առիր որ քու սուրբ Սիրտդ տիգաւ խոցուի. և որ 'ի

վեր է քան զամէն աքանչելիքներդ՝ ամէն օր սուրբ սեղանոյն վրայ կը պատարագիս, և ինքզինքդ սուրբ հաղորդութեան մէջ ինծի կերակուր կը պարգևես։ Անպատմելի սէր, յեսմ՝ աստուծոյ գութ. և դու այս ամէն սիրոյ և բարերարութեանդդ տեղ ինչ փոխարէն արդեօք ինծմէ կը պահանջես, եթէ ոչ իմ սիրոս. և ես միթէ զասիկայ արդէն իսկ պարտական չէմ քեզի նուիրելու, ով Յիսուսիս սիրելի Սիրտը։ Ահաւասիկ քու ոտիցդ առջև ինկած, զանիկայ երկնից և երկրի դիմաց քեզ կը նուիրեմ՝ զանոնք ալ ըրած ուխտիս վրայ կանչելով։ Եւ որովհետև Աստուած իմ բարերար, հաճոյ է քեզի և կ'ընդունիս քան զուրիշ ամէն սրտերէն աւելի մեղապարտ և անարժան սիրոս, ահաւասիկ ես ալ զայն քեզի ընծայ կ'ընեմ. ահա քու խաչիդ ստորոտը կեցած է, քու շնորհացդ հեղհեղին մէջ

թաթխուած, արտասուքիդ և ա-
րիւնէդ ողողուած։ Սակայն ա-
ւաղ, որ այնչափ ախտերէ և վեր-
քերէ պղծուած ըլլալով, և տե-
սակ տեսակ մեղաց մէջ ընկղմած՝
խիստ անարժան բան մը եղած է
քեզի համար։ Յիսուս Փրկիչ իմ,
քեզի կը նուիրեմ իմ սիրտս, քե-
զի կը նուիրեմ ասոր ղգացմունք-
ները, յուժարութիւնքը և փա-
փագները։ Ո՛վ ինծի կոչ տար ար-
դեօք ամէն մարդկանց սիրտն ալ,
նաև հրեշտակաց և երանելեաց
զմայլութիւնքն, որպէս զի զանոնք
ալ քեզի նուիրեի. իսկ ես Յիսուս
իմ, որոնք մ'աւելի ուրիշ բան չու-
նիմ. և սակայն զայն ալ բոլորովին
արդեօք քեզի կը նուիրեմ։ Ո՜հ,
եթէ քու խիստ արդարութեամբդ
զիս դատելու ըլլայիր, մինչև հի-
մայ շատոնց դժոխոց խորն ընկղմ-
ուած էի. ընդհակառակն դեռ կ'ու-
զես դու՝ որ քու երկնային սիրովդ
բորբոքիմ, կ'ուզես քու գորովա-

գութ և ամենողորմ Սրտիդ մէջ
ինծի տեղ մը տալ։ Ա՛ռ ապա, ընդ-
ունէ Փրկիչ իմ Յիսուս այս իմ
Սիրտս, և քեզի արժանաւոր ըրէ.
առ՛ր ինծի սուրբ և խոնարհ սիրտ
մը, քու պարգևացդ երախտագէտ
սիրտ մը, իւր մեղաց վրայ զղջա-
ցեալ սիրտ մը, քու շնորհացդ հա-
ւատարիմ սիրտ մը, քու պաշտելի
կամացդ հնազանդ սիրտ մը, լի,
եռանդուն և վառեալ քու սիրովդ։
Ընդունէ իմ սիրտս, կամ մանա-
ւանդ թէ դու քեզմէ իսկ զայն
առ. սակայն զանիկայ առած մի-
ջոցդ մէջ մ'ալ ետ չի տաս։ Շատ
անգամ զանիկայ քեզի նուիրեցի,
սակայն յետոյ դժբաղդաբար ետ
առի՝ աշխարհքիս յափշտակել տա-
լով զայն քու ձեռքէդ։ Պահպանէ
զայն բոլորովին, ծածկէ զանիկայ
քու Սրտիդ մէջ, այս օրէս սկսեալ
կենացս ամէն օրը, մինչև ծա-
մանակ և յաւիտեանս՝ ուրիշ բան
չունենայ՝ բայց միայն, Աստուած

իմ, սիրել, օրհնել և փառաւորել զքեզ. ամէն։

Ներգործութիւն պաշտաւնական. նուիրեալ առ աւանդաւորդ Միրտն Յիսուսի

Ո՛վ ամենաքաղցր և ամենասուրբ սիրտ սիրելի Յիսուսին իմոյ. դու ինքն ես ամենագեղեցիկ նիւթ հաճութեան Աստուծոյ, խնդութիւն Հրեշտակաց, իմ զօրաւոր և քաղցր քաջալերութիւնս։ Զարմանալի աղբիւր ես ամենայն ընտրեալ, սիրոյ և ամենայն բարեաց։ Արժանի մեր ամենայն պաշտամանց և սիրոյն, մեր սրտից ամենայն նուիրմանց։ Քու առջևդ կը ներկայանամ ուրեմն այսօր զքեզ պաշտելու. և ամբողջապէս քեզ կը նուիրեմ իմ ունեցած ամէն սէրս, որպէս զի բոլորովին քուկդ ըլլամ ամէն բաներովս 'ի միասին, չի պահելով առ

ես ուրիշ բան մը, բայց եթէ միշտ զքեզ սիրելու համար սիրաս։ Վասն զի դու անհունս արժանաւոր ես, վասն զի քեզ հաճոյանալ կը ցանկամ, որպէս զի կարենամ ընդել իմ անթիւ մեղքերս որ կենացս ընթացից մէջ քեզի դէմ անընդհատ գործեցի, և այն նախատանաց տեղ զորս հանապազօր անհաւատներէ և անաստուածներէ Ս. Հաղորդութեան խորհրդոյն մէջ կ'ընդունիս։ Եւ այսպէս քեզի հետ հաշտուելով կարենամ հանդիսանալ օր մը այն յաւիտենական հանգստեան զոր յերկինս քու ընտրելեացդ պատրաստած ես։

Ո՛վ ամենասուրբ Սիրտ, արժանի համարէ ընդունելու իմ այսօրուան այս սուրբ նուիրումս։ Գիտեմ թէ անարժան եմ, սակայն կը վստահանամ քու բարութեանդ վրայ, և կը յուսամ թէ կը լսես իմ ձայնիս և զիս կը մխիթարես։

Ո՛վ ամենասուրբ Սիրտ, կը ցան-

կամ բոլորովին քուկդ ըլլալ, և դու բոլորովին իմն եղիր։ Այո, այո։ Ես բոլորովին քուկդ եմ, դու բոլորովին իմն ես։ Կեցցէ ամենասուրբ Սիրտ Յիսուսի։

Պաշտօն առ ամենասուրբ Սիրտն Յիսուսի 'Ի Ս. Հաղորդութեան

Կը պաշտեմ զքեզ Յիսուս իմ, սուրբ սեղանոյն սքանչելի Խորհրդոյն մէջ, ուր զմեզ եռանդուն Սրտիւ միշտ կը սիրես. շնորհակալ կ'ըլլամ քեզի, ով Տէր, որ մեզի համար այս աստուածային խորհուրդն հաստատեցիր. որով աստուածային սեղան մը մեզի պատրաստեցիր, ինքզինքդ բոլորովին մեզ պարգևելու, և ցուցընելու համար մեզի անհուն սէրդ։ Ընդունէ արդ ամենաքաղցր Սրտիդ վերաց մէջ իմ սիրաս ալ, որպէս զի կենացս մինչև վերջին կէտն շա-

բունակեմ զքեզ սիրելով։ Հայր մեր՝ Ողջոյն Փառք Հօր։

Կը պաշտեմ զքեզ Յիսուս իմ, սուրբ սեղանոյն սքանչելի Խորհրդոյն մէջ, ուր եռանդուն փափագով կը սպասես, որ ստեղծուածոցդ սրտերն գան միանան քու Սրտիդ հետ, առատ շնորհքներդ ընդունելու համար, որոց անհատաղբիւր ես։ Շնորհակալ կ'ըլլամ Սրտիդ անբմբռնելի սիրոյն, որով արժանի համարեցար այնքան նըւաստ այս խորհրդով իմ սրտիս հետ միանալ. կ'ապաչեմ և կը պաղատիմ քեզմէ դու իմ սիրաս ալ հեղ և խոնարհ ըրէ, որպէս զի քու սուրբ ներշնչմունքներդ սիրով ընդունի։ Հայր մեր՝ Ողջոյն Փառք Հօր։

Կը պաշտեմ զքեզ Յիսուս իմ, սուրբ սեղանոյն սքանչելի Խորհրդոյն մէջ, յորում չէն պաշտեր զքեզ անհաւատք և ոչ իսկ քու Հապէս և աստուածային ներկա-

յուԹիւնդ կ'ընդունին. և 'ի փո-
խարէն այս երԵնց անարգանաց,
ես կը յարգեմ և կը պաշտեմ ըզ-
քեզ հաւատոյ ներդործուԹեամբ
և կը հաւատամ ամենայն Ուղ-
ղափառաց հետ 'ի միասին որ դու
էապէս խորհրդոյս մէջ կը գտա-
նուիս. և կը խնդրեմ որ վառես
սրտիս մէջ քու սուրբ սէրդ, որ-
պէս զի սիրեմ զքեզ 'ի յաւի-
տեանս։ Հայր մեր՝ Ողջոյն՝ փառք
Հօր։

Կը պաշտեմ զքեզ Յիսուս իմ,
սուրբ սեղանոյն աքանչելի Խորհ-
ըրդոյն մէջ, ուր դու այնքան քու
ստեղծուածոցդ սրտերէն քիչ կը
սիրուիս, մանաւանդ գէշ քրիստո-
նէիցմէ՝ որք այնքան անարգու-
Ենամբ զքեզ կը վշտացընեն, և այն-
քան սրբապիղծ հաղորդուԹեամբ
Ս. Խորհրդովս ընդ քեզ կը միանան։
Ի փոխարէն այսպէս քիչ յարգուե-
լուդ, նաև քեզմէ օձեալ անձանց
ըրած անյարգուԹեանց տեղ, որք

պարտական էին մեծաւ յարգա-
նօք նախանձորդ ըլլալ պաշտա-
մանդ, ես քեզ կ'ընծայեմ և քեզ
կը մատուցանեմ զզՀացեալ սիրտս,
միացեալ աստուածային Սրտիդ
հետ. խնդրելով քեզմէ որ եռան-
դուն կերպով բորբոքես զայն քու
սուրբ սիրոյդ մէջ։ Հայր մեր՝ Ող-
ջոյն՝ փառք Հօր։

Կը պաշտեմ զքեզ Յիսուս իմ,
սուրբ սեղանոյն աքանչելի Խորհրդ-
ոյն մէջ, ուր գիշեր ցորեկ կը
սպասես՝ Թէ և 'ի հաւատացելոց
մէկն ալ այցելուԹեան չգալու ըլ-
լայ քեզի. ընդունէ՛ իմ յօժարու-
Թիւնս, որ եԹէ կարենայի՝ աշ-
խարհիս ամէն կողմն ալ կը վազէի
Ս. Խորհրդոյս այցելելու համար,
և շնորհակալ ըլլալ աստուածային
Սրտիդ անբաւ բարուԹեան. և կը
ցանկայի իմ բարի օրինակաւս հա-
մբերն հաւատացելոց սրտերը շար-
ժել, որպէս զի յաճախ այցելու-
Թեամբք քու սիրոյդ համապա-

տասխանեն։ Եւ որովհետև չեմ կարող զայս ընել, կը պաշտեմ զքեզ հոս սրտովս, և կը պաշտեմ զքեզ այն ամէն տեղ՝ ուր սրբազործեալ ես։ Հայր մեր՝ Ողջոյն Փառք Հօր։

Յիսուս հեղ և խոնարհ Սրտիս Մեր սրտերն ալ քու Սրտիդ նմանեցուր։

Հառաջանք և աղօթք

Ով Յիսուս իմ, մինչև ցարդ ինչպէս կրցար համբերել ինծի. ես այսչափ անգամ քեզ երես դարձուցի և դու երբեք զիս չթողուցիր. զքեզ այնքան անգամ վշտացուցի և դու ինձ ներեցիր. կրկին անգամ զքեզ վշտացուցի, և դու կրկին անգամ ինծի ներեցիր։ Աղէ մանակցէ զիս այն ցաւոցդ որ կրեցիր իմ մեղացս համար՝ ի պարտիզն Գեթսեմանի, որ նոյն տեղն

զքեզ արիւն քրտնցուցին։ Անոնց վրայ՝ ի բոլոր սրտէ կը զղջամ Փրկիչ իմ սիրելի։ Ե՛ատեմ և կը խոստովանիմ իմ մեղքերս, վասն զի անոնցմով զքեզ դառնացուցած եմ բարութիւնդ անբաւ։ Փրկիչ իմ սիրելի, ես արդ ամէն բանէ աւելի զքեզ կը սիրեմ, կը հրաժարիմ ամէն ապօրինաւոր հաճոյքներէ, և կ՝առաջադրեմ հազար անգամ մեռնիլ՝ քան զքեզ վշտացընել։ Աղէ այն սիրոյն համար որով խաչին վրայ զիս սիրեցիր, պարգևէ ինծի լոյս և զօրութիւն փորձութեանց դէմ դնելու, և միշտ բոլորովին քուկդ ըլլալու։

Ով Մարիամ յոյս իմ, դու կարող ես ամէն բան Աստուծմէ ընդունելու. ընդունէ ինծի համար ալ զուարթ յարատևութիւն և շնորհք՝ սիրելու զՅիսուս՝ ի բոլոր սրտէ և՝ ի յաւիտեանս։

Հառաջանք և աղօթք

Ո՛վ Փրկիչ իմ և Աստուած իմ, ահաւոր դատաստանին օրը ինչպիսի՞ վՀիւ արդեօք պիտի ընդունիմ։ Արդ Յիսուս իմ, եթէ այսօր ինծմէ կենացս հաշիւ պահանջելու ըլլայիր, քեզի ի՞նչ պատասխան կրնայի տալ, բայց եթէ ըսել որ հազարաւոր դժոխոց պարտական եմ... Այո՛, ՀՀմարիտ է Փրկիչ իմ սիրելի, արժանաւոր եմ հազարաւոր դժոխոց. բայց դու ո՛վ Յիսուս իմ, յամառեալ մեղաւորքն միայն կը դատապարտես, և ոչ երբեք զանոնք որք կը զղջան և զքեզ սիրել կ'ուզեն... ահա կ'ատեմ և ես իմ մեղքերս, և զքեզ գերագոյն բարեդ միայն կը սիրեմ. կը հրաժարիմ աշխարհիս ամենայն զուարճութիւններէն, և կը դառնամ և կը գրկեմ զքեզ Փրկիչդ իմ սիրելի։ Աղէ ընդունէ զիս Սրտիդ

մէջ, և հոն քու սուրբ սիրովդ բորբոքէ, որպէս զի չի կարենամ մէյ մ'ալ զիս քեզմէ բաժնել։

Մարիամ յոյս իմ, ապաւէն իմ և մայր իմ, օգնէ՛ ինծի և սուրբ յարատեւութեան շնորհքն ընդունէ։ Քեզի ապաւինողներէ ոչ ոք կը կորսուի. քեզ կը յանձնեմ ես ալ ինքզինքս. գթա՛ ինձ, ո՛վ սիրելի Մայր, գթա՛ ինձ։

Ներգործութիւն նուիրական առ երկրպագելի Սիրտն Յիսուսի

Երկրպագելի Սիրտ սիրելի Յիսուսին իմոյ, աթոռ ամենայն առաքինութեանց, անհատ աղբիւր ամենայն շնորհաց. ի՞նչ աղէկութիւն տեսար իմ վրաս որ այնքան չափազանց սիրով զիս սիրեցիր։ Այն եռանդուն սէրն որ առ իս կը կրես, մինչդեռ ես զքեզ ինչպէս որ պէտք է չեմ սիրեր, կը յու-

սացընէ զիս որ կը հաճիս տեսնել իմ վրաս գտնեա զքեզ սիրելուս նշանները։ Հաճեաց ուրեմն սիրելի Փրկիչ իմ, ընդունել իմ փափագս որ ունիմ ինքզինքս բոլորովին քու ամենասուրբ Սրտիդ փառաց նուիրելու. հաճեաց իմ նուէրս՝ որ զիս գլխովին քեզ կ'ընծայեմ։ Ո՛վ Տէր իմ և Աստուած իմ, քեզ կ'ընծայեմ իմ սիրտս բոլոր իւր զգացմունքներով, և կը ցանկամ որ կենացս մէջ քու զգացմանցդ համակամ ըլլամ։ Ահաւասիկ, Յիսուս իմ, ես բոլորովին քու երկրպագելի Սրտիդ եմ։ Ո՛վ Աստուած իմ, որքան մեծ են գթութիւնքդ առ իս։ Աստուած փառաց, և ով եմ ես որ կը հաճիս ընդունել սրտիս զոհն։ Սպասային մէջ բոլորովին քուկդ պիտի ըլլայ, և արարածք պիտի չունենան մասն 'ի նմա՝ վասն զի չեն արժանի։ Այս վայրկենէս սկսեալ, ով սիրելիդ իմ Յիսուս, հայրս, բարեկամս,

վարդապետս և ամենայն ինչս դու եղիր. չեմ ուզեր տպրել, բայց եթէ 'ի քեզ, և քեզ նուիրած եմ սիրաս այնու դաշամբ՝ որ ալ մէ, մ'ալ ետ չառնում։

Այցելութիւն ամենասուրբ Սրտին Յիսուսի առաջի Հաղորդութեան

Ո՛վ աստուածային Սիրտ Յիսուսիս, կ'ողջունեմ զքեզ ամենասուրբ Հաղորդութեան Խորհրդոյն մէջ, որ կեդրոնդ ես ամէն սրտերու, ուր ամենայն ոք կը գտնայ իւր խնդութիւնն և երջանկութիւնն. և անկից դուրս միայն թշուառ և ողորմելի է։ Կ'ողջունեմ զքեզ ով զարմացման տեսարան, կը սիրեմ զքեզ բոլոր սրտովս, ով բորբոքեալ Սիրտ սիրոյ։ Կը պաշտեմ զքեզ ով ամենակատարեալ Սիրտ. կ'օրհնեմ զքեզ և շնորհակալ կ'ըլլամ քեզի, ով ամենասի-

բելի Սիրտ սիրոյ՝ որով ինծի հա-
մար կը բորբոքիս, բարութեան՝
որով զիս ընդ քեզ սերտ կապա-
կցեալ կը պահես, և խորհրդոյ՝ որ
իմ բարեոյս և փրկութեանս կա-
րևոր եղող ամէն բաներն 'ի քեզ
կը բովանդակես և կը պարգևես:
Ո՛վ երկրպագելի Սիրտ, կը միա-
նամ քեզի հետ և բոլոր քու աս-
տուածային գործոցդ հետ. ինք-
զինքս ամբողջովին քեզ կը նուի-
րեմ, ով ամենասուրբ Սիրտ, որ-
պէս զի մի միայն քու սուրբ ծա-
ռայութեանդ մէջ մնամ, և ամե-
նայն կարողութեամբս քու փառքդ
աճեցընելու աշխատիմ: Ի քեզ է
իմ ամէն յոյսս, ով Սիրտ լի ամե-
նայն բարութեամբ, դու պատրաստ
ես միշտ զիս քու հովանաւորու-
թեանդ ներքև ընդունելու, պի-
տոյիցս մէջ ինձ նպաստելու, և քու
բարութեամբդ զիս լեցընելու:
Առ քեզ կը դիմեմ, ով անհուն
անդունդ ամենայն կատարելու-

թեանց, որ սկիզբն ես, կեդրոն և
օրինակ ամենայն առաքինութեանց.
կը պաղատիմ առ քեզ, լեց անոնց-
մով իմ սիրտս. տուր ինձի սէր,
հնազանդութիւն, մաքրութիւն,
համբերութիւն, հեզութիւն, մա-
հացուցումն և այլ ամենայն առա-
քինութիւնք: Ամէն օր պիտի գամ
առ քեզ ընկղմելու քու այս առա-
քինութեանցդ մէջ իբրև յաղբեր,
և պիտի չի մեկնիմ՝ մինչև որ աղէկ
մը չի հարստանամ:

Սուրբ յարատևութիւն և բարի մահ ընդունելու համար

Ո՛վ ամենասուրբ Սիրտ Յիսու-
սի, վերջապէս առ քեզ կը դիմեմ
խնդրելու համար քեզմէ սուրբ
յարատևութեան յետին և ամենա-
կարևոր շնորհքն: Ի՞նչ բանի կու
գան այն ամենայն գթութիւնքդ և
շնորհքներդ որ կը բանեցընես և կը

պարգևեսս կենացս ընթացից մէջ, եթէ այս յետին և ամենամեծ շնորհքէդ զիս զրկելու ըլլաս, որով յաւիտենականութեանդ դուռը ինծի դէմ կը փակուի: Ի՞նչ բանի կու գայ կենացս մէջ քու Ս. Սրբոյդ Ներմեռանդն ըլլալս, եթէ մահուանս միջոց չկարենամ յետին շունչս իրեն աւանդել: Աղէ կը պաղատիմ առ քեզ, մի զրկեր զիս այս սուրբ շնորհքէդ. և զայն ընդունել կարենալու համար, հիմակուընէ սկսեալ աղօթքներս և առաքագրութիւնքս գթած Սրտիդ մէջ կը հաւաքեմ, և կը պաղատիմ որ յիշես զանոնք մահուանս վայրկենին: Հայր յաւիտենական, ինչպէս որ Միածին Որդւոյդ խաչին վրայ մատուցած Ս. Սրտին զոհն ընդունեցար, նոյնպէս ընդունէ նաև իմ անկեղծ զգացմունքներս զորս հիմակուընէ կը ցանկամ կենացս յետին վայրկենին մէջ ունենալ:

Աստուած իմ, կը գոհանամ քու առ իս ըրած ամենայն բարերարութեանդ, զիս ստեղծելուդ, փրկելուդ, քրիստոնեայ ընելուդ, այնքան հոգևոր և մարմնաւոր շնորհքներով ինձ օժանդակելուդ. մանաւանդ Յիսուսիդ Ս. Սրտին Ներմեռանդութեան զիս հրաւիրելուդ՝ որ անհուն բարեաց աղբիւր է:

Հաստատապէս կը հաւատամ հաւատոց ամենայն Ճշմարտութեանց, մանաւանդ Առաքելական Հանդանակին ամենայն պարբերութեանց. այս վայրկենիս սկսեալ հրաժարելով ամէն տեսակ փորձութիւններէ, որոնցմով այն յետին վայրկենին պիտի ջանայ սատանան անդին գանձն ձեռքիս յափշտակել:

Կը յուսամ, ով Աստուած իմ, քու անհուն բարութեանդ և գթութեան, որոցմով ներեցիր իմ մեղացս և պիտի փրկես իմ թշուառ հոգիս: Կը յուսամ զայն 'ի Սիրտ

Յիսուսս, և իմ յաւիտենականութիւնս երեն կը թողում. ի քեզ Տէր յոչնացայ, մի՛ անաչեցից յաւիտեան։

Կը սիրեմ զքեզ Աստուած իմ, և կը ցանկամ որ մահս քու առջևդ հաշտութեան զոհ մը համարուի. այս վայրկենիս սկսեալ կ'ընդունիմ զայն և կ'ընդգրկեմ՝ի թողութիւն մեղացս, և քու ամենասուրբ կամացդ կատարեալ համակամութեան տեղ։ Կ'ընդունիմ զայն իւր ամէն ցաւերովն, ամենայն պարագայիւք՝ որոցմով պիտի դայ հանի վրաս. սակայն շնորհք մը միայն քեզմէ կը խնդրեմ. այն յետին վայրկենին կարենամ ընդունիլ սրբութեամբ յաւիտենականութեան Ս. Թոչակը, որպէս զի սիրոյ Խորհրդոյն մէջ սերտ միանամ Յիսուսիս Սրտին հետ. իւր հրեղէն բոցով այրին տոչորին բոլոր իմ մեղքերս և թողուին պատիժներս։ Քու սուրբ սէրդ ջնջէ իմ ամէն ա-

նօրէնութիւնքս. և այն յետին նուագ կրկնելով դարձեալ Յիսուսիմ, կը սիրեմ զքեզ, սկսիմ երգել այն սիրոյ և երանութեան երգն՝ զոր կը ցանկամ նուագել յաւիտեանս յաւիտենից։

ՎԱՐԴԱՐԱՆ

Ի ՊԱՏԻՒ ՍՐՏԻՆ ՅԻՍՈՒՍԻ

500 օրուան ներողութիւն կը վաստակի ամէն անգամ ըսողը, և լիակատար՝ ամիս մը ըսողը։

Ա.

Սիրելիդ իմ Յիսուս, երբոր քու աղնիւ Սիրագ կը մտածեմ և կը տեսնեմ զքեզ լի գթութեամբ և քաղցրութեամբ առ մեզս՝ սրտաբուխ կը զգամ սրտիս,

և վստահութեամբ կը լեցուիմ որ զիս սիրով կ'ընդունիս։ Վայ ինձ, որչափ մեղանչեր եմ. բայց հիմա Պետրոսի և Մագդաղենացւոյ պէս կու լամ դառնապէս և կ'ատեմ, որովհետև քեզի՝ անհուն բարեսդ դէմ են։ Այո՛ այո՛, տուր ինծի թողութիւն, և ո՛հ, մեռնիմ նախ քու աջնիւ Սրբոյդ համար, մեռնիմ նախ՝ քան թէ Սիրոյդ վիրաւորեմ. և զքեզ սիրելու համար միայն ապրիմ։

Մէկ Հայր մեր. և հինգ փառք Հօր՝ Յիսուսի հինգ վիրաց և Սրբոյն դիտման զոհրցէ։

Ո՛վ քաղցրիկ Սիրտ իմ Յիսուսին,
Վառեա զիս միշտ 'ի սէր քոյին։

(Այսպէս ըսէ ամէն հանդստեան վերջը)։

Բ

Կ'օրհնեմ և կը փառաւորեմ, Փրկիչ իմ Յիսուս, քու խոնարհ Սիրոյդ և շնորհակալ կ'ըլլամ որ ինձ զայն օրինակ տալովդ, չէ թէ միայն ամէն փուլթով կը յորդորես անոր նմանելու, այլ և անհուն խոնարհութեամբ ճամբան ալ կը ցուցընես, կը շակես և կը դիւրացընես։ Ո՛րչափ յիմար և ապերախտ գըտնուեր եմ ես. ո՛հ, որչափ մոլորեր եմ. թող ինձ։ Ոչ ես հպարտութեամբ, այլ խոնարհ սրտիւ և խոնարհ գործովք կ'ուզեմ ետևէդ գալ և խաղաղութիւն և փրկութիւն ստանալ։ Դու զիս զօրացուր, որ օրհնեմ յաւիտեան քու սուրբ Սիրոյդ։

Հայր մեր. Փառք Հօր. Ո՛վ քաղցրիկ։

Գ

Կը հիանամ, Յիսուս, համբերող Սրտիդ, և շնորհակալ եմ անչափ հրաշալի օրինակներուն համար՝ որ թողուցիր մեզի անյաղթ համբերութեամբ։ Կը ցաւիմ որ պարապ տեղ կը յանդիմանեն անոնք իմ չափազանց փափկութիւնս՝ որով պզտի նեղութեան մ'ալ չեմ համբերեր։ Ո՛վ սիրելի Փրկիչ իմ Յիսուս, լեցո՛ւր սիրտս վառ և հաստատուն սէր՝ նեղութիւն քաշելու, խաչ կրելու, մահանալու, ապաշխարելու, որպէս զի Գողգոթա քեզի հետ մեկտեղ ելլալով՝ հանիմ քեզի հետ 'ի փառս և յերկնից ուրախութիւն։

Հայր մեր. Փառք Հօր. Ո՛վ քաղցրիկ։

Դ

Քու ամենագթած Սիրտդ տեսնելով, Փրկիչդ իմ սիրելի, կը սոսկամ իմ սրտէս, որ բոլորովին քու կենդանի հակառակն է։ Թեթև բան մը, կերպ մը, պզտի հակառակ խօսք մը զիս մեկէն կը խռովեն և անհանգիստ կ'ընեն։ Ո՜հ, թող իմ յանցանքներս, և տուր ինծի շնորհք որ ասկից ետքն որ և իցէ դժկամակութեանցս մէջ քու անխռով հեզութեանդ հետևիմ, և անանկով յաւիտենական սուրբ խաղաղութիւնը վայելեմ։

Հայր մեր. Փառք Հօր. Ո՛վ քաղցրիկ։

Ե

Ո՛վ Յիսուս, թող գովեն նուա-
գարանաբ քու ամենառատ Սիրոդ՝
որ յաղթող է մահու և դժոխոց,
վասն զի արժանի է։ Սակայն ես
իմ երկչոտութիւնս տեսնելով չվո-
ւթած մնացեր եմ, որ ամէն խօսքէ,
ամէն մարդկային նկատմունքներէ
կը վախեմ. բայց ա՛լ ասանկ պիտի
չըլլամ։ Կը խնդրեմ քեզմէ անանկ
արիութիւն մը, որ աշխարհիս վը-
րայ պատերազմելով և յաղթելով,
երկինքն ուրախութեամբ քեզի
հետ պսակուիմ։

Հայր մեր. Փառք Հօր. Ո՛վ քաղ-
ցրիկ։

Դարձիր առ Մարիամ և իր վայ-
ելական Որոնի ապաշխարելով, ըսե
վատահոգեարար

Քու ամենաքաղցր Սրտիդ մեծա-
մեծ արդեանցն համար, տո՛ւր ինձ,
ո՛վ Մայր Աստուծոյ և Մայր իմ,
Ճշմարիտ և հաստատուն սէր և
ջերմեռանդութիւն քու միածին
Որդւոյդ Յիսուսի Սրտին, որուն
մէջ ընկղմած բոլոր իմ խորհուրդ-
ներովս և իղձերովս, լաւ կատա-
րեմ ամէն պարտքերս, և զուարթ
սրտով միշտ ծառայեմ Յիսուսի,
մանաւանդ այսօր։

ՊԱՂԱՏԱՆՔ

Ա.Ո. Ս. ՍԻՐՏՆ ՅԻՍՈՒՍԻ

Տէր, ողորմեա.
Քրիստոս, ողորմեա.
Տէր, ողորմեա.
Քրիստոս, լուր մեզ.
Հայր երկնաւոր Աստուած.
Որդի Փրկիչ աշխարհի Աստուած.
Հոգիդ Սուրբ Աստուած.
Սուրբ Երրորդութիւն մի Աստուած.
Սիրտ Յիսուսի, էապէս միացեալ ընդ բանին Աստուծոյ.
Սիրտ Յիսուսի, սրբարան աստուածութեան.
Սիրտ Յիսուսի, տաճար ամենասուրբ Երրորդութեան.
Սիրտ Յիսուսի, խորք իմաստութեան.

Ողորմեա մեզ

Սիրտ Յիսուսի, ովկիան բարութեան.
Սիրտ Յիսուսի, աթոռ գթութեան.
Սիրտ Յիսուսի, անսպառ գանձ շնորհաց.
Սիրտ Յիսուսի, խաղաղութիւն մեր և հաշտութիւն.
Սիրտ Յիսուսի, օրինակ ամենայն առաքինութեանց.
Սիրտ Յիսուսի, սէր անհուն.
Սիրտ Յիսուսի, արժանի անբաւ սիրոյ.
Սիրտ Յիսուսի, աղբիւր մշտաբուխ.
Սիրտ Յիսուսի, հաճութիւն Հօրն երկնաւորի.
Սիրտ Յիսուսի, քաւութիւն մեղաց մերոց.
Սիրտ Յիսուսի, լի դառնութեամբ վասն մեր.
Սիրտ Յիսուսի, տխրեալ մինչև ցմահ 'ի Գեթսեմանի.
Սիրտ Յիսուսի, յագեալ 'ի նախատանաց.

Ողորմեա մեզ

Սիրտ Յիսուսի, խոցեալ 'ի սիրոյ.
Սիրտ Յիսուսի, տիգաւ խոցեալ վասն մեր.
Սիրտ Յիսուսի, մորմոքեալ 'ի վերայ խաչին վասն մեր.
Սիրտ Յիսուսի, բեկեալ 'ի ցաւոց մեր մեղաց համար.
Սիրտ Յիսուսի, ցարդ արհամարհեալ յապերախտ մարդկանէ 'ի Ս. Հաղորդութեան.
Սիրտ Յիսուսի, ապաստան մեղաւորաց.
Սիրտ Յիսուսի, զօրութիւն տըկարաց.
Սիրտ Յիսուսի, մխիթար վշտացելոց.
Սիրտ Յիսուսի, յարատեւութիւն արդարոց.
Սիրտ Յիսուսի, փրկութիւն 'ի քեզ յուսացողաց.
Սիրտ Յիսուսի, յոյս 'ի քեզ ՆԵՐՆԵՑԵԼՈՅ.
Սիրտ Յիսուսի, քաղցր ՆԵՑՈՒԿ զքեզ պաշտողաց.

Ողորմեա մեզ

Սիրտ Յիսուսի, խնդութիւն Սրբոց. Ողորմեա մեզ
Սիրտ Յիսուսի, օգնական մեր 'ի վիշտս. Ողորմեա մեզ
Գառն Աստուծոյ որ բառնաս զմեղս աշխարհի. Խնայեա 'ի մեզ Տէր:
Գառն Աստուծոյ որ բառնաս զմեղս աշխարհի. Լուր մեզ Տէր:
Գառն Աստուծոյ որ բառնաս զմեղս աշխարհի. Ողորմեա մեզ:
Սիրտ Յիսուսի լուր մեզ:
Սիրտ Յիսուսի օրհնեա զմեզ:

Կոչումն ամենասուրբ Սրտին Յիսուսի հիշանդի մը բժշկութեան համար

Ա.

Սիրա Յիսուսի, ովկիան բարութեան և անհատ աղբիւր գթութեան, արժանի համարէ լսել մեր աղօթից:

Սիրա Յիսուսի, որոյ խնդութիւնքն միշտ մարդկանց հետ դրտնուիլդ է և զանոնք բարեաց լեցընելդ, արժանի համարէ լսել մեր աղօթից:

Սիրա Յիսուսի որ, մեր վշտաց մխիթարութիւնդ ես, մեր հիւանդութեանց դեղ, մեր թշուառութեանց զովացուցիչ, արժանի համարէ լսել մեր աղօթից:

Սիրա Յիսուսի անհուն բարի,

քաղցր և գթած, արժանի համարէ լսել մեր աղօթից:

Սիրա Յիսուսի, որ Կանա Գալիլացւոց հարսանեաց մէջ աղիւս և սիրալիր գթութեամբդ շարժելով հրաշք մը գործեցիր, յիշէ և բժշկէ այս հոգին, զոր քեզ կը յանձնենք:

Սիրա Յիսուսի, դու որ քու բարեկամիդ Ղազարու մահուան վրայ լացիր, և 'ի գութ շարժելով Մարթայի և Մարիամու արտասուքէն անոր յարութիւն առնելուիր, յիշէ և բժշկէ այս հոգին, զոր քեզ կը յանձնենք:

Սիրա Յիսուսի, դու որ գթալով արտասուաց այրեցոյն Նայիմայ՝ իւր որդին յարուցիր 'ի մահուանէ, յիշէ և բժշկէ այս հոգին ալ, զոր քեզ կը յանձնենք:

Սիրա Յիսուսի, դու որ այնքան գթութեամբ բժշկեցիր հարիւրապետին որդին, յիշէ և բժշկէ այս հոգին ալ, զոր քեզ կը յանձնենք:

Սիրա Յիսուսի, դու որ 'ի վեր քան զսէր հայրական ունենալովդ՝ անապատի մէջ հինգ հազար մարդիկ կերակրեցիր, որպէս զի չբլլայ թէ մեռնին, յիշէ և բժշկէ այս հոգին, զոր քեզ կը յանձնենք։

Սիրա Յիսուսի, դու որ կարողութիւնդ և բարութիւնդ ցուցուցիր՝ ամէն տեսակ հիւանդներ և տառապեալներ բժշկելով, յիշէ և բժշկէ այս հոգին, զոր քեզ կը յանձնենք։

Սիրա Յիսուսի, դու որ լիովին իշխանութիւն ունիս յերկինս և յերկրի, յիշէ և բժշկէ այս հոգին, զոր քեզ կը յանձնենք։

Սիրա Յիսուսի, դու որ չես սիրեր պատժել, այլ ներել և ազատել զմեզ ընկճող չարիքներէ, յիշէ և բժշկէ այս հոգին, զոր քեզ կը յանձնենք։

Սիրա Յիսուսի, աղնուագոյն քան զայլ ամենայն սիրոս, յիշէ և բժշկէ այս հոգին, զոր քեզ կը յանձնենք։

Ո՛վ աստուածային Սիրա, պարտիզին մէջ կրած հոգեվարքիդ համար, լսէ մեզի։

Ո՛վ աստուածային Սիրա, խաչին վրայ ընդունած տիգի խոցուածին համար, լսէ մեզի։

Ո՛վ աստուածային Սիրա, քու անհուն բարութեանցդ և գթութեանցդ համար, լսէ մեզի։

ԱՂՕԹՔ

Բ

Մի՛ զլանար մեզի, ամենասուրբ Սիրա, մի՛ զլանար քեզմէ խնդրած շնորհքնիս։ Քեզմէ չենք հեռանար՝ քանի որ այն քաղցրիկ խօսքերդ չի լսենք. Ես եմ փրկուրիւն քո, կամիմ զի բժշկեացիս։ Եւ ինչպէս կրնաս զմեզ մերժել քանի որ ամենուն հայցուածքը կը կատարես. ինչպէս կրնաս արհամարհել մեր պաղատանքն, դու՝ որ այնքան դիւ-

բաւ 'ի գու�թ կը շարժիս և կը լը-
սես։

Ո՛վ Մարիամ, քաղցր քան զայլ
ամենայն մարս, քու գթալից և
գորովալից Սրտովդ խօսէ մեր տեղ
Յիսուսի Սրտին հետ, և խնդրէ
այս մեծ շնորհքն որ այնքան թա-
խանձագին իրմէ կը պաղատինք։

Միրտ Մարիամոյ, օգնէ՛ մեզի.
Միրտ Յիսուսի, դի՛ մեզի։

ԱՂՕԹՔ

Գ.

Ո՛վ Յիսուս իմ, խեղճ հիւան-
դաց վրայ քու Սրտիդ անհուն գթ-
ութիւնն ամէն անգամ մասնա-
ւոր կերպով ցուցուցած ես քու
մահկանացու կենացդ մէջ. այնու
քաջալերեալ և ես քեզ կը յան-
ձնեմ այս տառապեալ հիւանդս։
Զայն քու գիմացդ կը ներկայա-

ցընեմ բոլոր իւր ցաւերով, իւր պի-
տոյիւք, ամենայն հոգևոր և մար-
մնաւոր թշուառութեամբ։ Տէր ե-
թէ կամենաս՝ կրնաս զայն բժշկել.
խօսք մը միայն ըսէ, և ահա կը
բժշկուի։ Սակայն դու գիտես. այն
որ իրեն հոգւոյն փրկութեան օգ-
տակար և կարևոր է՝ զայն ըրէ։ Եթէ
բժշկես, պարգևէ՝ նաև շնորհք որ
ճանչնայ իրեն ըրած բարիքդ և ա-
ւելի սիրով քեզ ծառայէ. իսկ ե-
թէ չուզենաս բժշկել զինքն, համ-
բերութիւն պարգևէ որ իւր ցա-
ւոց սիրով տանի. հոգւոյն փրկու-
թեան օգտակար ըլլայ, և քու
սուրբ կամացդ համակամի։ Պար-
գևէ՝ նաև մեզ ամենուս զբաղութիւն
և համբերութիւն, որ զմեզ քու
սուրբ կարգադրութեանցդ են-
թարկենք. և քու ազնուագոյն
Սրտիդ մէջ գտնենք զօրավիգն՝ մեր
վիճաց համակամութեամբ տանել
լու։

ԱՂՕԹՔ

ՀՈԳԵՎԱՐԱՑ ՀԱՄԱՐ

Աբ սանկնասուրբ Սիրտ Յիսուսի

Ա.

Ամենաքաղցր Յիսուս, դու որ 'ի պարսիզին Գեթսեմանի աչացդ առջև բերելով մեր ծանր ծանր մեղաց բազմութիւնն, և անոնց քաւութեան համար կրելիք դառն չարչարանքներդ, այնպիսի սրտաճմլիկ հոգեվարք մը կրեցիր՝ մինչև արիւն քրտնեցար, քու սրտիդ այսպիսի ցաւալից կերպով վշտանալուն համար, 'ի գութ շարժէ վասն քո ծառայիդ՝ որ արդ իւր յեսին հոգեվարաց մէջ կը տագ-

նապի։ Այն ճանճրութեանց և տխրութեանց տեղ՝ զոր այն ատեն սիրով կրեցիր, մեղմացո՛ արդ տառապեալ հոգւոյն տագնապքը և մահուան երկիւղը։ Ամենաքաղցր վստահութեանդ տեղ զոր առ Հայրդ երկնաւոր ունէիր, չնորհէ՛ ասոր ալ աստուածային գթութեանդ հաստատուն յոյսը։ Անգին արեանդ տեղ՝ որ այն ատեն թափեցաւ և հեղաւ անարատ մարմնէդ, սրբէ՛ զասիկայ յամենայն մեղաց. և աստուածային կամաց յանձնարարութեանդ տեղ՝ որով ինքզինքդ Հօրդ երկնաւորի կամաց ենթարկեցիր, չնորհէ՛ որ այս հոգիս ալ քու ամենասուրբ կամացդ լի համակամութեամբ ընդունի ըզմահ։ Հայր մեր. և հինգ փառք Հօր։

Բ

Ամենաքաղցր Յիսուս, դու որ հաճեցար այն անարդ խաչին վրայ բարձրանալ, Հօրդ երկնաւորի ամենամեծ պատարագ մը մատուցանելու համար ինքզինքդ, յետ ծանրագոյն հոգեվարքի մը վերջ, որ երեք ժամ տևեց, 'ի գթութիւն շարժէ առ քո ծառայդ որ արդ իւր յետին պատերազմին մէջ կը կռուի։ Նոյն վայրկենին քու Սրբոյդ կրած ամենասուրբ սիրոյն տեղ, փոխան այն ատելութեան որ մեզաց դէմ ունէիր, այն եռանդեան տեղ որ Հօրդ երկնաւորի փառաց համար ունէիր, այն սիրոյն տեղ որ մեզի համար կրեցիր, շնորհէ որ այսպիսի մեծ պատարագ մը քու այս ծառայիդ բոլորովին անօգուտ բան մը չըլլայ։ Դու այս վայրկենին զօրացո՛ զանիկայ իրեն կարևոր եղած շնորհքնե-

րով, շնորհէ որ մեծաւ ցաւօք իւր մեղքերը խոստովանի, հեռացո՛ իրմէ դժոխային օձին ամենայն չար դարանները, բորբոքէ զանիկայ սուրբ սիրով, որպէս զի ամենայն հանդարտութեամբ կարենայ իւր հոգին քու ամենասուրբ Սրտիդ մէջ աւանդել։ Հայր մեր. և հինգ փառք Հօր։

Գ

Ամենաքաղցր Յիսուս, դու որ գոհ չեղար միայն կեանքդ իսկ մեզ նուիրելու, այլ ուզեցիր որ մահուանէդ վերջն ալ Սրտիդ մէջ մը-նացած անդին արեանդ վերջին կաթիլն իսկ մեզի նուիրես. այն իսոցուածոյն համար որ քու Կողդ պատառեց, Սիրտդ բացաւ, 'ի գութ շարժէ այն եղկելի հոգւոյն՝ որ արդ ցաւոց անկողնոյն մէջ կը տուայտի։ Յիշէ՛, ով Յիսուս, որ այն Սիրտը մեզի համար բացուե-

ցաւ. մեղի համար հեղաւ այն ա-
րիւնն և ջուրը, և մեղի համար կը
բորբոքին այն ամենայն բոցքն որ
զքեզ կը շրջապատեն: Շնորհէ որ
փրկարար ըլլան իրեն այս վայրկե-
նիս հաւատքն՝ յորում յարատևեց.
Եկեղեցին՝ որ անոր համար կ'աղո-
թէ, քեզմէ հաստատուած խոր-
հուրդներն, որպէս զի քու գթու-
թեամբդ իւր ամէն մեղքերէն սըր-
բուելով, իւր հոգին կարենայ ա-
մենասուրբ Սրտիդ մէջ աւանդել:
Հայր մեր. և հինգ փառք Հօր:

Դ.

Ամենաքաղցր Մայր Յիսուսի,
դու որ այնքան արիւնթեամբ Որ-
դւոյդ հոգեվարաց ներկայ գըտ-
նուեցար, և յառաջ քան զամ-
նայն ստեղծուածս մեղի համար
բացուած ամենասուրբ Սրտին մէջ
զքեզ ամրափակեցիր. այն ցաւոց

դառնագոյն խոցուածոց տեղ որք
զքեզ վիրաւորեցին նոյն վայրկե-
նին, բարեխօս եղիր Յիսուսի այս
ծառայիդ համար՝ զոր արդ քեզի
կը յանձնենք: Դու ես մխիթարիչ
ամենայն վշտացելոց, ապաստան
ամենայն մեղաւորաց, յեա Յիսու-
սի կեանք մեր և յոյս. չես կրնար
ուրեմն մերժել մեր խնդրուածքն՝
որոց այնքան կը կարօտանանք:
Խնդրէ Յիսուսէն որ իւր աստուա-
ծային Արեան անհուն արդիւնքն
հաղորդէ քու այս որդւոյդ, ան-
կեղծ ապաշխարութեան շնորհքն
պարգևէ, սիրալիր թողութիւն մը
շնորհէ ամէն մեղացը, ընդունի ըզ-
նա իւր ամենասուրբ Սրտին մէջ,
և այս ամենայն պարգևաց տեղ
նուիրէ իրեն քու անարատ Սրտիդ
անբիծ սէրն, քու յարգանքդ և
քու արդիւնքդ. որպէս զի 'ի գութ
շարժելով այսքան խնդրուածքնե-
րէ, խնդալով այսքան սիրազեղ
նուիրաց վրայ, լսէ սիրով մեզի. ա-
մէն: Ողջ լեր թագուհի:

Ե

Ամենագթած Յիսուս, սիրող հոգւոց, քու ամենասուրբ Սրտիդ հոգեվարքին յիշատակաւ և անարատ Մօրդ ցաւոց համար, կը խնդրեմ քեզմէ, լուա՛ քու անգին արեանդ մէջ աշխարհիս վրայ գըտնուող ամենայն մեղաւորքն. որք արդ 'ի հոգեվարս կը գտնուին և այսօր պիտի մեռնին։

Հոգեվարքի մէջ գտնուող Սիրտ Յիսուսի, գթա՛ խեղճ հոգեվարաց։

ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՎԱՄՆ ՀՈԳԻՈՅ ՔԱՒԱՐԱՆԻ

Աբ Ս. Սիրտն Յիսուսի

Ս.

Ո՛վ երկնային Փրկիչ իմ Յիսուս, քու ամենաքաղցր Սրտիդ համար, շարժէ գթութեամբ առ թշուառ և տառապեալ հոգիս քաւարանի։ Քու սուրբ արեանդ փրկանքն են, ըսէ՛ իրենց հառաչանաց, աղաչէ՛ վշտերնէն, և պարգևէ՛ իրենց երկնից արքայութիւնն՝ ուր օրհնեն և փառաւորեն զքեզ յաւիտեան։ Այն հաւատարմութեան համար որով բոլոր իրենց կենաց մէջ քեզ ծառայեցին, մոռցի՛ր իրենց մեղքերը զորս մարդկային տկարու-

թեամբ գործեցին։ Հան և աղատէ զերեւնք այն դառն վշտաց և նեղութեանց բանտէն։ Լսէ, ո՛վ երկրաւոր պագելի Սիրա Յիսուսս իմ խոնարհ խնդրուածոցս, և պարգևէ այս շնորհքս՝ի մասնաւորի այն անձանց՝ որոց համար աւելի պարտական եմ աղօթելու։ Հայր երկնաւոր, քու միածին Որդւոյդ Սրտին և արդեանց համար կը խնդրեմ զայն քեզմէ, որ զմեզ քեզի հետ հաշտեցընելու նպատակաւ մեր մեղք ինքն բեռնաւորեցաւ, և ինքզինքն արդարութեանդ անարատ պատարագ մատոյց, և որ արդարկինս ընդ քեզ կը թագաւորէ։

Հայր մեր. Ողջոյն. փառք Հօր։

Բ

Հայր գթութեանց, Աստուած անբաւ բարութեան, խոնարհութեամբ առջևդ ինկած կը պաղատիմ, գթա Քաւարանի մէջ տանջուող այն երանեալ հոգւոց։ Նայէ անգամ մը գթութեան աչքով անոնց վրայ, և մանաւանդ... Ազատէ զանոնք իրենց պատիժներէն և երկնից արքայութեան ժառանգորդ ըրէ։ Յիշէ որ քու ձեռացդ ստեղծուածքն են, և գինք քու աստուածային Որդւոյդ Յիսուսի անգին արեան. քու անհուն գթութիւնդ ցուցուր անոնց վրայ։ Լսէ, Տէր, իմ խնդրուածոցս որ յամենայն սրտէ քեզ կ'ընեմ, յիշեցընելով քեզի սիրելի Որդւոյդ չարչարանաց և մահուան արդիւնքն. որպէս զի մխիթարուին այն երանեալ հոգիները, և վայելեն առանց յապաղելու այն անմահականփառքն որ քու ընտրելոցդ պատրաստեցիր։ Ամենագթած Տէր, գթա անոնց։

ՍՂՕԹՔ

Ո՛վ ամենաքաղցր Յիսուս, Գեթսեմանի պարտիզին մէջ կրած աբեանդ քրտանցն համար, գթա՛ քաւարանի սուրբ հոգւոց, և 'ի մասնաւորի անոր որ Ջերմեռանդն եղած է ամենասուրբ Երրորդութեան։

Եւ ժողովուրդը կամ ընտանիքն կը պատասխանեն

Գթա՛ Տէր, գթա՛։

Ո՛վ ամենաքաղցր Յիսուս, այն ցաւոց համար զորս անգութ ձաղանացդ մէջ կրեցիր, գթա՛ այն օրհնեալ հոգւոց, մանաւանդ անոր՝ որ աւելի Ջերմեռանդն եղած է սիրելի Սրտիդ։

Գթա՛ Տէր, գթա՛։

Ո՛վ ամենաքաղցր Յիսուս, այն ցաւոց համար զորս կրեցիր փշով զսակուելուդ միջոց, գթա՛ այն

օրհնեալ հոգւոց, մանաւանդ անոր որ աւելի մերձ է այն տանջանաց բանտէն ազատելու։

Գթա՛ Տէր, գթա՛։

Ո՛վ ամենաքաղցր Յիսուս, այն ցաւոց համար որ քու անգութ խաչելութեանդ միջոց կրեցիր, գթա՛ այն օրհնեալ հոգւոց և մանաւանդ անոր՝ որուն համար բազմութիւն հոգւոց կը պաղատի։

Գթա՛ Տէր, գթա՛։

Ո՛վ ամենաքաղցր Յիսուս, այն ցաւոցդ համար զոր կրեցիր խաչին վրայ ունեցած հոգեվարքիդ միջոց, գթա՛ այն օրհնեալ հոգւոց, և մանաւանդ անոր որ բազմութեան հոգւոց մէջ ամենէն վերջը պիտի ազատի այն դառն տանջանքներէ։

Գթա՛ Տէր, գթա՛։

Ո՛վ ամենաքաղցր Յիսուս, այն ամենամեծ ցաւոյն համար զոր հոգիդ աւանդելու միջոց զգացիր, ողորմէ՛ այն սուրբ հոգւոց, և մա-

նաւանդ անոր՝ որուն համար մեծ պարտականութիւն ունիմ։

Գթա՛ Տէր, գթա՛։

Պաղատանք առ Կոյսն Մարիամ

Ամենասուրբ Կոյս և մայր իմ Մարիամ, առ քեզ կը դառնամ հուսկ ուրեմն. այն սուրն որ քու Սիրտդ խոցեց երբ քու սիրելի Յիսուս որդիդ տեսար որ գլուխը խոնարհեցուց և հոգին աւանդեց, այն ցաւոցդ համար կը պաղատիմ քեզմէ որ յօգնութիւն հանես քաւարանի սուրբ հոգւոց, և մանաւանդ անոնց՝ զորս արդ աղօթքիս մէջ 'ի մտանաւորի յիշեցի։ Ո՛վ ցաւագին Մայր, մեզի համար մեռած Յիսուսի սիրոյն տես, դու ալ քու աղօթիւրդ հոս մեզ օգնութիւն։ Որ ոչ միայն Քաւարան երթալու վտանգի մէջ ենք, այլ և դատապարտուելու։ Մարիամ մայր սիրելի, Մայր գթութեան, գթա՛, գթա՛ 'ի մեզ։

Տէր լուր աղօթից իմոց... և աղաղակ իմ առ քեզ եկեսցէ։

Ներդործութիւն նուիրական ամենասուրբ Սրտին Յիսուսի՝ ընտանեաց հօր մի համար

Ամենաքաղցր Սիրտ Յիսուսի, Սիրտ ամենափափուկ քան զամենայն հարս. ահաւասիկ ես տարաժուռած առջևդ, քեզ կ'ընծայեմ և քեզ կը նուիրեմ իմ ընտանիքս. որպէս զի այս որդեակքս, որ աւելի քուկդ են քան իմս, կարենամ կրթել ըստ Սրտիդ՝ կարօտ եմ նոյն Սրտին սիրոյն։ Քու աստուածային զօրութեամբդ շնորհէ ինձի ուրեմն կարևոր եղած այժը, որպէս զի կարենամ զանոնք 'ի մեղայ հեռացընել. և աստուածային քաջզրութեանդ տեղ շնորհէ դարձեալ որ կարենամ զանոնք քաջզրութեամբ 'ի մեղայ հեռացընել։

Պարգևէ լինծի ուղղութիւն, գթութիւն, խոնարհութիւն, եռանդն, քու ամենասուրբ Սրտիդ ամենայն առաքինութիւնքն և սէրն, որպէս զի կարենամ ձայնիլ, և որ մեծն է օրինակաւ, հեղուլ զանոնք անոնց սրտին մէջ։ Մանաւանդ թէ, որով հետև առանց քու օգնականութեանդ իմ աշխատութիւնքս ամենևին զօրութիւն և արդիւնք մը չեն կրնար ունենալ, այն գթած սիրոյդ համար որով կը ցանկայիր թէ տղաքն առ քեզ գան, այն աստուածային գթութեանդդ և սիրոյդ համար որ անոնց ցուցուցիր, ձգէ զասոնք ալ առ քեզ քու անբաւ քաղցրութեամբդ։ Քու ամենասուրբ Սիրտդ իրենց ապահով ապաւէն դտնան զիրենք շրջապատող ամենայն վտանգաց դէմ. մոլորութեանց խաւարին մէջ իրենց ճշմարտութեան լոյս ըլլայ. 'ի փորձութիւնս ապահովութիւն, չար սովորութեանց մէջ մաքրութիւն.

փախուստ աշխարհիս դարաններին, պարզութիւն հաւատոց, սրբութիւն կենաց, հուր սիրոյ։ Շնորհէ լինծի ով Յիսուս, այսչափ երկնային քու ներս այն ամենասուրբ սիրոյդ արդեանց համար՝ որով հոս աշխարհիս վրայ պատուեցիր քու երկնաւոր Հայրդ և անարատ Մայրդ. քու ծնողացդ Մարիամու և Յովսեփայ անպատմելի սրբութեան համար. որպէս զի այն միութիւնն որ դուք ինքնին ուզեցիք այս աշխարհիս վրայ հարց և որդւոց մէջ, սրբանայ քու շնորհօքդ, հսկուի քու պաշտպանութեամբդ, և միանալով քու սիրոյդ կապանօք երբեք չի խզուի. և մենք ամենքնիս ժամանակին յաղթանակելով՝ կարենանք օր մը միանալ քու ամենասուրբ Սրտիդ մէջ՝ զքեզ սիրելու և փառաւորելու համար յաւիտեանս։

Ներգործութիւն նուիրական առ ամենասուրբ Սիրտ Յիսուսի, Նորընծայից համար

Տէր Յիսուս, սուրբ և քաղցր սէր մեր սրտերուն, դու որ խոստացար ըսելով թէ ուր երկուք կամ երեք իմ անուամբս ժողովեալ ըլլան, հոն ես ալ իրենց մէջն եմ. ահա՝ սասկի մեր սրտերն միացած զքեզ միայն կը պաշտեն, կը գովեն, կը սիրեն և ամենասուրբ Սրտիդ հաճոյ ըլլալու համար՝ ամենքնիս մեկտեղ կ'ընծայենք և կը նուիրենք մեր սրտերը այժմ և 'ի յաւիտեանս, հրաժարելով միշտ յամենայն սիրոյ և ցանկութեանց՝ որք քու Սրտիդ սիրոյն մէջ չեն գտնուիր և անկից կախու�են։ Կը փափագինք որ մեր ամենայն հակմունքն, հոգերն, փափագքն միշտ համաձայն ըլլան քու հաճո-

յութիդ, զոր կ'ուզենք գոհացընել օրքան մեզ հնարաւոր է։ Սակայն որովհետև նոյն իսկ մենք մեզի համար ալ չենք կրնար բարիք մի գործել, կը պաղատինք քեզի ամենաքաղցր Յիսուս, քու ամենասուրբ Սրտիդ անհուն բարութեան և քաղցրութեան համար ըլլայ, հաստատուն պահէ զմեզ մեր լաւութեանց և առաքինութեանց մէջ, զոր մեզ շնորհեր ես, որպէս զի չըլլայ թէ որ և իցէ իր զմեզ բաժնէ կամ անջատէ քեզմէ։ Մենք հաւատարիմ և հաստատուն ենք մեր առաքելութեան մէջ, թէ քու սուրբ Սրտիդ սիրոյն համար պիտի զոհենք զայն ամենայն՝ որ մեզ ունայն հաճութիւն մը պարգևելով՝ զմեզ երկրաւոր իրաց հետ կը կապակցէ։ Կը խոստովանինք որ հոս ամենայն ինչ ունայնութիւն է և վիշտ հոգւոյ, բաց 'ի քու սիրոյդ և ծառայութենէդ, Աստուած մեր և ամենասիրելի Փրկիչ. այս-

օրուընէ յետոյ ուրիշ փառք չենք փնտռեր՝ բայց եթէ գերի ըլլալ պարզապէս քու քաղցը սիրոյդ, ուրիշ կամք և կարողութիւն չենք ուզեր՝ բայց եթէ քեզ հաճոյանալ և զքեզ ամէն բանի մէջ գոհացընել:

Եւ որովհետև դու ամէն բանի կարող ես, ով Կոյս Մարիամ, այն աստուածային Սրտին առջև բարեխօս եղիր մեզի համար և խնդրէ որ այս մեր նուիրումն որ քու առջևդ կ'ընենք՝ ընդունի. և քու միջնորդութեամբդ և մեր հաւատարմութեան վրայ ըրած վայրութեամբդ, իւր շնորհօքն, և քու օգնութեամբդ կը խնդրենք որ ըզմեզ չի մերժեսս. ամէն:

Վշտացեալ սիրտ մը որ Յիսուսի Ս. Սրտին մէջ դաչաղեր կը փնտռէ

Ով երկրպագելի Փրկիչ իմ Յիսուս, ես վշտացած եմ և առ քեզ կը գիմեմ՝ զքեզ ալ իմ ցաւոցս մասնակցելու: Ի քեզ միայն կը բռնամ վստահիլ՝ լի յուսով որ այս խեղճ սրտիս ամենայն խոցուածքն և վէրքերը դու կրնաս բժշկել: Մարդկանց խօսքը և խորհուրդը չեն բաւեր սիրասփոփելու. ստեղծուածոց քաջալերութիւնքն ստեպ իմ ցաւերս աւելի կը սաստկացընեն՝ փոխանակ մեղմացընելու և բժշկելու. անոր համար առ քեզ կը գիմեմ, կը գիմեմ քու Ս. Սրտիդ որ այնքան իմ սիրոյս համար վշտեր կրեց: Գթած Յիսուս, իմ կեանքս խաչ է, օրերս լի են ցաւոք, սիրտս դառնութեամբ ընդարմացած է,

շաւիղքս փշալից են և կրնամ ըսել Մարգարէին հետ՝ Եղեւն ինձ արտասուք իմ՝ ի կերակուր։ Յուղեալ հոգիս չար խորհրդոց մէջ կը տանջուի. ձնչեալ և նուաղեալ սիրոս պատերազմի մէջ կը յաղթահարի և գրեթէ յուսահատեալ է։ Աչքերս երեսացդ պայծառ լոյսը չեն տեսներ. և նոյն իսկ հաւատքն յողդողդ է սրտիս մէջ։ Զորս կողմն խաւար պատած է, և որչափ կը ջանամ անկից ազատիլ և դուրս ելլել՝ այնչափ աւելի կը շփոթիմ և կը կորսուիմ։ Ամհաւանիկ իմ վիճակս. որո՞ւն կրնամ դիմել եթէ ոչ առ քեզ միայն Յիսուս իմ։ Ո՞ր սրտի մէջ կրնամ հեղուլ հառաչանքս և արտասուքս՝ եթէ ոչ քուկինդ մէջ. պիտի թողո՞ւս զիս առանց քաջալերութեան։ Ո՛չ. քու Սիրադ նաև թշուառագոյն մեղաւորաց իսկ գթած է և բարի, անոր համար կը խնդրեմ որ գոնեա նայիս իմ վրաս անգամ մը գթու-

թեանդ աչքք։ Կրնայ ըլլալ և կ'ուզես դու բնաւ որ քեզի դիմելէս վերջ՝ նորէն բոլորովին անօգնական մնամ և երթամ ինքզինքս արարածոց գիրկը և սատանայի ձեռք ձգեմ։ Ի՞նչ կ'ըսեմ. մի՛, ո՛չ. քանի որ այն հայրական Սիրտն առիս բացուած կը տեսնեմ, ամենայն ինչ կը յուսամ անկից, և պիտի յուսամ և պիտի ընդունիմ յաւիտեանս. ամէն։

Ապաշխարութիւն՝ ի վիշտս առ Ս. Սիրտն Յիսուսի

Ո՛վ Յիսուս, դու միայն ես մեր փրկութիւնն, յոյսն և ապաւինութիւնն. անոր համար մեր վրշտաց և նեղութեանց մէջ առ քեզ կը դիմենք. քու ամենասուրբ Սրտիդ հոգեվարքին յիշատակաւ, և անարատ Մօրդ ցաւոց համար, հաս օգնութեան քու ծառայիցդ՝ որք անգին արեամբդ գնուած և փրկուած են. ամէն։

Պաղատանք առ Ս. Սիրոն Յիսուսի իւր օգնութիւնն խնդրելու համար յատուկ պիտոյից մէջ

Ո՛վ Յիսուս իմ, երբ կը տեսնեմ քու աղնուագոյն Սիրդ գթած առ ամենեսին ամէն պիտոյից մէջ, մեծ վստահութիւն մը կը զգամ նաև իմ պիտոյքս ալ քու առջեւդ պարզելու, որպէս զի քու անհուն իմաստութեամբդ օգնես եղիւլ՝ որ չըլլայ թէ՝ ի յաւիտենական անուն թենէս զրկուիմ: Քեզ կը յանձնեմ՝ ի մանաւորի.... ունեցած պիտոյքս և կը խնդրեմ այն Ս. Սրտէդ որ իմ վրաս ալ գթութեամբ՝ ինչպէս նայեցար կուրաց, կաղաց, ակարաց և մեղաւորաց: Յիսուս իմ, ինծի օգնելու համար քեզ՝ չէ կամենալ կը պակսի և ոչ կարողանալ. անոր համար լի յուսով կը վստահիմ քու վրադ որ

պիտի լսես իմ խնդրուածացս կամ պարգևելով այն շնորհքն որ քեզմէ կը խնդրեմ, և կամ ուրիշ միջոցներու ձեռօք օգնելով իմ փրկութեանս:

Ըսէ երեք Հայր մեր, կրկնելով իւրաքանչիւր Հայր մերէն վերջն

Սիրա Յիսուսի, դու գիտես զայն
Սիրա Յիսուսի, դու կարես զայն
Սիրա Յիսուսի, դու կը տեսնես զայն
Սիրա Յիսուսի, դարմանէ զայն:

Պաղատանք առ Ս. Սիրոն Յիսուսի մեղաւորի մի դարձին համար

Ա. Ամենաքաղցր Սիրա և գթած քան զամենայն հարս, նայէ՛ գթալեր աչօք որդւոցդ միոյն վրայ՝ թեպէտ ապերախտ է առ քեզ և անհնազանդ: Փառք Հօր:

Բ. Ամենաքաղցր Սիրա, քաղցրագոյն քան զալ ամենայն եղբարց օրտերն, մուտացիր եղբարցդ

միոյն ապերախտութիւնքն՝ թէ պէտ անարժան է, և գթած անոր։ Փառք Հօր։

Գ. Ամենաքաղցր Սիրա, ներող համիտ քան զայլ ամենայն բարեկամաց սրտերն, յիշէ՛ քու բարեկամացդ մին՝ թէպէտև արդ քու մատնիչդ է, և գթա՛ ի նա։ Փառք Հօր։

Դ. Ամենաքաղցր Սիրա, դորովալից քան զայլ ամենայն փեսայից սրտերն, դու որ տխրած ես քեզի անհաւատարիմ փեսայի մը անհաւատարմութեան վրայ, գթա՛ ի նա։ Փառք Հօր։

Ե. Ամենաքաղցր Սիրա, ջերմ սիրող քան զայլ ամենայն հովիւս, ժողովէ՛ քու հօտիդ մէջ ոչխար մը՝ որ քեզմէ հեռանալով՝ ի կորուստ կը գիմէ, և գթա՛ ի նա։ Հայր մեր, Ողջոյն, Փառք Հօր։

Խնդիր մեղաւորաց համար

Սիրա Յիսուսի լի գթութեամբ և ողորմութեամբ առ թշուառ մեղաւորս, հովիւդ երկնաւոր՝ որ՝ ի սիրոյ շարժեալ մոլորեալ ոչխարքն փնտռելու եկար, քեզ կը յանձնեմ այն ամենայն հոգիքն որք թշուառաբար քեզմէ հեռացած են, և մինչ յաւիտենական դատապարտութեան երկիւղին մէջ կը գտնուին։ Քեզ կը յանձնեմ՝ ի մասնաւորի.... և քու Սրտիդ գթութեան կ՝ուզեմ յանձնել զայն ամէն օր՝ մինչև կարենայ հանիլ փրկութեան։ Մարիամ զօրաւոր փաստաբան մեղաւորաց, քու ամենահզօր բարեխօսութեամբդ այս հոգւոյն համար ըրած աղօթքներս լսելի ըրէ։ Ի սէր Սրտին Յիսուսի, յիշէ թէ ինչ գնով գնուած է։ Ինծի և բոլոր ենծի նման թշուառ մեղաւորաց համար ստոյգ ապաշխար-

Հուրեան ժամանակ պարգևէ ք
Թողութիւն շնորհէ։

Սիրա Յիսուսի, դու որ սիրոյդ
ալաքներով Պետրոսի, Մագդաղե-
նացւոյ և ուրիշ այնքան մեղաւո-
րաց սրտերը սիրոյդ ցաւօք և փը-
կարար զղջմամբ խոցեցիր, և զա-
նոնք արբացուցիր. խոցէ, դարձ-
ուր նաև մեր սրտերն, որպէս զի
Թողունք մեղաց Ճամբան և համա-
պատասխանենք քու անհուն բա-
րութեանդ։

Նոր սիրտ մը խնդրելու համար

Սիրելի Յիսուս, կ'ուզէի քեզ
նուիրել իմ սիրտս. սակայն տես-
նելով որ այսքան անարդար և թը-
շուառ է, կը խնդրեմ քեզմէ արբ-
քայաշնուք Մարգարէին հետ որ
ըսին քու շնորհքդ նորոգես, որ-
պէս զի կարենայ քեզ արժանաւոր
ըլլալ. Սիրտ սուրբ հաստատեա
ի իս Աստուած։ Նոր սիրտ մը ինծի

շնորհէ, խոնարհեալ և զղջացեալ
անկեղծօրէն իւր գործած մեղաց
վրայ. սիրտ մը անչատեալ և ազատ
յամենայն անկարգ սիրոյ արարա-
ծոց և աշխարհիս. սիրտ մը հեզ և
հաւատարիմ շնորհացդ, և ենթար-
կեալ յամենայնի ամենասուրբ կա-
մացդ։

Նոր սիրտ մը ստեղծէ 'ի յիս,
որպէս զի զքեզ ամէն բանէ վեր
սիրեմ, և պատրաստ ըլլամ ամէն
բան զոհելու՝ քան թէ քու սուրբ
շնորհքդ կորսնցընել և ամենա-
պըզտիկ կերպով մը քու սուրբ
Սիրտդ վշտացընել։ Տուր ինձ սուրբ
սիրտ մը, որպէս զի քու փառացդ
համար կարենայ գործել և կրել,
և երբեք այս թշուառ կենացս բա-
րեաց և չարեաց առիթ չի յաղթա-
հարի։

Հուսկ ուրեմն քու Սրտիդ նման
սիրտ մ'ինծի պարգևէ, մաքուր,
խոնարհ, համբերող, հեզ, եռան-
դուն սուրբ սիրով առ Աստուած

և առ մարդիկ։ Ո՛վ սիրելի Յի-
սուս, առ իմ սիրտս և տուր ինձ
քովդ, որպէս զի ալ չի շնչեմ և
չապրիմ, բայց եթէ միայն զքեզ
սիրելու համար։ Եւ յետ կարե-
նալու սիրել զքեզ այս աշխարհիս
վրայ ինչպէս որ պէտք է, երկինքն
ալ կարենամ կատարելապէս 'ի
յաւիտեանս օրհնել զքեզ. ամէն։

Հեզուրիւն ստանալու համար

Սիրա Յիսուսի, ամենաքաղցր
ովկիան հեզութեան և քաղցրու-
թեան, առ քեզ կը դիմեմ քաղ-
ցրութիւն և համբերութիւն ստա-
նալու համար՝ որք թշուառ կենացս
մէջ ինձ այնքան կարիւորք են։ Խեղճ
սիրտս ստէպ կը յուզի և ցանը-
լով կը վշտացընէ զքեզ և զայլս։
Ո՛վ ամենագթած Յիսուս իմ, դու
որ քու Սիրդ ինծի հեզութեան
օրինակ կու տաս, օգնէ՛ նաև որ
կարենամ ուղղել իմ անձս և չը-

նորհք որ քեզ նմանիմ։ Երբ խոս-
վելու ըլլամ՝ առ քեզ պիտի դի-
մեմ, և համբուրելով սուրբ Կողդ
քաղցր վէրքերը, պիտի զսպեմ
բարկութեան շարժմունքներն որ
'ի յիս, և հեզութեան առաքինու-
թեամբ պիտի չափաւորեմ խօս-
քերս և գործերս։ Պիտի ջանամ
գործադրել այս առաջադրութիւն-
քըս օրուան ընթացքիս մէջ օրչափ
առիթ որ հանդիպի, որպէս զի իմ
խեղճութեամբս ջանացած ըլլամ
գոնես քիչ մը քու առաքինու-
թեանցդ նմանիլ։ Աղիտիցս մէջ հե-
զութիւն պիտի բանեցընեմ. զնս
ներող անձանց հետ՝ քաղցրաբա-
րոյութիւն. զնս վշտացընողաց հետ՝
գթութիւն. 'ի դժկամակութիւնս
և 'ի վիշտս՝ համբերութիւն։ Ո՛վ
բարի Յիսուս, զասոնք գործադրե-
լու համար պէտք եղած շնորհքնե-
րը քեզմէ կը յուսամ։ Ո՛վ ամենա-
հեզ Սիրա Յիսուսիս, իմ սիրտս
ալ քու Սրտիդ նմանեցուր։

Մաքրոտրիւն ստանալու համար

Անարատ Սիրտ երկնային Գառն, որ շուշանաց մէջ կը հովուես և խնդութիւնդ մաքուր սրտերու մէջ կը գտնաս. քեզ կը յանձնեմ ինքզինքս՝ որպէս զի կարենամ այն դեղեցիկ և անգին մաքրութեան առաքինութիւնը քեզմէ ստանալ: Զայն կորսնցընելու հաղար տեսակ վտանգաց մէջ պիտի ապրիմ, անոր համար որպէս զի կարենամ թշնամիներէս ազատիլ՝ 'ի քեզ միայն կ'ապաւինիմ: Զգայարանքներս և սիրտս՝ Կողիդ սիրելի վերաց կը յանձնեմ, և կը պաղատիմ որ դու ինքն զայն պահպանես: Ես իմ կողմանէս կը խոստանամ հրաժարել անձիս վրայ, փախչիլ յառաքից, և չուզել երբեք տեսնալ, լսել, խօսիլ, մտածել, գործել ամենափոքր ինչ մի եւ որ կարենայ թեթեւ կերպով մաքրութիւնս աւերել: Կ'առաջադրեմ'ի մանաւորի ամենայն գործոցս մէջ այնպիսի պարկեշտութիւն մը բանեցընել, իբր թէ միշտ ամէն վայրկեան քու աչացդ ներքեւ ըլլայի և քեզ հաճոյանալու համար գործեի: Ո՛վ երկնային մաքրութիւն Սրտին Յիսուսի, խնդաղակաթ է իմ սիրտս առ քեզ. մի թողուր զիս երբեք որ այս սուրբ մաքրութեան առաքինութեան մէջ թեթեւ կերպով մը պակսիմ:

Կոյս Մարիամ, դու որ այնքան հաճոյացար Յիսուսի Սրտին անարատ մաքրութեամբդ, աղօթէ ինծի համար: Երեք Ողջոյն. և երեք Փառք Հօր:

Ս. Յովսէփ, Ժուժկալ փեսայ կուսանաց թագուհւոյն, ընդունէ ինծի համար Յիսուսի և Մարիամու մաքուր Սրտերէն շնորհք՝ որպէս զի կարենամ մաքուր և սուրբ պահել սիրտս և մարմինս: Երեք Փառք Հօր:

Ս. Հրեշտակդ իմ Պահապան, եթէ զիս երբեք այս սուրբ առաքինութիւնս կորսնցընելու վտանգի մէջ տեսնես, բարեխօսէ Իսկոյն առ Յիսուս, առ Մարիամ և առ Ս. Յովսէփ. օգնէ ինծի քու սուրբ ներշնչմունքներովդ, որպէս զի կարենամ հոգւոյս թշնամիները յաղթահարել: Հրնտակ Տեառն:

Խոնարհութիւն ստանալու համար

Սիրելի Յիսուս, դու մեզի այնքան կարևոր եղող խոնարհութեան առաքինութիւնն սորուեցընելու համար, Սրտիդ ամենէն աւելի սիրական առաքինութիւններէն մին զայն ըրիր, և զմեզ ալ հրաւիրեցիր որ քեզմէ զայն սորուինք. ապէ գոնէ պարգևէ որ այսպիսի փրկարար գաս մը ինծի անսգուտ չըլլայ: Պարգևէ ինծի լայս որ կարենամ ունայնութիւնս, թըշուառութիւնս, մեղքերս ճանչնալ. և ճանչցուր ինծի աշխարհիս և անձիս ունայնութիւնն: Սիրելի ըրէ ինծի աշխարհէս անծանօթ մնալ, ինքզինքս ունայնացընել, և քու սուրբ շնորհօքդ օգնէ որ սիրով տանիմ խոնարհութեանց: Սիրա Յիսուսի, խոնարհ ըրէ զիս մտօք, սրտիս, զգացմամբ և գործով, որպէս զի կարենամ արժանանալ ընդունելու այն սուրբ շնորհքներն որ խոնարհաց խոստացած ես: Եւ եթէ դեռ երբեք հըպարտութիւնս սրտիս մէջ ջանայ տիրապետել, դու զայն յաղթահարէ, Յիսուս իմ: Խոնարհեցուր զիս ինչպէս որ քեզ հաճոյ է, մաքէ սրտիս մէջի ունայնութեան ըզգացմունքն, անձնասիրութիւնը, յանձնապատանութիւնը: Լցո զիս նախատանօք այս կենացս մէջ, եթէ քեզ հաճոյ է, միայն թէ քու ամենասուրբ Սրտէդ զիս մի հեռացըներ:

ԱՂՕԹՔ

Առ Ս. Խաչն

Խաչ անգին, բնակարան սուրբ, որոյ վրայ Փրկիչն իմ իբրև պատարագ զենաւ անարատաբար, հոգւոյս փրկութեան համար. 'ի բուլոր սրտէ կը պաշտեմ զքեզ:

Խաչ Թանկագին, բարձր բեմ, ուսկից Յիսուս մեր փրկութեան համար կարևոր եղող յաւիտենական Ճշմարտութիւնքը քարոզեց, և ասատուածային իմաստութեան պատգամքն աւետեց. կը պաշտեմ զքեզ:

Խաչ Թանկագին, բեմ անհաւոր, ուսկից Աստուծոյ զոյրացեալ արդարութիւնն կ'որոտայ, իւր շանթից հարուածներն այն անձանց դէմ՝ որք կը զեղծանին իւր շնորհաց պարգևաց մէջ. կը պաշտեմ զքեզ:

Խաչ Թանկագին, կամար հաշտութեան, յորում դթութիւն և արդարութիւն իրերաց հանդիպելով խաղաղութեան և հաշտութեան համբոյր կու տան միմեանց. կը պաշտեմ զքեզ:

Խաչ Թանկագին, եռաթեւեան կառք, ուսկից Փրկիչն Աստուած յաղթանակաւ յերկինս թռեաւ, իւր աշխատութեանց փոխարէն և նախատանաց տեղ՝ փառաց պսակ ընդունելու. կը պաշտեմ զքեզ:

Խաչ Թանկագին, ապաստան մեղաւորաց, բնակարան ապաշխարողաց, նեցուկ արդարոց, մխիթար վշտացելոց, քաղցր ժառանգութիւն ամենայն հաւատացելոց. կը պաշտեմ զքեզ:

Ո՜վ խաչ Աստուծոյն իմոյ, որքան Թանկագին ես աչացս առջև. երանի՜ թէ օրախս ալ այնքան սիրելի ըլլայիր: Բարեբաղդ գանուեցար քու վրադ բարձրացընելու զՍուրբն սրբոց. իւր արեամբ ոռոգ-

գեցար, իրեն սեղաններուն վրայ բարձրացար, քու պաշտպանութեանդ ներքև գանուողներուն ցելոց յարգանքը կ'ընդունիս, մեր կենաց ընթացից մէջ մեր օրինակներս, մեր մտհուան վայրկենին՝ մեր աչաց առջև պիտի ներկայանաս, որպէս զի թշնամւոյն յարձակումներէն զմեզ պաշտպանես, գառատատանին օրը յաղթանակաւ և պայծառափայլ մեզի պիտի տեսնուիս, որպէս զի արդարները մըխիթարես օրք իրենց կենաց մէջ յարգանաք ընդդրկած են զքեզ, և պիտի յանդիմանես անհաւատքն՝ որք զքեզ չեն ճանչնար։

Ո՛վ խաչ Փրկչին իմոյ, միշտ օրհնեալ, փառաւորեալ և բարձրացեալ ըլլաս ամէն ազգաց մէջ։ Մինչև աշխարհիս յեսին ծայրը Փրկչատոսի փառքը տարածէ. թագաւորէ՛ բոլոր տիեզերաց մէջ, և 'ի մասնաւորի իմ սրտիս մէջ։ Ընդունէ՛ իմ յարգանքս և իմ երկրպագութիւնս, և սրբացուր բոլոր իմ զգացմունքներս և սիրտս։

Նուիրումն առ Ս. Խաչն Քրիստոսի

Երկրպագելի՛ խաչ Փրկչին իմոյ, այս վայրկենիս սկսեալ առ քեզ կը դիմեմ և մինչև ցյաւիտեան ինքզինքս քեզ կը նուիրեմ։ Ի պատկառանաց առ քեզ, խոցեալ՝ի ցաւոց մեղացս վրայ, երախտագիտութեամբ և սիրով առ ատուածային Փրկիչս, կ'իյնամ քու ոտիցդ առջև, և կը պաղատիմ որ զիս ալ բաղկացդ մէջ ընդդրկես։ Մնացեալ կենացս մէջ ինքզինքս բոլորովին քեզ կը նուիրեմ. քեզ կը զոհեմ խորհուրդներս, խօսքերս, զգացմունքներս, գործերս. կը ցանկամ որ ասկից վերջ ամենայն գործերս իրենց վրայ խաչի կնիքն ունենան։ Սակայն՝ի վերջ քան զամենայն, երկրպագելի՛ խաչ կը ցանկամ որ դուք ինքնին սրտիս մէջ

կնքուած մնաս. ոչ, բաւական չեմ համարիր զքեզ աչացս առջև գրոշմեալ տեսնել, իմ վրաս կրել. այլ սրախս մէջ կ'ուզեմ զքեզ ընդունիլ, կ'ուզեմ որ հոն թաղաւորես, որպէս զի քեզի հետ և քեզի համար Յիսուս ալ հոն թագաւորէ: Քեզմէ խաչեր չեմ խնդրեր, վասն զի կը զգամ իմ տկարութիւնս, կը ճանչնամ թշուառութիւնս. սակայն եթէ քաղցր Փրկիչս ինձի զրկելու ըլլայ, եթէ կամենայ ինձ ընկերանալ զանոնք կրելու, խոնարհութեամբ և հլութեամբ սիրով կ'ընդունիմ. երբանիկ պիտի համարիմ ինքզինքս որ իւր դառնութեանց բաժակին մասնակցեցայ: Մեղքս ես գժոխոց արժանացայ, կրնամ արդեօք տրանջալ հիմա խաչ կրելուս վրայ: Այն Աստուածը զոր ես կը պաշտեմ խաչի վրայ բարձրացած է. միթէ կրնամ ես վշտանալ եթէ իւր ոտից տակ կը կենամ: Եթէ խաչն ինձ ծանր

կ'երևայ, իր շնորհքն ինձի կ'օգնէ, զիս կը պահէ, իմ զօրավիգս և մըխիթարութիւնս է:

Ո՜վ սիրելի խաչ, կ'ուզեմ բոլոր կեանքս քեզ զոհել. կը յուսամ մահուանս միջոց զքեզ բազկացս մէջ ունենալ. յետին շունչս ի քեզ աւանդել, որպէս զի հոգիս Արարչիս ձեռքն աւանդեմ. ամէն:

ՀԱՆԱՊԱՐՀ ԽԱՉԻ

ՈՒՐԲԱԹ ՕՐՈՒԱՆ ՀԱՄԱՐ

Ա.

Յիսուս դատապարտեալ 'ի տան

Ո՛վ Յիսուս իմ, բարութիւն անբաւ, այն անիրաւ դատակնքոյն տեղ զոր իմ մեղքերս քեզ վճռեցին, ազատէ զիս 'ի յաւիտենական մահուանէ, որուն այնքան նուազ արժանացայ։

Հայր յաւիտենական, այն անդին արեան համար որ քու միածին սիրելի Որդիդ իմ փրկութեանս համար թափեց. գթա յիս այժմ և 'ի ժամու մահուան իմոյ. ամէն։

Բ.

Յիսուս բեռնաւորուած խաչով

Անմեղաբաղձ Յիսուս իմ, գու որ ուսոյդ վրայ ամենայն սիրով վերուցիր այն ծանրագոյն խաչը՝ զոր իմ մեղքերս քեզ կաղմեցին. ճանչցուր ինծի անոնց ծանրութիւնը, որոց համար խոնարհութեամբ քեզմէ թողութիւն կը խնդրեմ։

Հայր յաւիտենական, և այլն։

Գ.

Յիսուս առաջին անգամ կ'իյնայ

Յիսուս իմ սիրելի, մեզացս ծանրութիւնը զքեզ խաչիդ տակ ընկճեց. կ'ուզեմ տալ միշտ զանոնք իբրու քեզ թշնամանք. և կը զղջիմ անոնցմէ բոլորովին՝ պարզ քու սիրոյդ համար։

Հայր յաւիտենական, և այլն։

Դ

Յիսուս իւր վրատացեալ Մօրը կը հանդիպի

Վշատացեալդ Յիսուս, ցաւագին Մայր իմ Մարիամ, շնորհեցէք որ մեղացս վրայ մեծ ցաւ մը զգամ, և ցմահ լամ անոնց վրայ։

Հայր յաւիտենական, և այլն։

Ե

Կիւրենացին Յիսուսի կ'օգնէ

Ո՛վ սէր իմ Յիսուս, յոյս իմ, շնորհէ ինծի որ յօժարութեամբ կրեմ խաչէն և աշխատութիւնքը՝ միացեալ սրտիս քու վշատագ հետ, 'ի քաւութիւն մեղացս։

Հայր յաւիտենական, և այլն։

Զ

Վերոնիկա Յիսուսի քրտինքը կը սրբէ

Յիսուս իմ ամենօրհնեալ, կը խնդրեմ քեզմէ, ապաւորէ իմ սրբոյս մէջ գառնագոյն չարչարանացդ յիշատակը, որ ամենամեծ սիրով իմ սիրոյս համար ընդգրկեցիր։

Հայր յաւիտենական, և այլն։

Է

Յիսուս երկրորդ անգամ կ'իյնայ

Ո՛վ ամենասիրելի Յիսուս իմ, իմ անկումներս նորէն զքեզ յերկիր ձգեցին. դու ինքնին պարգևէ ինծի շնորհք՝ որպէս զի 'ի գործ դնեմ այն միջոցները՝ որք բաւական են ուրիշ անգամ զիս մեղաց մէջ չձգելու։

Հայր յաւիտենական, և այլն։

Ը

Յիսուս կը մխիթարէ զկանայս

Դու Յիսուս իմ, որ գուշակեցիր Երուսաղէմի անկանգնելի կործանումը, զիջո՛ ԱբգարուԹիւնդ՝ զոր գրգռեցի, և մխիԹարէ զիս քու գԹուԹեամբդ՝ որուն ասկից վերջ կ'ուզեմ համասատասխանել։

Հայր յաւիտենական, և այլն։

Թ

Յիսուս երրորդ անգամ կ'իյնայ

Յիսուս բարիդ իմ, քու կրած լկանացդ համար ըլլայ, դու որ երրորդ անգամ խաչին բեռան տակ ընկձեցար, կ'ազատեմ երբ ասկից վերջ մեզաց մէջ իյնալու ըլլամ՝ դու կանգնէ զիս փուԹանակի։

Հայր յաւիտենական, և այլն։

Ժ

Կը հանուիցին զՅիսուս և լեղի կը խմցնեն

Յիսուս իմ, դու որ 'ի զգեստուցդ մերկացար, և բերանդ լեղեաւ դառնացաւ, մերկացո՛ զիս ալ երկրային իրաց ցանկուԹենէ, և դառնացո՛ ինծի երկրային իրերն և մեղքերը։

Հայր յաւիտենական, և այլն։

ԺԱ.

Յիսուս բևեռեալ 'ի խաչի

Ողջ Յիսուս իմ, Փրկիչ իմ, քու կրած կսկծանացդ տեղ 'ի Ժամու խաչելուԹեանդ, շնորհէ՛ ինծի որ ես ալ իմ մարմնս բոլոր ելք ախտերուն 'ի խաչ հանեմ։

Հայր յաւիտենական, և այլն։

ԺԲ

Յիսուս մեռեալ 'ի խաչի

Դու Յիսուս իմ, որ խաչին վրայ բարձրանալովդ՝ անոր վրայ ալ մեռար, ինչպիսի՛ զարմանք ինծի պատճառեցիր. բարձրացո՛ զիս սուրբ առաքինութեանց կրթութեամբ, և մեռած ըլլամ ամէն աշխարհային իրաց մէջ։

Հայր յաւիտենական, և այլն։

ԺԳ

Յիսուս իւր վշտագնեալ Մօրը գիրկը

Ո՛վ Մարիամ, դու որ զմեռեալն Յիսուս գրկացդ մէջ ընդունեցար, շնորհէ ինձ որ երբ այն սրբագործեալ Յիսուսն իմ սիրտս դայ՝ միշտ կարենամ սրբութեամբ զինքն ընդունիլ։ Տայս իմ յետ Յիսուսի, քեզ կը վստահիմ։

ԺԴ

Յիսուս եդեալ 'ի գերեզմանի

Յիսուս իմ, միակ կեանք իմ, կ'ուզեմ երբ մեռեալ միշտ ընդ քեզ լինիլ. և եթէ ապրիմ՝ 'ի քեզ կ'ուզեմ ապրիլ, և ապա դալ առ քեզ և վայելել յերկինս ամենասուրբ չարչարանացդ արդիւնքն։

Հայր յաւիտենական, և այլն։

ԱՂՕԹՔ

Առ ամենասուրբ Կոյսն

Ամենասուրբ Մարիամ, Կոյս անարատ և զարմանալի, Մայր Աստուծոյ, ահաւասիկ ես ծուներ խոնարհեալ քու ոտիցդ առջև՝ ինքզինքս բոլորովին քեզ կ'ընծայեմ և քեզ կը պատարագեմ մինչև ցյաւիտեան։ Աւելց վերջ դու իմ

սիրելի Մայրս պիտի ըլլաս. Աստուծմէ վերջ յոյս ամբողջ քու վրադ դրած եմ. քու որդւոյդ մէջ իբրև յեսենն իմ վրաս նայէ, և ես քու ծառայիցդ մէջ ամենէն խոնարհը պիտի ըլլամ, և պիտի ջանամ ամենայն կերպով՝ որ զքեզ ամենուն սիրելի ընեմ։ Սիրեցեալ Մայր, ընդունէ՛ ինձի համար շընորհք որ կարենամ ուղղել իմ պակասութիւնքս, սիրաս յաշխարհային յիրաց բոլորովին անջատեմ և ամբողջովին Աստուծոյս ըլլամ։ Ո՛վ ամենասուրբ Կոյս, տուր ինձի շնորհք որ կարենամ արիաբար առաքինի մէջ անձիս յաղթանակել, և քու յատուկ օգնականութեամբդ սրբութեամբ ապրիմ, և պատրաստուիմ Սրբոց մահն ունենալու։ Ո՛վ ամենասիրելի Մայր, ընդունէ՛ ինձի համար աստուածային սէրը և զսուրբ յարատեւութիւն։ Ո՛վ Յիսուս, ո՛վ Մարիամ, դուք էք և դուք պիտի ըլլաք միշտ իմ ազնուա-

գոյն սիրոյս առիթքն։ Յիսուս և Մարիամ, յոյս իմ, առաջնորդ զօրավիգն իմ, օգնեցէք ինձի և սրբացուցէք զիս. ամէն։

Նուիրումն արտի առ Մարիամ

Ամենասուրբ Կոյս, Մայր Աստուծոյ Մարիամ, ես Ա. Ա. թէ և ամենամեծ մեղաւոր, սակայն քու ոտքդ իյնալով՝ Աստուծոյ և համայն երկնից առջև քեզ կը մատուցանեմ այս իմ սիրաս իբր ամէն զգացմամբ. քեզ կը նուիրեմ և կ'ընծայեմ, և կը ցանկամ բոլոր կենացս մէջ զայն քեզ նուիրել և ընծայել և կ'ուզեմ որ միշտ քուկդ և քու սիրելի Յիսուսիդ ըլլայ։ Ընդունէ, ո՛վ ամենօրհնեալ Մայր, քու աղքատ ծառայէդ՝ սրտանց ըրած ջերմեռանդն նուէրը, միացեալ համայն սրբոց սրտին հետ. և շնորհէ՛ ինձի որ այսօրուընէս

սկսեալ մինչև կենացս վերջին շունչը միայն քեզ և քու ամենասուրբ Որդւոյդ և իմ Աստուծոյս Յիսուսին համար ապրիմ։ Քու աստուածային օգնութեամբդ և սիրալիր ներկայութեամբդ կը յուսամ կատարել զայն, և իմ կողմանէս կը խոստանամ։ Ձեր կրկին Սրտերուն մէջ Յիսուս և Մարիամ, իմ սիրասալ գրէք, որպէս զի ձեր ամենամաքուր սիրով բորբոքի, և ձեր ետանդուն հրով ապրեցուի այս աշխարհիս վրայ, բորբոքի ապա գարձեալ ձեր յաւիտենական սիրով հոն երկնից Արքայութեան մէջ Հրեշտակաց և Սրբոց հետ. ամէն։

ԱՊԱՒԻՆՈՒԹԻՒՆ

Առ Սուրբ Կոյսն

Ո՛վ Մարիամ Մայր շնորհաց, Մայր գթութեան և ամենագթած փաստաբան մեր. դու որ զմեզ ապերախտ և թշուառ մեղաւորքս այնքան կը սիրես, և այնքան գըթած ես՝ մինչև ամենէն աւելի թըշուառաց իսկ՝ որք առ քեզ քիչ մը սէր ունենան, ամենեին քու օգնութենէդ չես զրկեր իրենց պիտոյից մէջ, սիրեցեալ Մայր, ողորմէ և գթա դեռ մեր վրայ. ընդունէ մեզի համար շնորհք՝ի մեզաց փախչելու և քրիստոնէական առաքինութիւնքն կատարելու. մանաւանդ այսօր՝ որ խոնարհաբար զըզջալով կ'ըսեն լի վստահութեամբ՝ի բոլոր սրտէ Հայր մեր, Ողջոյն։

Դարձեալ առ Ս. Կոյսն

Ով Մարիամ, Թագուհի հրեշտակաց և մարդկան, Աստուծմէ վերջ դու ես մեր միակ յոյսը. կ'ողջունենք զքեզ և կը փառաւորենք ըսելով. Ով Մարիամ, ով կեանք քաղցրութիւն և յոյս մեր, մենք միշտ առ քեզ կ'ապաւինինք: Մի արհամարհեր մեր այսքան խոնարհ խնդրուածքն, և ընդունէ մեզի համար ամբողջական անջատում մը մեր անձէն և աշխարհիս իրերէն. մեծ սէր մը առ Աստուած և սուրբ յարատեւութիւն: Մայր սիրելի, շնորհէ մեզի դարձեալ այն յատուկ շնորհքներն որ մեզ կարիւոր են, և զոր մենք այնքան վրատահութեամբ և յարգանօք քեզմէ կը խնդրենք, ըսելով Հայր մեր. Ողջոյն. Փառք Հօր:

Առ ամենասուրբ Սիրոն Մարիամ

Աստուած օրհնէ զքեզ, ով ամենասուրբ Սիրա Մարիամս, սկսեալ յանարատ յղութենէ. քու անպատմելի մաքրութեանդ արդեանց համար մաքրէ այս սիրտս: Ողջոյն քեզ:

Աստուած օրհնէ զքեզ, ով ամենախոնարհ Սիրա Մարիամս, յաւերման Գաբրիելի Հրեշտակապետի. քու ամենախորին խոնարհութեանդ արդեանց համար՝ խոնարհ սիրա մ'ընդունէ ինձի, որպէս զի ես ալ ընտրեալ որդւոյդ թուոյն մէջ անցնիմ: Ողջոյն քեզ:

Աստուած օրհնէ զքեզ, ով Սիրա Մարիամս, եռանդուն և ամենաջերմեռանդն Միածին Որդւոյդ ծննդեան միջոց. քու եռական ջերմեռանդութեանդ, և միշտ դեռ ա-

ուելի Աստուծոյ հետ միացեալ մնալու եռանդուն փափագանացդ արդեանց համար, անչատէ իմ սիրոս յամենայն երկրաւոր ցանկութեանց, և միայն Աստուծոյ հետ միացո։ Ողջոյն քեզ։

Աստուած օրհնէ զքեզ, ով Սիրա Մարիամու, սիրալից միշտ առ Աստուած և առ ընկերս. քու եռանդագին սիրոյդ արդեանց համար, իմ սիրոս միշտ աւելի սիրով բորբոքի առ Աստուած և առ ընկերս։ Ողջոյն քեզ։

Աստուած օրհնէ զքեզ, ով Ջանասէր Սիրա Մարիամու, գանձարան աստուածային բանից. քու եռանդուն ջանասիրութեանդ արդեանց համար, ես ալ աւելի ևս ջանասէր ըլլամ աստուածային ծառայութեանս և սուրբ ներշնչմանց մէջ։ Ողջոյն քեզ։

Աստուած օրհնէ զքեզ, ով Սիրա Մարիամու, համբերատար Որդւոյդ դառն չարչարանաց մէջոց.

քու ցաւագին վշտացդ արդեանց համար, հեզ՝ի սրտիս քու և Միածին Որդւոյդ Յիսուսի վիշտերն։ Ողջոյն քեզ։

Աստուած օրհնէ զքեզ, ով Սիրա Մարիամու, հաւատարմագոյն առ Աստուած և առ մարդիկ. քու ծայրագոյն հաւատարմութեանդ արդեանց համար, պարգևէ որ ամենայն աշխատութեանցս և դրծոցս մէջ միշտ համակամիմ Յիսուսիս քաղցր Սրտին հետ։ Ողջոյն քեզ։

Աստուած օրհնէ զքեզ, ով Սիրա Մարիամու, երգաշնաս օգնական մարդկանց փրկութեան. քու առ մեր սրտերն ունեցած մայրական գործունէութեանդ արդեանց համար, ընդունէ ինձի շնորհք, որպէս զի ամենայն կերպով ջանամ և աշխատիմ թէ զիս փրկելու և թէ այլոց փրկութեան նպաստելու։ Ողջոյն քեզ։

Աստուած օրհնէ զքեզ, ով կու-

սական և ամենասուրբ Սիրտ Մարիամու, ընկղմեալ միշտ երկնային խորհրդոց մէջ. քու այս եռանդագին աղօթիցդ արդեանց համար, ընդունէ՛ վասն իմ սէր ասասուածային և սուրբ յարատեւութիւն։ Ողջոյն քեզ. փառք Հօր։

Առ աւանդաւորիս Կոյսն Սրբուհիսն այցելուհիւն ընելի եւսն.

Ո՛վ Մարիամ, քաղցր ապաւէն մեղաւորաց, դարձեալ առ քեզ կը դիմեմ և խորին յարգութեամբ ղքեզ կը մեծարեմ։ Ամենասիրելի Մայր իմ, բոլորով սրտիս շնորհակալ եմ քեզ. մինչև այսօր ինծի ըրած շնորհացդ համար. և լի վստահութեամբ կը պաղատիմ առ քեզ խոնարհաբար՝ որ ես Մայր Աստուծոյ, Թագուհի երկնից և յոյսդ իմ, մի դադրիր ինծի օգնելէ և վասն գթալէ։ Կը սիրեմ ղքեզ,

ամենասիրելի Մայրդ իմ, և ղքեզ սիրելուս համար կ՚առաջադրեմ միշտ ծառայել քեզի, և ամէն ձեռքէս եկածն ընել՝ որպէս զի ուրիշներն ալ ղքեզ սիրեն։ Ընդունէ՛ զիս իբրև քու ծառադ, և պահպանէ՛ զիս թեւոցդ տակ և փրկէ։ Քեզմէ մեծ սէր կը խնդրեմ առ Յիսուս միածին Որդիդ և զսուրբ յարատեւութիւն։ Ո՛վ Մայր գթութեան և միջնորդ Աստուծոյ և մարդկանց, սրբացո՛ւր զիս և բոլորովին քու կրկդ ըրէ. ամէն։

Դեռ Եկեղեցիէն չելած՝ ըսէ երեք անգամ.

Սուրբ Հրեշտակք և ամենայն Սուրբք Երկնից, գովեցէք, սիրեցէք, շնորհակալ եղէք և աղօթեցէք Աստուծոյ ինծի համար։ Յաւնուն Հօր, և այլն։

Աբ Սուրբն Յովսէփ

Ո՛վ հրեշտակ երկրի և իմ փառաւորեալ անուանի պաշտպանս Ս. Յովսէփ, կը ցնծամ քեզ հետ և կը խնդամ քու ունեցած երկնային առանձնաշնորհութեանցդ վրայ՝ որոնցմով Աստուած զքեզ պայծառացուց քան զայլ ամենայն մարդիկ. վասն զի զքեզ ընտրեց հայրապիր իւր Յիսուսին և ամենամաքուրի փեսայ Մարիամու։ Ամենասուրբ Աստուածահայր, աղէ ցոյց ինձ երկինքն ունեցած, այն մեծ զօրութիւնդ և պաշտպանէ զիս աշխարհիս հրապուրանքներէն, 'ի փորձութեանց մարմնոյ և 'ի դաւանաց սատանայի. և ընդունէ ինծի համար շնորհք յաղթել անձիս և թշնամեացս, որպէս զի միայն յաստուած ապրիմ, այս աղեխց ճորոյն մէջ միշտ սիրելով զինքն՝

որպէս զի և յետոյ վայելեմ 'ի յաւիտեան յերկինս։ Հայր մեր. Ողջոյն և. Փառք Հօր։

Աղաղորդ առ նոյն Ս. Յովսէփ

Ամենասուրբ Աստուածահայր երջանիկ փեսայ Կուսին Մարիամու Մօրն Աստուծոյ, փառաւորեալդ Ս. Յովսէփ, կը խնդամ ընդ քեզ և կը ցնծամ որ երկրիս վրայ ալ քու այսքան ջերմեռանդներդ կը փառաւորուին։ Նմանելով այն երջանիկ հոգւոց, ես ալ կ'ընտրեմ զքեզ իմ տէրս և փաստաբան, և կ'առաջադրեմ հաստատապէս հաւատարիմ մնալ քեզ մինչև ցշունչ իմ յետին։ Ուրեմն սիրով և վստահութեամբ ինքզինքս բոլորովին քեզ կը յանձնեմ, և քու ամենազօրաւոր պաշտպանութեանդ ներքև կը ձգեմ կենացս ամէն վայր.

կեանքերն։ Ս. Աստուածածնայր, աղէ շնորհէ ինձ որ հոգեվարքիս վերջին վայրկեանները, հոգւոյս ամենէն վտանգաւոր ժամանակ, քու ներկայութեանդ սքանչելի արդեանց զօրութիւնն զգամ և ինչպէս գոչ, նոյնպէս և ես երջանկութեամբ աւանդեմ հոգիս Յիսուսի և Մարիամու բազկաց մէջ, կարդալով Ջերմեռանդն՝ Յիսուս, Մարիամ և Հայր Յովսէփ, սիրաս ու հոգիս ձեզ կ'աւանդեմ, ամէն։ Հայր մեր. Ողջոյն և փառք Հօր։

Առ Ս. Աղոիս

Ո՛վ ամենաքաղցր Ս. Աղոիս, դու որ այնքան վեհանձնութեամբ աշխարհէս բաղարդուին հրաժարեցար, մինչև իսկ յիշանուութենէ՝ որպէս զի աղքատ կրօնաւոր մը ըլլաս. այն առ Յիսուս ունեցած դեղաղանց սիրոյդ համար որով կը

բորբոքիր և կը տոչորիր և յարատասուս կը լուծանիր, աղէ ընդունէ և վան իմ աշխարհիս ամէն ցանկութիւններէն հրաժարելու շնորհքն, և բորբոքելու իմ սառուցեալ սիրտս աղ. որպէս զի միայն Աստուծոյս ըլլայ, և տոչորի ուռանդեամբ առ ամենասուրբը խորհուրդն Հաղորդութեան։

Այլ աղօթք առ Ս. Աղոիս

Ո՛վ սուրբ Աղոիս, զարդարեալ հրեշտակային վարուք, ես քու անարժան Ջերմեռանդդ՝ քեզ կը յանձնեմ 'ի մանաւորի հոգւոյս և մարմնոյս սրբութիւն։ Կը պաղատիմ առ քեզ քու հրեշտակային մաքրութեանդ համար՝ որ զիս անարատ Գառն Յիսուսի Քրիստոսի և իւր ամենասուրբ Մօրն Կուսանաց Կուսին յանձնես, ու չի թողուս երբեք որ ծանր մե-

ղոց մէջ կ'նամ։ Մի թողուր զնս ով Ս. Աղջոս, այլ մանաւանդ երբ տեսնաս որ փորձութեանց և մեղանչելու վտանգի մէջ եմ, պիտի և անսուրբ խորհուրդքն և ցանկութիւնքն հեռացուր 'ի սրտէս. և զարթուցանելով 'ի յիս յաւիտենականութեան և խաչելեալն Յիսուսի յիշատակքն՝ կնքէ սրտիս մէջ խորին ատաուածային երկիւղ մը, որպէս զի բորբոքելով սիրովն Աստուծոյ, աշխարհիս վրայ քեզ նմանիմ, և արժանանամ քեզ հետ մեկտեղ երկնից արքայութեան մէջ զԱստուած վայելելու։ Հայր մեր. Ողջոյն. Փառք Հօր։

Առ Ս. Ֆիլոմենա

Ո՛վ փառաւորեալ կոյս և անուանի մարտիրոս Ս. Ֆիլոմենա, դու որ անպաղթելի հանդարտամտութեամբ զձաղիմս յանձն առիր, և վիրօք և արեամբ ծածկուեցար, մարմնդ բոլորովին նիզակօք խոցեցաւ և հուսկ ուրեմն գլխատեցար. ընդունէ մեզ թշուառ մեղաւորացս համար այս մահացու կենացս ընթացից մէջ զօրութեան շնորհքն, որով կարենանք յաղթել չար գործոց, բնութեան ընդդիմութեանց, և յարատեւենք մինչև ցմահ՝ ատաուածային պատուիրանաց ճշգիւ պահպանութեան և Ս. Եկեղեցւոյ պատուիրանաց մէջ։

Ո՛վ ամենասիրելի Ս. Ֆիլոմենա, լսէ մեր աղօթից և գթա՛ 'ի մեզ։ Հայր մեր. Ողջոյն և Փառք Հօր։

Առ Պաշտպան Սուրբն

Ս.

Ամենասիրելի Սուրբդ Ս. Ս. ահաւասիկ ոտիցդ առջև խոնարհած՝ կը պաղատիմ 'ի բոլոր սրտէ պարգևել ինծի-ոյն շնորհքն որ զԱս-

տուած բնաւ չի վչասցընեմ։ Սի-
րելի սուրբ Փասաբանդ իմ, յիշէ
զիս ամենասուրբ Երրորդութեան
գահոյիցն առջև, և իւր անհուն բա-
րութենէն ընդունէ ինծի համար
խոնարհութեան, սրբութեան, հը-
նազանդութեան առաքինութիւն-
քըն և շնորհք, որպէս զի կարե-
նամ ճշգիւ պահել վիճակիս պարա-
քերն։ Հայր մեր. Ողջոյն և փառք
հօր։

Բ

Սուրբդ իմ սիրելի, քու միջնոր-
դութեամբդ կը նորոգեմ իմ շատ
անգամ առ Աստուած ըրած բա-
րի առաջադրութիւնքս, զինքն սի-
րելու և իրեն հաւատարմաբար
ծառայելու։ Կ'առաջադրեմ անջա-
տել զիս ամէն երկրաւոր իրերէ,
և կը փափագիմ եռանդեամբ միա-
նալ իրեն հետ իբրև իմ սկիզբս,

վերջս և անհուն բարիս։ Սուրբդ
իմ սիրելի, զիս բովանդակ իբր ող-
ջակէզ մատո ամենասուրբ Երրոր-
դութեան, մանաւանդ միաքս և
կամքս, որպէս զի լիովին իւր սուրբ
կամաց համակամիմ։ վասն զի ու-
րիշ բանի չեմ բաղձար՝ բայց միայն
իւր շնորհաց և իւր սուրբ սիրոյն։
Հայր մեր. Ողջոյն և փառք հօր։

Գ

Ամենաքաղցր Պաշտպան Սուրբդ
իմ, ահաւասիկ դարձեալ լի սիրով
և վստահութեամբ կը պաղատիմ
առ քեզ, որ ծունր խոնարհելով
ամենասուրբ Երրորդութեան գա-
հոյիցն առջև, պաղատիս եռանդա-
գին որ իւր անբաւ բարութեամբ
տայ ինծի շնորհք յարատևութեան
և 'ի մեզաց փախչելու։ Սուրբդ
իմ սիրելի, դու ինքնին գիտես թէ
մարդս ինչպիսի մեծամեծ փորձու-

թեանց ենթակայ է, և շարունակ կորստեանս վտանգներն անպակաս են. դու օգնէ ինձի քու զօրաւոր աղօթիւքդ. ամէն։ Հայր մեր. Ողջոյն. փառք Հօր։

Պաղատանք առ Պահապան Հրեշտակն

Հրեշտակդ իմ պահապան, Աստուածած որ իւր անհուն բարութեամբ զիս քեզ յանձնած է, պահպանէ զիս լուսաւորէ և պահէ յամենայն մեղաց։ Կը նորոգեմ այսօր քու առջևդ դարձեալ իմ ջերմեռանդութիւնքս, և դու մի դադարիր զիս պահպանելէ և կառավարելէ, և ինձի առաջնորդելէ։ Դու իմ ապահով առաջնորդս ես. կը վստահանամ 'ի քեզ, և դու զիս Աստուծոյ յանձնէ, որպէս զի պարգևէ ինձի իւր սէրը և զսուրբ յարաբերութիւն։

ՀԱՅԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՅԱՆԿ

Պարտք Քրիստոնէի 'ի զարթնուլն յառաւօտու

Հառաչանք առ Յիսուս 9
Աղօթք առաւօտեան 14
Շնորհակալութիւն և նուիրումն սրտի 15
Խնդրուածք 17
Ուղիղ դիտաւորութիւն 18
Աղաչանք 19
Ապաւինութիւն 'ի Սիրոն Յիսուսի . —
Առ ամենասուրբ Կոյսն 21
Առ պահապան Հրեշտակն . . . 22
Ի խնդրել զօրհնութիւն ատուածային 23

Աղօթք երեկոյեան

Յառաջ քան զերթալն յանկողին . 25
Խնդրուածք լուսոյ 27
Գիտութիւն 29
Յաւ . . . . . —
Առաջադրութիւն 31
Աղօթք 34
Առ ամենասուրբ Կոյսն 37
Առ Ս. Հրեշտակն և առ վասուա-
ծան Սուրբս . . . . . —
Կրթութիւն Սրբոյ Պատարագի . 39

Աղօթք Սրբոյ Պատարագի

Սրբոյ Պատարագի ներկայ ելլալու
ընտրելագոյն կերպը . . . 40
Ի սկզբան Պատարագի 41
Երբ Քահանայն կ'ելլայ 'ի խորանն . 42
Երբ Քահանայն զժամանուտ կը
սկսի 43

Աւետարանէն մինչև Եւ ընդ Սերով-
բէս 44
Եւ ընդ Սերովբէսէն մինչև 'ի Սուրբ
'ի Սուրբ 46
Ի Սուրբ 'ի Սուրբէն վերջը . . . 47
Ճաշակման միջոց 49
Ճաշակմանէն սկսեալ մինչև Պա-
տարագին վերջը 51
Աղօթք շնորհակալութեան . . . 53

Այլ կերպ աղօթից վասն Պատարագի

Պատարագի սկիզբէն մինչև Աւե-
տարան 54
Աւետարանէն մինչև Առէք կերէք . 59
Առէք կերէքէն մինչև ցճաշակումն . 64
Ճաշակմանէն մինչև Պատարագի
լմնանալն 70
Կրթութիւն խոստովանութեան . 75
Գիտութիւն 76

Աղօթք խոստովանութեան

Հաւատք ներկայութեան Աստուծոյ 78
Խնդրուածք լուսոյ 79
Յաւ 81
Ներգործութիւն զղջման . . . 82
Ներգործութիւն յուսոյ . . . 88
Առաջադրութիւն 90
Աղօթք 91
Խոստովանութիւն 92
Աղօթք 93
Աղէ 94
Շնորհակալութիւն . . . . . —
Աղօթք 95
Այլ աղօթք . . . . . —

Ուրիշ դիւրագոյն կերպ խոստովանութեան

Աղօթք պատրաստութեան 100
Քննութիւն 104
Յաւ 105
Խոստովանութիւն 110
Խոստովանանքէն վերջ 111
Աղօթք Ս. Լիկուորեայ 113

Կրթութիւն Ս. Հաղորդութեան

Խնդրուածք 115
Խոնարհութիւն և ցաւ . . . . . —
Եռանդուն փափագ 117
Վստահութիւն 118
Սէր և նուիրում 120
Աւ ամենասուրբ Կոյսն 121

Գոհութիւն զկնի Հաղորդութեան

Փափաք 123
Խղճք 124
Պաշտամունք և դովասանք . . . —
Խղճք 126
Աղօթք 130
Նուիրումն 131
Խնդրէ աստուածային օրհնութիւնը . . . . . —
Աղօթք առ ամենասուրբ Կ. Մարիամ 133
Աղօթք առաջի խաչելութեան . . 134

Աղօթք ըստ աւուրց եօթներկի

Կիրակի 136
Երկուշաբաթի 138
Երեքշաբաթի 140

Չորեքշաբաթի 141
Հինգշաբաթի 143
Ուրբաթ 145
Շաբաթ 147

Ջերմեռանդութիւն առ Ս. Սիրոն Յիսուսի

Խորհրդածութիւնք 150
Խոստմունք Յիսուսի առ Ս. Մարիամ Մարգարիտա . . . 153
Ողջոյն Սրտին Յիսուսի 156
Խոստովանութիւն առ Ս. Սիրոն Յիսուսի 158
Աղաւնութիւն առ Ս. Սիրոն Յիսուսի 161
Վստահութիւն 162
Տենչք և աղօթք 163
Յաւ և առաջադրութիւն . . . 165
Միութիւն ընդ Ս. Սրտին Յիսուսի 166
Նուիրումն առ Ս. Սիրոն Յիսուսի . 168

Նուէր Սրտին Յիսուսի 170
Աղօթք առ Ս։ Սիրտն Յիսուսի . 171
Առ Սիրտն Յիսուսի 172
Նուէր սրտի առ Փրկիչն Յիսուս . —
Ներդործութիւն պաշտաման և նուիրման առ ամենասուրբ Սիրտն Յիսուսի 176
Պաշտօն առ ամենասուրբ Սիրտն Յիսուսի 'ի Ս. Հաղորդութեան . 178
Հառաչանք և աղօթք 182
Հառաչանք և աղօթք 184
Ներդործութիւն նուիրման առ երկրպագելի Սիրտն Յիսուսի . 185
Այցելութիւն ամենասուրբ Սրտին Յիսուսի առաջի Հաղորդութեան 187
Սուրբ յարատևութիւն և բարի մահ ընդունելու համար . . 189
Վարդապան 'ի պատիւ Սրտին Յիսուսի 198
Պաղատանք առ Ս. Սիրտն Յիսուսի 200

Կոչումն ամենասուրբ Սրտին Յիսուսի հիւանդի մը բժշկութեան համար 204
Աղօթք 207
Աղօթք 208

Հոգեվարաց համար

Աղօթք առ ամենասուրբ Սիրտ Յիսուսի 210

Վասն Հոգւոց Քաւարանի

Առ Ս. Սիրտն Յիսուսի . . . 217
Աղօթք 220
Պաղատանք առ Կոյս Մարիամ . 222
Ներդործութիւն նուիրման ամենասուրբ Սրտին Յիսուսի . . —

Զանազան պաղատանք առ Ս. Սիրոն Յիսուսի

Ընտանեաց հօր մը համար . . . 223
Ներգործութիւն նուիրման առ ա-
մենասուրբ Սիրտ Յիսուսի Ն-
ըրնծայից համար 226
Վչտացեալ սիրտ մը որ Յիսուսի
Ս. Սրտին մէջ քաջալերը կը
փնտռէ 229
Ապաւինութիւն ի վիշտս առ Ս.
Սիրոն Յիսուսի 231
Պաղատանք առ Ս. Սիրոն Յիսուսի
իւր օգնութիւնն խնդրելու հա-
մար յատուկ պիտոյից մէջ . 232
Պաղատանք առ Ս. Սիրոն Յիսու-
սի մեղաւորի մը դարձին հա-
մար 233
Խեղճ մեղաւորաց համար . . . 235
Նոր սիրտ մը խնդրելու համար . 236
Հեզութիւն ստանալը համար . . 238

Մաքրութիւն ստանալու համար . 240
Խոնարհութիւն ստանալու համար . 242

Աղօթք Խաչի

Առ Ս. Խաչն 244
Նուիրումն առ Ս. Խաչն Քրիստոսի . 247
Ճանապարհ Խաչի 249
Աղօթք առ ամենասուրբ Կոյսն . 257
Նուիրումն սրտի առ Մարիամ. . 259
Ապաւինութիւն առ Ս. Կոյսն . . 261
Դարձեալ առ Ս. Կոյսն . . . 262
Առ ամենասուրբ Սիրոն Մարիա-
մու 263
Առ ամենասուրբ Կոյսն, Սրբու-
թեան պայծառութիւն ընելէ ե-
տեւ 266
Առ Ս. Յովսեփ 268
Այլ աղօթք առ նոյն Ս. Յովսեփ . 269
Առ Ս. Ալոզիոս 270
Այլ աղօթք առ Ս. Ալոզիոս . . 271

Առ Ս. Ֆիլոմէնա 272
Առ Պաշտպան Սուրբն 273
Պաղատանք առ Պահապան Հրեշ-
տակն 276

504
Ամ.
6
0015155
2013
2001.